

**ՎԱՀԱՆ ԲԱՅՐՈՒԹՅԱՆ**

**ԵՈՐ ԶՈՒՂԱ**

**ԵՐԵՎԱՆ 2007**



ԱՐՄԵՆԻԱՆ ԱԿԱДЕՄԻԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ  
ՏՐԱՎԵՐՏԻՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐԱՆ ԲԱՅՐՈՒԹԻԵԱՆ

ՆՈՐ ԶՈՒՐԱ



ՄԵԿԵՆԱՍՍՈՒԹՅԱՆ ՊՐԵՄԻԱՄ ԶԵՐՄԵԶՑԱՄ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ԱՄՆ)

Անուրոջ Մ. Աշխարհ  
Մատենաց



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES

ԴՏԴ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (27)

Բ 260

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելյան գիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ Նիկոլայ Շովիաննիսյան  
Պատմ. գիտ. դրվագ, պրոֆեսոր

Բայրուրդյան Վահան

Բ 260 Նոր Զույա.- Եր.: ՀՀ ԳԱԱ ՊԻ հրատ., 2007.- 154 էջ:

Դամրամատչելի ծևով և համառոտակի ներկայացվում է սփյուռքի ամենահնագույն և ամենաացքի ընկերությունը, նրա հիմնադրման օրվանից մինչև նոր ժամանակները։ Դամրակրդյանմանի կերպով բացահայտվում է նրա դերը և առաջելությունը հայության կյանքում՝ որպես մշակույրի, կրթության, գիտության, տնտեսական գործունության և հասարակական մտքի ամենամշանավոր կենտրոններից մեջից։ Ցույց է տրվում, որ իր գոյության չորս հարյուր տարիների ընթացքում Նոր Զույան առևտասարակ իր անջնջելի հետքը է բռնել հայ ժողովողի պատմական կյանքի զարգացման ողջ ընթացքի, այդ թվում նաև նրա քաղաքական ինքնագիտակցության հասունացման և վերելքի վեա։ Մասմավորապես XVII դարում բռն Դայաստանում տիրապետող համատարած ավերի, տնտեսական քայլաճան, մտավոր աշքատացման պայմաններում Նոր Զույան դարձել էր տնտեսական ծաղկման և հոգևոր-մշակութային վերածնության մի կողմակը։

Նախատեսված է նաև ազետների, ուսանողության և ընթերցող լայն շրջանների համար։

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

VAHAN BAIBURTIAN

NEW JULFA  
(NOR JUGHA)

THIS PUBLICATION WAS MADE POSSIBLE BY  
"ARMEN AND BERSABE JEREJIAN FOUNDATION" Inc.(USA)

YEREVAN 2007



Նվիրվում է Նոր Ջուլֆայի հիմնադրման 400-ամյակին:  
The book is devoted to the 400 Anniversary of Establishment  
of New Julfa

ՄՈՒՏՏԻՔ ԽՈՒԹ

Ուշ միջնադարում Ղայաստանի գույզ հասուլածներում շարունակվում էր հայկական ավատականության վերջին շառավիղների նկատմամբ հալածանքների ու ֆիզիկական բնացնօճան վաղեմի քաղաքականությունը։ Նրանց հողերը անցել էին բուրքական քոչվորական ու կիսաքոչվորական ցնդերի վերնախավի ծեղքը։ Հայ աշխարհիկ ավատատերերը, որպես քաղաքական ուժ, դուրս էին մղված պատճական ասպարեզից։ Նման պայմաններում շարժուն կապիտալը դառնում էր հայ ավատական դասի կենսագործունեության ամենատարածուն բնագավառը։ Դիրավի, արևելքի քոնատիրության պայմաններում առևտությ միակն էր, որ բաց էր մնում հայի առջև։ «Զրկվելով իրենց քաղաքներից ու գյուղերից, հողերից ու երիվարներից, ճորտերից ու հարկատուններից՝ հայ ավատատերերից շատերը գաղթեցին երկրից, ծովավեցին եկվոր նվաճողների մեջ կամ ոչնչացան իսպառ։ Նրանց մի մասը առևտրական գրադմունքների մեջ որոնց անձնական ապահովության ու քարենքնեցության նրաշխիքը։ Կային, վերջապես, այնպիսիները, որոնց ասպետական գրահն ու սուրբ փոխվեցին եկեղեցական վիլոնի ու բուրգառի հետ»,- գրում է Աշոտ Ղովհաննիսյանը։

Սակայն Լանկ-Թեմուրի ավերիչ արշավանքները, իլիանների պետության տրոհումից հետո քաջարիկ մանր ավատական խմբավորումների միջև քօնկած արյունոտ պայքարը, ամենուրեք ծայր առած կամայականություններն ու քօնությունները, առևտրական ճանապարհների անապահովությունը և այլն հա-

մարյա խսպառ դադարեցրին քարավանային շարժումը Պայտա-  
տամի վրայով:

Մյուս կողմից XV դարում Փոքր Ասիայում, Բալկաններում և  
Հյուսիսային Աֆրիկայում օսմանյան նվաճումները և հատկա-  
պիս 1453 թ. Կ. Պոլսի գրավումն ու բյուզանդական կայսրութ-  
յան վերջնական անկումը ունեցավ այն հետևամբը. որ  
արևամտյան աշխարհը գրկվեց Արևելքի հետ շփումներ ունենալու  
հնարավորությունից:

Սակայն Արևելքի ու Արևմուտքի միջև այդ հակաբնական  
խգումը չէր կարող տևական բնույթ կրել: Վերընթաց զարգաց-  
ման ուղի բռնած Արևմուտքը կենսականորեն զգում էր Արևելքի  
հետ առևտրատնտեսական կապեր ունենալու պահանջը:

Այս պարագաներում Արևելքի և Արևմուտքի միջև միջնորդ  
վաճառականների հանդես գալը դառնում էր կենսական ամիրա-  
թեշտություն: XVI դարում այդ դերը նշանակալից չափով իր  
վրա վերցրեց հայ առևտրական խոջայական դասը. որի համար  
վերստին առևտրական լայն գործումնություն ծավալելու հնա-  
րավորություն էր ստեղծվում: Այս նոր պայմաններում նրանց  
անսպասելի մուտքը համաշխարհային շուկա զարնացրել է ժա-  
մանակակիցներին: Արտահայտնությունը այդ տրամադրությունները,  
զերծանացի փիլիսոփա Կանտը գրել է. «Մեկ այլ քրիստոնյա  
ժողովրդի հայերի մոտ տիրապետում է ինչ-որ առանձնահա-  
տուկ բնույթի առևտրական ոգի՝ նրանք գրադվում են փոխանա-  
կությամբ, հետիւնուն ճանապարհորդելով Զինաստանի սահման-  
ներից մինչև Գվինեական ափի Կորսոս հրվանդանը: Դա վկայում  
է այդ խելամիտ ու աշխատասեր ժողովրդի առանձնահատուկ  
ժագան նաևն, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմուտքի  
ուղղությամբ կտրում անցնում է համարյա ուղ իին աշխարհը և  
կարողանում է սիրալիր ընդունելություն գտնել այն բոլոր ժողո-  
վուրդների կողմից, որոնց մոտ լինում է այցելությամբ»:

Սակայն Պայտաստանի տարածքում ընթացող համարյա  
ամընդմեջ բուրք-իրանական պատերազմները և դրանց հե-

տևանքով ստեղծված քաղաքական անկայունությունն ու հեղինակությունը վերընթաց գարզացում ասցող հայ առևտուրական կասմիտայի համար մշտապես ստեղծում էր սպառնալից վիճակ: Ես այն չուշացավ:

XVII դարը հայ ժողովրդի համար սկսվեց մեծագույն ողբերգությամբ: Իրանական շահ Աքրաս Ա-ն Արևելյան Շայաստանից, մասսամբ նաև Արևամտյան Շայաստանի մի շարք երկրանասերից, ավելի քան չորս հարյուր հազար հայերի թռնի տարագրեց Իրան, ամբողջովին հայաթափ անելով Շայաստանի արևելյան հատվածը: Այդ իրադարձությունը, որը պատմության մեջ մտել է «մեծ սուրգուն» ամունով, իր բափով ու ընդգրկման ծավալով աննախադեպ մի թռնագաղթ էր, որն իր անջնջելի դրոշը թողեց հայ ժողովրդի ողջ հետագա պատմական ճակատագրի վրա: Շայության բնօրրանի կատարյալ նարդաթափ լինելն ու ամայացումը, Շայաստանի գույց հատվածներում թուրք-իրանական համարյա անցնդնդ պատերազմները, քոչվորական ցեղերի երջկական նվաճողականությունը և նրանց զանգվածային մուտքն ու հաստատումը հայկական տարածքներում ունեցավ այն հետևանքը, որ Շայաստանի արևելյան հատվածի կենտրոնականությանը հասցվեց մեծագույն հարուստ, արհետականորեն կասեցնելով նրա գարզացումը: Կտրուկ կերպով խաճրնց նաև այդ երկրամասի կրթական-ճշակութային և առևտուրա-տնտեսական կյանքը: Ընդհատվեց հայրենի հողի վրա հայ ժողովրդի համախմբման ու կոնսոլիդացման գործընթացը: Նման պայմաններում հայ առևտուրական բուրժուազիան, ամեն տնսակի գործարար տարրերը, ինչպես նաև գործունեության հսկայական եռանդ կուտակած հայ մտավորականությունը, այսուհետև իրենց գործունեության ասպարեզ կարող էին դարձնել գաղրաշ-խարիծ, որտեղ առկա էին գործելու և արարելու, հայ ժողովրդի ստեղծագործական վիթխարի ներուժը գործի դնելու հարաբերականորեն բարենպաստ պայմաններ: Ենտևարար XVII դարը հայոց պատմության մեջ մտել է ոչ միայն որպես ուշ միջնադա-

բում հայերի վերջին մեծ տարագրության և քաղաքական աղետայի անցքերի. ազգակործան ցնցումների դար, այլև տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացման, հարաբերական վերանորոգման ու վերակենդանացման հարյուրամյակ: Դիրավի, դա մի դարաշրջան էր, երբ բուն Հայաստանում տիրապետող համատարած ավերի, տնտեսական քայլքայման, մտավոր աղքատացման պայմաններում հայ գաղրօջախները և նրանց մեջ առաջին հերթին Նոր Ջուղան, դարձան տնտեսական ծաղկման, մշակութային վերելքի և մտավոր վերածնության կղզյակներ: «Հայոց ժամանակակից պատմության ամենախոշոր, ամեն ինչ վճռող և բացատրող հատկությունն այն է,- գրում է Լեոն,- որ նա կազմվում է հայ գաղութենների հզոր ազդեցության տակ, համարյա նրանց ծեղզով միայն: Բուն Հայաստանն ապրել է մկսում իր գաղութեններում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչված շարժումներով... Հասկանալ և բացատրել այն ամենը, ինչ XIX-XX դարերում կատարվեց բուն Հայաստանում այն-պիսի արագահաս ուժգնությանը, որպիսին չի տեսել հայոց պատմությունն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, թե նրանից անջատենք գաղութենները: Այս բոլորովին ամինարին է, որովհետև ժամանակակից պատմության ընթացքում գաղութերի և մայր երկրի կյանքը միախառնված, ամրողացած է և անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»:

Ողջ XVII դարի ընթացքում հայ ժողովորդի պատմության երկնակամարում Նոր Ջուղայի հայ գաղթօջախն փայլեց իր անզուգական փայլով: Նոր Ջուղան հանդիսացավ ամենահնագույն և հայ սփյուռքի ամենաաշքի ընկնող գաղթօջախն: Սակայն այնուամենայնիվ ո՞րն էր նրա առաքելությունը հայության կյանքում: Նախ, Նոր Ջուղան հանդիսացել է հայ իրականության մեջ կապիտալի նախասկզբնական կուտակման կենտրոնը, կամ Լեռյի արտահայտությամբ «գաղութային հայ կապիտալի ամենամեծ և ամենաառևտել կենտրոնը», ողջ և ծնունդ է տվել հայ դրամատիրական դասակարգի ծևավորմանը: Իրավամբ, XVII

դարը հանդիսացավ հայ վաճառականական կամ «խոջայական կապիտալի» ուսկեղարք: Միջմայրցամաքային միջազգային առևտրով գրադպող ջուղայեցի վաճառականների ֆենոմենը առ այսօր հանդիսանում է աշխարհի տարբեր երկրների գիտնականների ուսումնասիրության առարկան: Ծովերը, անապատներն ու լեռները հատող և աշխարհի ամենահեռավոր ամկյունները դեգերող անդուլ վաճառական-խոջաները, անկասկած, հանաշխարհային պատմության վրա դրել են իրենց ամջնջելի կնիքը նաև որպես եվրոպական և ասիական մշակույթները միմյանց մերձնեցնող կարևորագույն միջնորդներ: Իգուր չէ, որ Եվրոպայում հայ վաճառականներին անվանել են Եվրոպական և ասիական քաղաքակրթությունները փոշոտող մեղուներ: Չայերը արևմտյան քաղաքակրթության ծեռքբերումներին մեծավ մասամբ ժանոթացել են հենց ջուղայեցի վաճառականների միջոցով:

Նոր Զուղան հայրենիքից հետու գտնվող ազգային մշակույթի, հասարակական մտքի, կրթության, գիտության, արվեստի, գրականության մի կարևոր կենտրոն էր, առհասարակ հայ մշակույթի ամենամշանավոր կենտրոններից մեկը: Ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում այստեղ է առաջին անգամ լուս տեսել տպագիր գիրք: Նոր ջուղայեցիներն են Եվրոպայի տարբեր երկրներում սկզբնավորել հայ գրատպությունը, որը ժավալվելով հասել է մինչև Հնդկաստան և Չեռավոր Արևելք: Ուշ միջնադարում Նոր Զուղայուն է հիմնադրվել առաջին համալսարանը, գարգացում ապրել փիլիսոփայական միտքը, ճարտարապետությունը, հայ գրչությունը: Նոր Զուղան առանձնահատուկ տեղ է գրավում հայ ժողովորդի քաղաքական ինքնագիտակցության գարգացման գործում: Արդեն ապացուցված է, որ հայ ազատագրական միտքը ամենից վաղ ժնունդ է առել հենց հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչների կամ հայ առևտրական բուրժուազիայի միջավայրում: Հենց այդ դասն է, որ աստիճանաբար համակվելով Շայաստանն ու հայ ժողովրդին

Ծոտարերկրյա լոից ազատագրենու տրամադրություններով, սկսում է տոն տալ նաև այդ նպատակով ծեռնարկվող դիվանագիտական շփումներին Եվրոպայի քրիստոնեական պետությունների հետ: Նոր Զուղայից են սերել հայ ազատագրական մտքի ու մշակույթի ռահվիրաները, ինչպիսից են Շահամիր Շահամիրյանը, Դարուբյուն Շմավոնյանը, պատմաբան Մեսրոպ Թաղիադյանը, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադիր Լազարյանները և ուրիշներ: Զուղայից են սերել ռուսական քանակի փառարանված գրավար, գեներալ-լեյտենանտ Բեկրուդովը, նրա եղբայր, գեներալ-լեյտենանտ Իշխան Դավիթ Շովստիյան Բեկրուդովը և մեծ բվով այլայլ բնագավառներում փառարանված հայեր:

Մի խոսքով XVII դարի սկզբից մինչև պատմության նոր դարաշրջանի արշալուսը, Նոր Զուղան եղել է համայն հայության կյանքի ուղենիշ աստղը, նրա տնտեսական, քաղաքարական, գիտական ու մշակութային կյանքի ամենակարևոր կենտրոնը: Նա է տոն ու ընթացք տվել համահայկական նշանակություն ունեցող գրեթե բոլոր երևություններին: Նա է նպաստել հայ ժողովրդի մոտ ծևավորելու նոր որակներ, յուրագնելու Եվրոպական և ասիական քաղաքակրթությունների լավագույն ծեռքբերությունները: Մի խոսքով, նշված դարաշրջանի հայ իրականության մեջ չկա մի երևուս, որ կապված չլինի Նոր Զուղայի հետ: Դայտնվել է այն կարծիքը, որ մեր պատմության նոր շրջանը, ընդհուար մինչև XVIII դարի առաջին կեսը ներառյալ, կարելի է անվանել Զուղայական շրջան: Խոկ եթե նկատի ունենանք, որ հնդկահայ և Դարավ-Արևելյան Ասիայի ու Հեռավոր Արևելքի երկրների հայ գաղթօջախները փաստորեն Նոր Զուղայի շարունակությունն էին, ապա հիշյալ շրջանը կարելի է հասցնել մինչև XIX դարի առաջին քառորդը:

Նոր Զուղան, որպես Իրանա-Շնդկաստանի թեմական կենտրոն, կարևոր դեր է խաղացել նաև գաղթաշխարհի կյանքում (Շնդկաստան, Դարավ-Արևելյան Ասիայի և Հեռավոր Արևելքի

երկրներ), որտեղ ստեղծված գաղթօջախները ձևավորվել ու գոյացյուն են ունեցել Նոր Զուղայի շնորհիվ:

Վերջապես Նոր Զուղան հանդիսանում է վառ վկայությունը հայ ժողովրդի կենսունակության և ապրելու ու հարատևելու նրա հուժկու կամքի առկայության: Բռնագաղթի ենթարկված և օտար միջավայրում հանգովան գտած հայությունը, այլ կորոնի, բարքերի ու սովորությունների առկայության պայմաններում ոչ միայն չուարրալու վեց, չկորցրեց իր ազգային դիմագիծը, մոռացության չնատմեց իր ազգային-մշակութային արժեքները, այլև ստեղծեց կազմակերպված համայնք, ունեցավ հավաքական կյանք, անաղարտ կերպով պահպանեց իր մայրենիմ, ազգային սովորություններն ու դավանանքը: Մի խոսքով, նա ապրեց ու գոյատևեց և հասավ նինջև մեր օրերը: Եվ իր գոյության ողջ չորս հարյուր տարիների ընթացքում իր անկրկնելի ինքնատիպությանը աչքի ընկած այդ գաղթօջախը բազմաթիվ տեսանելի ու անտեսանելի թելերով կենդանի կապ է ունեցել Մայր Պայտենիցի հետ: Անկասկած հենց այդ կապերն են կենդանության ավիշ ներարկել նրան և նպաստել հայ գաղթաշխարհի այդ փոքրիկ հատվածի ազգային նկարագրի պահպանմանը: Իր հերթին Նոր Զուղային հուգել է հայրենիցի ճակատագիրը, ուստի նա մշտապես հոգացել է, որ պահպանվի նրա կենսունակությունը, կանգուն լինի հայ Սուարելական եկեղեցու կենտրոն եջմիածինը, չիսարարվի նրա միավորիչ դերը:

Նոր Զուղան ձևավորվել ու գոյություն է ունեցել Իրանի հյուրներկալ հողում: Անտարակույս նա ստացել է նման ամնախաղեակ գարգացման ու բարգավաճման հնարավորություն շնորհիվ իրանական կառավարության բարյացակամության և բարի ու ազնիվ իրանական ժողովրդի ասպանչական վերաբերմունքի: Ուստի Նոր Զուղան հանդիսացել է նաև մի յուրահատուկ կապող օդակ հայ և պարսիկ ժողովուրդների, հավասարապես նաև նրանց մշակույթների միջև, բացառիկ կարևոր դեր խաղաղով

երկու հարևան ու բարեկամ ժողովուրդների քաղաքակրթությունների երկխոսության մեջ:

Նոր Զուղայի գոյությունը վառ վկայությունն է այն իրողության, որ իրենց տևական պատմական գարգացման ճանապարհին հաղորդակից լինելով տարբեր ժողովուրդների հետ, հայերը հախուսն քափով մասնակցել են զաղափարների խաչաձևնան, հոգևոր-մշակութային արժեքների կերտման և քաղաքակրթությունների մշակման գործին: Խսկապնս, ոչ մի դարաշրջամուն հայ ժողովուրդը երթեք չի հանդիսացել պատմական գարգացման պահիվ ու կրավորական նամակից: Նրան միշտ բնորոշ է եղել հարաշարժությունը, անսահման աշխատասիրությունը, ստեղծագործ ոգին, բնական ծգտումը դնավի լույսն ու գիտությունը, հավատն առ առաջադիմությունը: Իզուր չէ, որ նույնիսկ օտարմները հայ ժողովողին համարնեն նն Առաջավոր Ասիայի և Կովկասի քաղաքակրթությունների շարժիչը:

XVI դարի սկզբներից Յայաստանի գույզ հատվածները վերածվեցին իրենց հզորության գագաթը մազլցող Սերծավոր ու Միջին Արևելքի ռազմաավատական երկու հզոր պետությունների: Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրամի անհաջող նրակցության և արյունոտ պատերազմները ասպարեզի: Թեև արտաքուստ այդ պատերազմները նովում էին կրոնական քողի տակ, իբրև խւամի երկու իհմնական ուղղությունների ուղղաղական սուննիզմի և շիհազմի (շի՛է-յի ասմաաշարի) միջև մղվող պայքար, սակայն իրականում մարտնչող կողմերը փորձում էին գենքի օգնությամբ լուծել իրենց համար կենսական նշանակություն ունեցող ռազմական, քաղաքական, տնտեսական, տարածքային և գաղափարական մի շարք հարցեր: Այդ պատերազմները փոփոխակի հաջողությամբ շարունակվեցին ավելի քան երկու հարյուր տարի: ավերի ու թշվառության մատնելով հայ ժողովողի բնօրուանը: Յայության համար առավել ժամու վիճակ էր ստեղծվում օսմանյան դրոշի հաղթանակի դեպքում: Օսմանցի նվաճողները ոչ միայն իրենց քարրարուսական կամքն էին թելադրում ընկճված հայությանը, այլև կազմակերպում էին խաղաղ բնակչության կոտորածներ, կամ զանգվածային բռնագաղթի ենթարկում նրան: Այսպես, 1514 թ. Չալուանի ճակատամարտում հաղթանակ տանելով պարսիկ-օղլքաշների նկատմամբ, սուլթան Սելիմ II Յավուզը, «ահեղ» կամ «արյունոտ» մականվանյալ, երեք հազար հայ արհեստավորների զաղթեցրեց և, Պոլիս, միաժամանակ իրանայինով յանհշարդիներին սրի քաշել հազարավոր «անհավատների»: Նրա օրինակին հետևելով, 1534 թ. սուլթան Սուլեյմանը, իսկ 1577 թ. Լալա Մուստաֆա փաշան 60.000 հայերի և պարսիկների գերության քշեցին Անատոլիա, Օրանցից շատերին վաճառքի հանելով «եսիր քազարներում» (սորկավաճառանոցներում): 1584 թ. սուլթան Սուլթանը և իր զորավար Օսման փաշան վերստին գրավելով թափրիզը.

անխման սրի քաշեցին այդ քաղաքի ժողովրդին, որի մեջ մեծ թիվ էին կազմում հայերը:

Օսմանյան քաղաքարուսական լուծը առանձնակի ծանրությամբ էր ընկած հայ ժողովրդի վրա: Ուժից վեր հարկապահանգության, կրօնական հալածանքների, քոնությունների ու ամիրավորյունների պատճառով հայ ժողովուրդը մաշվում ու շնչահեղձ էր լինում:

ՍԵՖԻՅԱՆ շահ Թահմազ Ա-ն (Թահմազ, 1524-1576) և, իրականացնելով «այրված հողի» ռազմավարություն, մեծ թվով հայերի, վրացիների և այլ ժողովուրդների բոնի տարագրության երենքարկում իրան, ծգտելով այդ ճանապարհով բուլացնել հակառակորդին և միաժամանակ շնչացնել իր երկիրը:

Թամի որ գլխավորապես Հայաստանն էր համրիսանում քուրդ-իրանական արյունոտ պատերազմների քատերաբեմ, հաջողության նժարը որ կողմն էլ որ թեցվեր, տուժող, ոտնատակ գնացող առավելապես դառնում էին հայերը: Պատերազմական արհավիրքներին գալիս էին լրացնելու բնակալների կրոնական ատելությունն ու անհամուրժողակամությունը «ամիավատ-ջաֆիր» հայության նկատմամբ, նվաստացուցիչ իսլամական սահմանափակումներն ու խորակամությունը, անծի և գույքի անապահովությունը, պատվի ոտնահարումը, սոցիալական կեղեցնան ծանր ու աննարդիկային համակարգը և այլն:

Նիրավի, թիրտ ուժի դիմաց ամնուրեթ Հայաստանի բնակչությունը մատնվել էր սրտարենկ հուսահատության: Այդ րոլորից գերծ չմնաց նաև Մայր աթոռ Ս. Էջմիածինը, որն ի վիճակի շինելով վճարել «գանիրաւ պահանջմուն հարկաց», ընկել էր ծանր պարտքերի տակ, օրբստօթ աղքատանալով ու անշրանալով: Միաժամանակ Հայաստանի տարածքում հուժելու քավով ծավալվում էր թյուրքական վաչկատուն ցեղերի երնիկական նվաճողականությունը, որը դարձյալ ուղեկցվում էր նստավյաց երկրագործ բնակչության գանգվածային տեղահանություններով ու ջարդերով: Գերեվարությունների, տարագ-

ռուբյունների և ամեն տնսակի քռնուբյունների հետևանքով հայ բնակչությունը դուրս էր մղվում հայրենի բնօրրանից և ճառահատյալ բռնում դեպի ամեայտուբյուն տանող «կամավոր» արտագաղթի ճանապարհը:

1555 թ. օսմանցիների և սեֆյանների միջև կնքված Անասիայի հաշտությամ պայմանագիրն ի վիճակի եղակ կողմնորի միջև խաղաղությունը պահպանել ընդամենը տասնինգ տարի: 1570 թ. վերսկսված պատերազմը տևեց մինչև 1590 թ. և ավարտվեց նույն թվականի մարտի 21-ին Կ. Պոլսում կնքված նվաստացուցիչ ու ծանր հաշտությամբ, որով սեֆյանները ստիպված էին հակառակորդին զիջել ողջ Աստրապատականը Թավրիզ քաղաքով հանդերձ (բացի Ղարաղաղից, Արդարիլից ու Թալիշից), Վրաստանը, Գյանջան, Շիրվանը, Ղարաբաղը, Արևելյան Դայաստանի, Ջրշատանի, Լուրեսրանի և Միջագետքի մի մասը:

Սեֆյան Իրամն ապրում էր ծանր օրեր: Երկրի ավատական տնտեսությունը հոռի հարկային քաղաքականության հետևանքով գտնվում էր լուրջ ճգնաժամի մեջ: Տեղաշարժվելու վտանգավորության պատճառով դեպի Դալենա և Պարսից ծոց տանող առևտրական-քարավանային ճանապարհները գտնվում էին լրյալ վիճակում: Դամարյա անընդունելով տեղի էին ունենում արյունախանձ միջավատական երկառառակություններ, գյուղացիների ու քաղաքային բնակչության ընդվզումներ, քոչվորական ցեղերի ավերիչ ասպատակություններ, ինընազլիսության ծգտող ծայրամասային խամերի խոռվություններ: Պետության անվտանգությունը հայտնվել էր լուրջ սպառնալիքի տակ:

Այս այս պայմաններում 1587 թ. ռազմագրչվորական վերնախավի, մասնավորապես ռումլու և ուսրաջլու ցեղերի առաջնորդների ճնշման ներքո շահ Սուլթան Մոհամմադ Խուդայարանդեն գահը զիջեց իր 17-ամյա կրտսեր որդուն, որն ընդունեց Արքաս Ա (1587-1629) գահակալական ամունք և Իրամի պատմության մեջ մտակ «շահ Արքաս Սեծ» հորդորցումով: Օժտված լինելով վիրիսարի եռանդով ու քաղաքական կամքով և փայփայե-

լով հեռում գնացող փառասիրական նպատակներ, պատամի շահը աներևակայելի բափով ծեռնամուխ եղավ գործունեության: Դաշտության պայմանագրի ընծեռնած խաղաղ դադարը նա օգտագործեց Երկրի ներքին անվտանգությունն ապահովելու և ռազմական ու վարչական համակարգը վերակառուցելու համար: Սեֆյան նոր տիրակալը ծանր ծեռով, Երկարյա կամքով և անողոք դաժանությամբ հնագանդեցրեց պետության ծայրանամերի ինքնազլության ճգոտող անսանձ տադրերին, մասնավորապես կործանիչ հարվածներ հասցնելով Երկրի արևելյան սահմանների նկատմամբ ուժնօգություններ կատարող տուննիք ուղեցնելու:

Աբբաս Ա-ը ակնառու կերպով տեսնում էր, որ Սեֆյան պետության տիրապետող մասը կազմող բուրքնեն և ազնի «Պալրաշների» և պարսիկների միջև քաղաքական ու ռազմական հավասարակշռությունը խախտվել է հօգուտ առաջինների: Նրանց չսանձելու դեպքում կենտրոնական իշխանությունը կարող էր խաղալիք դառնալ պետության հիմնական ռազմական ուժը ներկայացնող զովքոր Պալրաշական ցեղերի ծեռերում: Ուստի չհամուլտելով նրանց օրըստորե անող ամհնազանդությունը, շահը դաման պայքար սկսեց Պալրաշների դեմ: Նրա իրամանով 1597 թ. գլխովին ոչնչացվեց թերթելու ընրությունը: Պալրաշ ավատատերերից բռնագրավված հողերի հաշվին շահն ընդլայնեց պետական (դիվանի) և արքունի (խասսե) կալվածքները: Սակայն նման միջոցառումները բավարար չէին վտանգն արմատախիլ անելու համար: Ուստի շրջանայաց սեֆյան տիրակալը ծրագրեց միջոցառումների մի ամրող համակարգ: Նախ անհրաժեշտ էր Պալրաշական ցեղերին գրկել Երկրի առաջատար ռազմական ուժը ներկայացնելու հանգանանքից: Այս նպատակով նա արմատական վերակառուցման ենթարկեց բանակը, այդ գործի իրականացումը համձնարարելով փառարանված զորավար, ծագումով հայ Ալլահվերորի խանին: Ստեղծվեց մշտական կանոնավոր բանակ, որը բաղկացած էր առավելա-

այս պարսիկներով համալրված հրացանակիրների («Քուֆանգ-շիան») հետևակ զորամասից և 15 հազարանոց հեծելազորից, որը հավաքագրվում էր մահմեդականացած քրիստոնյաներից («ղուանմեր»): Այդ մարտունակ ուժի հրամանատարական կազմի «ղուլզար-աղասիների» շրջանուն ամենաբարձր դիրքեր էին գրավվում ծագումով հայ գորահրամանատարներ Դարչիսա խանը, Շիրվանի Բեկլարբեկ Յուսուֆ խանը, ինչպես նաև բազմաթիվ մահմեդականացված վրացիներ: Այնուհետև անզիացի ենթոնի Շիրլիի օգնությամբ ծովածինին բնηանոթներ, որով և հինգ դրվեց պարսկական հրետանուն, որի բացակայության պատճառով սեֆյանները բազմիցս պարտություններ էին կրնել օսմանցիներից: Ստեղծվեց նաև «շահսենների» («շահին սիրողներ») ռազմական հատուկ կազմակերպությունը կամ «շահական թիկ-նազորը»:

Ռազմական այս ցարնփոխումների հետևանքով դգլրաշների թիվը կիսում չափ կրնատվեց, նվազեց նրանցից կազմված ավատական աշխարհագործ նշանակությունը, իսկ ամենակարևոր քոչվոր դգլրաշական և այլ թյուրքական ցեղերի ռազմական ազնվականության քաղաքական դերը պետության մեջ նշանակալիորեն թուլացավ:

Այս թուրորի հետ միաժամանակ շահը սկսեց վարել «երրորի ուժի» վրա հենվելու քաղաքականություն, հանձինս որի հանդես էին գալու գլխավորապես հայերը, վրացիները և այլ կովկասյան ժողովուրդներ, որոնք եթիկական առումով հեռու էին թյուրքերից, հետևաբար խորը էին նրանց: Միաժամանակ շահն աշխատում էր հենվել անտության իրանական տարրի վրա: Նրա կողմից զերազանցապես ֆարսերից համալրվող քաղաքացիական պաշտոններյունը (քյուրուլուատիան) նույնական կոչված էր թուլացնելու թյուրքական ցեղերի դերը պետության կառավարման գործում: Անվարան կարելի է ասել, որ շահ Աքրասը առաջինն էր, որ իիմք դրեց պետության «իրանականացման» քաղաքականությանը: Անկասկած նրան կարելի է անվանել իրանական

ազգայնականության նախահայրը: Նրա ջանքերով Սեֆյանների թյուրքական ղինաստիան սկսեց ծեռել զուտ պարսկական ոլմագիծ, մամավանո, որ այդ պետության մեջ առաջատար քաղաքական դերը թյուրքական ջոշվոր ավատատերերից անցնում էր իրանական քաղաքացիական պաշտոննությանը:

Այդ նույն նպատակներին էր ծառայում նաև 1598 թ. պետության մայրաքաղաքը Երկրի հյուսիսից՝ Ղազվինից, Իրանի խորքը պարսկական երնոսով շոջապատված Սպահան տեղափոխելը: Իրանական քաղաքակրթության աչքի ընկնող այս կենտրոնը չափազանց մոտ էր գտնվում զուտ պարսկական երմիկական տարր ունեցող այնպիսի քաղաքներին, ինչպիսիք էին Յազդ, Բաշանը և Շիրազը: Միանգամայն ակներև էր, որ մայրաքաղաքը տեղափոխությունը միտքած էր Երկրի կենտրոնական նահանգների տնտեսական և քաղաքական դերի մեծացնանք: Հահը մտադիր էր իր նոր մայրաքաղաքը վերածել Երկրի քաղաքական ու առևտուրական ակտիվության կենտրոնի: Նրա մտահեցմանը, այսուհետև բռնոր քարավանները, որոնք շարժվում էին հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք, պետք է հատեին կենտրոնական դիրք ունեցող այդ քաղաքը: Գիտակցելով, որ պետության ուժը խարսխվում է Երկրի հարստության վրա, այդ «վաճառական քագավորը» մեծ ուշադրություն սկսեց դարձնել առևտուրի զարգացման վրա: Նրա այդ հաշվարկների մեջ ևս առանձնահատուկ տեղ էին գրավում հայերը:

Անրապնդելով իր պետությունը, շահը միաժամանակ նախապատրաստվում էր նոր պատերազմի Օսմանյան կայսրության դեմ, իր «ժառանգական հողերը», այսինքն Անդրկովկասն ու Ասորպատականը հետ նվաճնելու համար: Նա ուշի-ուշով հետևում էր իր ախոյանի ներքին ու արտաքին կյանքում ծավալվող իրադարձություններին: Այդ ժամանակ Օսմանյան կայսրությունն ապոռում էր ծանր ներքին քաղաքական ճգնաժամ, XVI դարի վերջերից քայլութելով իր վայրէջի ու անկամ շրջանը: Նրա հզորությունը սասանվել էր նաև Եվրոպայում ու ազգական

ամհաջողությունների, Երևանի ներսում միջավառական Երկապառակությունների և ջելալինների ապատամբությունների հետևանքով, որոնք XVI դարի վերջին և XVII դարի սկզբին ընդգրկել էին համարյա ողջ Անատոլիան, սպառնալով տարածվել նաև կայսրության մյուս շրջաններում:

Հահն աշխատում էր իր կողմը գրավել պատերազմի հավանական բատերաբեմում գտնվող ժողովուրդներին, մասնավորապես նրանց ավատական դասի ազդեցիկ ու հարուստ ներկայացուցիչներին, նրանց արժանացնելով պատիվների ու մեծարման, միաժամանակ տեղեկություններ հավաքելով «զամենայն որպատութիւն աշխարհաց նոցա», «զեղանակ կառավարութանն Օսմանցւոց, զվիճակ բնակչացն Դայաստանի և զամենայն հանգամանս այնր սահմանի»: Օսմանյան անագորույն լժից ազատվելու հույսով Արևելյան Դայաստանի տարրեր վայրերից բազմաթիվ մարդիկ զանգվածաբար փախչում էին Իրան, արժանանալով շահ Արքասի կարեկցական շնորհներին ու գրկաբաց վերաբերնունքին: Առաքել Դավրիմեցին թվարկում է մի շարք նման անձանց անուններ. Սարուխանրեկն ու իր եղբայր Նազարը Ոսկանաբար գյուղից, Օղլան Քեշիշն ու իր եղբայր Ղալաթեկը Ջաբերը գյուղից, Զալալեկն ու իր եղբորորդիները Խաչենից, Մելիք Սուքումը Դիգակից, Մելիք Փաշիկը Զոշիզ գյուղից, Մելիք Ջալկազը Խանածախ գյուղից և ուրիշներ: Միայն Դիգակից չորս գյուղեր ամբողջապես տեղափոխվում են Իրան և շահի կողմից բնակեցվում Սպահանում: Դավրիմեցին նշում է, որ նրանք բոլորը հանդիսանում էին «արք անուանից»: Պետք է ենթադրել, սակայն, որ փախչողների մեջ մեծ թիվ պետք է կազմեին նաև հասարակ մարդիկ: 1603 թ. Իրան փախածների թվին էին պատկանում նաև Էջմիածնի Դավիթ և Մելքիսեդ կարողիկոսները, Ջավուց թաոի Մանվել Եպիսկոպոսը և Գեղարդի Աստվածատուր Եպիսկոպոսը:

1590 թ. պայմանագրով Օսմանյան կայսրության անցած հողերից դեպի Իրան զանգվածային փախուստի էին դիմում նաև Վրացի, ազերի և քուրդ ավատատերերը:

Դայաստանի «աղմկյալ» և խառնակ վիճակը, հայ բնակչության «սրտի տաղտկությունը», ասել է, թե նրա ատելությունը օսմանյան լջի նկատմամբ, շահը գնահատեց որպես բարեղեն ժամանակ օսմանցիների վրա արշավանք կազմակերպելու և իր փայփայած վաղնմի ծրագրերն իրագործելու հանար: Մեծագույն գաղտնապահությանը կատարելով գորաժողով և իր դրոշի տակ հավաքելով մեծաթիվ գործեր, շահը ուշի ուշով հետևում էր Աստրապատականուն և Դայաստանուն օսմանցիների շարժումներին:

Վերջապես տեղեկություն ստանալով այն մասին, որ Սալմաստի քուրդ առաջնորդներից Ղազի խան ամիրան ապստամբել է օսմանցիների դեմ և Թավրիզի օսմանյան բեկլարքեկ Ալի փաշան 20 հազարամոց գործի գլուխ անցած շարժվել է Սալմաստի վրա, Թավրիզում չքողնելով գործեր, 1603 թ. սեպտեմբերի 14-ին, խախտելով 1590 թ. քուրդ-իրանական պայմանագիրը, շահ Արքաս Ա-ն ռազմական գործողություններ սկսեց Օսմանյան կայսրության դեմ: Պարսկական գործերը արնեաց մուտք գործեցին Աստրապատական և 1603 թ. սեպտեմբերի 28-ին գործեցին Թավրիզը: Դամարյա առանց լուրջ դիմադրության հանդիպելու շահը մեկը մյուսի հետևելու նվաճեց օսմանյան ռազմակալման ենթակաված Դայաստանի շրջանները՝ Նախիջևանը և այլն, իսկ ուրամսյա պաշարումից հետո, 1604 թ. հունիսի 8-ն նաև Երևանը, իրո ճարակ դարձնելով քաղաքի մի մասը և սրի քաշելով այնտեղ տեղակայված մեծ բվով օսմանյան գինվորների:

Օսմանցիները, որոնք այդ ժամանակ կարողացել էին վերջ տալ ներքին երկպառակություններին, շահ Արքասի դեմ ուղարկեցին մի մեծ բանակ փառաբանված գորակար Զղալ-օղլի Սինան փաշայի իրամանատարությամբ, որը սկսեց շարժվել դեպի

Երևան: Կշռելով ուժերի հարաբերակցությունը, շահ Արքասը որոշեց արագործն նահանջել: Սակայն դա չէր լինելու սովորական նահանջ: Եկեղ էր պահը, երբ գործողության մեջ էր մտնելու շահի նախօղոք մշակած պլանը: Դա մի հրեշավոր նահանջծօրագիր էր, որը հայոց պատմության մեջ մնաց որպես «մեծ աղետ»: Նահանջող բանակին հրամայված էր իրագործելու «այրված հողի» կամ «մեռյալ գոտու» ռազմավարություն, որ պեսզի շարժվող օսմանյան բանակը մտնի ամքնակ ու մարդաբակ եղած մի երկիր, որտեղ չլինի պարեն բանակի և կեր անասունների համար և չլինեն մարդիկ, որոնց կարենի էր վերածել ստրուկների կամ ռայա-հարլեատուների: Չպետք է մոռանալ, որ ընդհուակ մինչև պատմության նոր ժամանակները, պատերազմական ավարի ամենաբանկարժեց ու գնահատվող առարկան մարդկային գանգվածներն էին:

Եվ ահա իջնում է շահական սպառնալից հրամանը, ամեն ինչ այրել ու ոչնչացնել. իսկ ժողովրդին քննագաղթի ենթարկել ղեափի երանի խորքնորդ: Դավրիժեցին նշում է, որ քնակավարերի, տների, խոտի, հարդի, ցորենի, գարու և այլ համբարանոցները հրկիցելու և ոչնչացնելու մյուս նպատակն այն էր, որպեսզի տեղահանված ժողովուրդը այդ ամենը տեսնելով հուսահատ լինի և հետ չդառնա: Բռնագաղթի սկիզբը պատմիչը համեմատում է հողմակոծ հուրի հետ, որն անցնում է եղեցնութով: Դամաճայն Դավրիժեցու, գաղթը սկսվեց հայոց 1054 թ. նավասարդ ամսին, որը համապատասխանում էր Գրիգորյան օրացույցի 1604 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին:

Չորքերին հրամայված էր տեղահանել և իրան քշել ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա քնակչությանը: Սակայն տեղահանվածների հիմնական գանգվածը կազմեցին հայերը, ընդ որում ոչ միայն Արևելյան Դայաստանի ամրողությամբ, հրանի հյուսիսային և հյուսիս-արևմտյան շրջանների (Մակու, Խոյ, Սալնաստ, Թավրիզ, Ուրմիա և այլն), այլև Արևմտյան Դայաստանի մի շարք շրջանների՝ Ալաշկերտի, Բասենի, Խնուսի,

Կարինի, Մանազկերտի, Արծվի, Արճեշի, Բերկրիի, Վանի, Կարսի, Կաղզվանի և այլն ողջ հայությունը: «Քանդեալ, աւերեալ, այրեալ և ապականեալ գերկիրն ու զշենան, և զինչ և զստացուած կողոպտենալ, և զարս սպանեալ, և զկանայս և զճանկունս զնրեցուցեալ, բնրին յերևան ի բանակն իւրեանց», - գրում է Առաքել Դավրիժեցին: Գառնիի լեռների ստորոտից մինչև Արաքսի ափը, Արարատյան դաշտը ծայրից ծայր լցվեց գաղթականների անրիկ բազմությամբ: Ընդ որում բռնագաղբն իրականացվում էր ամողոք դաժանությամբ, որպեսզի ապահովվի գործողության արագությունը և բացառվի դիմադրության ամեն մի փորձ: «Կարի սաստիկ տագնապաւ նեղին գժողովուրդն, զոմանս մահու հարուածով գանելով, և զոմանց զումչ և զականչ հատամելով, և զոմանց զգլուխըն կտրեալ ի ծող ցցին», - վկայում է Դավրիժեցին:

Իրապես, այս բռնագաղբը հանդիսացավ ուշ միջնադարում հայերի վերջին տարագրությունը: Դայրենագրկվեց հայ ժողովորդի մի հսկայական հատված, որը դատապարտվեց առհավետ կտրվելու իր բնօրրանից:

Աբբաս Ա-ի կողմից մտահղացած բռնագաղբի վիրխարի ծրագրի մեջ առանձնահատուկ տեղ էր գրավում Արևելյան Ցայցատամից հայ առևտրական կապիտալը Իրան տեղափոխելու խնդիրը: Արաքսի ծախս ափին գտնվող, հատկապես, Գողրան գավառի մի շարք քաղաքներ ու ավաններ՝ Զուղան, Ազատ-Գերանը, Վանամողը, Բիստը, Շորորը, Ազուլիսը, Օրդուրադը, Շահկերտը և այլն, վաղուց ի վեր հայտնի էին որպես միջագային աշխույժ առևտրի կենտրոններ: Նրանք վերածվել էին Իրանի ու Անդրկովկասի շուկաները Արևմուտքի ու Արևելքի երկրների հետ կապող կարևորագույն հանգույցների: Արդեն XVI դարից սկսած հայ առևտրական խոցանների ծեղզում էր կենտրոնացած իրանական հում-մնտաքսի և մի շարք այլ ապրանքների արտահանության գործը: Շահի ծրագրերում հատկապես հանգույցային դեր էր հատկացվում պատմական Երնջակ գավառում գտնվող

**Զուղային:** Վերջինս տեղավորված էր ապառաժուտ լեռնաշղթա-ների արանքում, որոնց միջով հոսում է Արաքսը: Ջաղաքը բնակեցված էր միայն հայերով և ունեցել է յոթ նշանավոր եկեղեցիներ, մի քանի մատուռներ ու սրբավայրեր: 1673թ. ֆրանսիացի նշանավոր ճանապարհորդ Շարդենը եղել է Զուղայում և վկայում է, որ այնտեղ «մի քանի տեսք շինված են այնպիսի ժայռերի վրա, որտեղ այծյամները կարող են միայն ման գալ»:

Գտնվելով նշանավոր առևտրական երթուղու վրա, դեռևս միջին դարերում Զուղան հոչշակվում է որպես տարանցիկ ապրանքների պահեստավայր և առևտրական փոխանակության կենտրոն: Նա իր այդ դերով նշանակալիորեն պարտական էր նրան, որ այդ ժամանակներում Արաքսի (Երասխի) վրա գոյություն ունեին ընդանենց երկու կամուրջներ, որոնցից մեկը գտնվում էր հենց Զուղայի մոտ, որը կառուցվել էր XIV դարում, իսկ մյուսը Խուղաֆարինի հայտնի կամուրջն էր: Զուղայում կային բազմաթիվ քարավանատներ, առևտրական գրասենյակներ և այլն:

Ուշ միջնադարում, հատկապես XV-XVI դարերում, Դայաստանի համար քաղաքական, տնտեսական և մշակութային առումով անկումային համարվող ժամանակաշրջանում, Զուղան ձևոց է թերում մեծ հոչակ որպես հայ առևտրական (խորայական) կապիտալի նշանավոր կենտրոն: Նա հատկապես մեծ հոչակ է սկսում վայելել որպես մետաքսի նվրոպա-ասիական առևտրի մեջ մասնագիտացած վաճառականների մի քաղաք: Զուղայնցի խորաների քարավանները լինում էին իրանում, Յնողկաստանում, Աֆղանստանում, Միջին Ասիայում, ճավա կղզում, Բիրմայում, Ֆիջիայիններում, ինչպես նաև Եվրոպայում Խոալիայում, Ֆրանսիայում, Շոլանդիայում, Ավստրիայում, Ռուսաստանում, Մերձավոր Արևելքի երկրներում, Օսմանյան տիրույթներում, Եգիպտոսում և այլուր: Այդ քաղաքի մեծահարուստ խորանների հարստությունները առասպելական չափերի էին հասել: Իզուր չէ, որ Գրիգոր XI կարողիկոսը 1541 թ. իր կոնդակում

Զուղան անվանում է «աստուածախնան գյուղաքաղաք», իսկ գրիչ Խաչատրուր Խիզանեցին 1594 թ. ընդօրինակած իր Դայս-մավուրքի հիշատակարանում խոսելով Զուղայի նասին, նրան որակում է որպես «մայրաքաղաք» և «պարթանք հայկազեան տոհմիս»: Առաջի Պավլիմեցին իր հերթին գրում է, որ Զուղան «... էր մեծ և երևելի շենք այն ի ժամանակին յայնմիկ ի մեջ արեւելեաց աշխարհիս»:

Այդ քաղաքը միաժամանակ համուսանում էր հայ արհեստագործության ուսկերչության, դաշագործության, ասեղնագործության, քանդակագործության ու թանկագին քարերի մշակման, բրուտագործության ու ճարտարապետության, նկարչության ու մանրանկարչության, գրչարվեստի ու վինագրության աշքի ընկնող կենտրոն:

Զուղայի նասին անվանի պատմարան Լեռն գրում է. «Չգիտենք, թե ինչ էր նրա անցյալը խոր հնության մեջ, բայց XV-XVI դարերից նա սկսում է փայլել հայ երկնակամարի վրա իրեն հայրենից գարնանայի վաճառականների, որոնք ոչ միայն հետաքրքրական եղեր են մտցնում միջազգային առևտուի պատմության մեջ, այլև համուսանում են մի շարք խոշոր, նմանը չունեցող հասարակական-կոլլետուրական տարր, որի կատարած դերը հայ կյանքի գարգացման մեջ անհունապես մեծ է»: «Զուղան,- մեկ այլ առիթով նշում է Լեռն,- մի փոքրիկ առանձնացած, իր գուգակիցը չունեցող վաճառակամական ինքնավար համայնք էր խոջաների վարչության տակ: Զուղային առանձին կարևոր առևտուրական նշանակություն էր տայիս նրա աշխարհագրական դիրքն այն մեծ ճանապարհի վրա, որ կապում էր Միջին Ասիան, Իրանը, Աև ծովի արևելյան ավագանի և Կովկասի մեծ ճանապարհների հետ: Զուղայի առջև է, որ Արածսի աջ ափը ներկայացնում է հարմարություն, որ հյուսիսից եկող միջազգային ճանապարհը շարունակե իր ուղղությունը դեպի Թավրիզ՝ մեծ առևտուրական շահաստանը և դեպի այլ կողմեր: Զուղան

այսպիսով դառնում է մի մեծ կայան այդ ճանապարհի վրա, ապրանքների մի մեծ պահեստանոց»:

Սակայն հայորդակցության այս հարմարությունն, ամշուշտ, միակ պայմանը չէր, որ Զուղան դարձնում էր նշանավոր առևտրական կենտրոն: Զուղայեցիների մոտ նկատվում էր մի գարնանայի առևտրական ջիյ, որմ իրավամբ, համդիսանում էր մի արտակարգ ու բացառիկ երևույթ հայ իրականության մեջ, որը ստացել է «ջուղայեցիություն» անվանումը: Դա մի այնպիսի համապարփակ հասկացողություն էր, որ հաճախ ջուղայեցիներ անվան տակ հանդիս էին գայիս նաև հարևան գալաքաների ու քաղաքների Ազգությունի, Սատապատի, Վանանդի, Բիստի, Շուորի, Նախիջևանի, Օրդուրաղի, Չահկերտի, Ցղնայի, Շաշտի, Մեղրիի, Երնջակի, Դաստակի, Կալերի, Զահուկի, Խոշբաշենի, Միսիանի, Ղափանի, Արցախի, Արարատյան դաշտի (հատկապես Երևանի) և այլ վայրերի հայ վաճառականները:

Իբրև Եվրոպայում և Ասիայում մեծ համրավ ունեցող վաճառականներ, Զուղայի խոջաները շահ Արքաս Ա-ի ուշադրությունը գրավել էին նրա բազավորության հենց առաջին տարիններից: 1592 թ. շահը իշեցրել էր հաստուկ հրովարտակ, որով ջուղայեցի խոջա Նազարին շնորհում էր ժավալում առևտրական արտոնություններ ու իրավունքներ, փորձելով նրան ներգրավել Իրանի արտօքին առևտրի մեջ: Չափի համար դրա կարևորությունը պայմանավորված էր նրանով, որ 1590 թ. բուրգ-իրանական պայմանագրով Զուղան անցել էր օսմանցիներին, հետևաբար Արքաս Ա-ը գրկել էր նրա առևտրական կապիտալը և խոջաների ծեռներեց ոգին ի շահ իր երկոր շահերի օգտագործելուց: Նրան տեղեկացրել էին, որ դա շոշափելի հարված է հասցրել պետական գանձարանին: Այդ բոլորը հուշում էր Արքաս Ա-ին, որ Անդրկովկասից նահանջելիս անբույլատրելի է Զուղան բողնել հակառակորդի ծնոցքրում:

Ուստի շահը Թավրիզից մեկնեց Զուղա, քաղաքի ավագանուն համոզնելու, որպեսզի նրանք կազմակերպեն բնակչութեան

«Ժամանակավոր» տեղափոխություն Իրան, իբր օսմանյան բանակի վայրագություններից նրանց փրկելու նպատակով։ Պատերազմի ավարտից հետո նա խոստանում էր, որ բոլորը կվերադառնան իրենց հարազատ օջախները։ Սակայն պատասխանը լինում է ըստ եռթյան բացասական։ Բաղադի ավագանին և հոգնորականությունը միաբերան պատասխանում են, որ աշնան աննպաստ ու ցուրտ եղանակը, ճանապարհի դժվարությունները, սայդերի պակասը և այլն ժողովրդին կկանգնեցնեն անհաղթահարելի դժվարությունների առջև, ուստի ինդրում են շահին ժամանակ տալ մինչև գարուն։ Հանդուզն առարկությունից մոլոքնած շահը կայացնում է վերջնական վճիռ, բայց միառժամանակ բարցնելով այն, այցելում է Զուղա։ Առաքել Դավրիժեցին գումեղ կերպով նկարագրում է շահի այդ այցելությունը։ Բաղադի բնակիչները մեծամեծ պատրաստություններ տնասնելուց հետո ընդառաջ են գնում շահին, որպես վայել և թագավորի։ Դեռահաս մանուկները ուսկի բաժակներով շահին մատուցում են «ազնիվ ու անուշահամ» գիմի, Արաքսի ափից մինչև խոցա Խաչիկի տունը փոռում են բանկարժեք գորգներ ու դրումաշներ, խոցա Խաչիկի որոյին ոսկով լի սկսութեղ մատուցում է շահին։ Նրա օրինակին հնտանելով Զուղայի մնջամեծերը ևս շահին մատուցում են բանկարժեք նվերներ և հյուրասիրում համադամ կերակուրմերով ու ծաղկահամ գիմով։

Նոր Զուղայի պատմության հեղինակ Շարություն Տեր-Ջովիանյանցը շահի դիմավորման այդ շքեղ արարողությունը համարում է անհեռատես ու «անխորհուրդ» քայլ։ Նրա այդ տեսակեսի սկզբնաղբյուրն, անշուշտ, Առաքել պատմիչն է, որը միամտորեն ննթադրում է, որ տնասնելով Զուղայի առասպելական հարստությունները, շահը լցվեց սև նախանձով և հենց մեղում որոշնեց զուղայեցիներին ենթարկել բռնագաղթի նրանց հարցատություններին տիրամալու համար։ «Ենկ վիշապն ամդմդային Շահարաս,- գրում է Դավորիժեցին,- որ ի սկզբանե զբարս օձի ուներ բնաւորնալ յինքեան ընդունմ քրիստոնեից, իբրև տեսաներ

զայնքան հարստութիւն՝ և գրարեվայելցութիւն քրիստոնեից՝ մախայր. և զգայութը ի սրտի թե զիարդ պատճառ և ժամ գոց նենգել զնոսա: Բայց առ ժամն ժածկեալ գրոյնսմ առ երես սրտահաճուկ լիներ»: Իրականում Զուղայեցիներին տարագրության ենթարկելու մտահղացումը, անշուշտ. շահի գլխում ծագել էր շատ ավելի վաղ: Զարմանալին այն է, որ մեկ այլ տեղ հենց ինքը՝ Դավիթիցին հավաստում է, որ շահը «ի վաղ ժամանակաց ուներ ի մտի զբշելն ազգին քրիստոնեից և զաւերելն աշխարհին Դայոց»:

Եվ ահա իշնում է շահի բարձրագույն հրովարտակը, որն ազդարարում էր. «Դրաման է ի բագաւորութենս մերմէ ծեզ Զուղայեցոց ելանել ի տեղեաց ծնրոց և գնալ ի Պարսկաստան աշխարհ»: Զուղայեցիներին երեք օր ժամանակ էր տրվում գաղրի ճամփան քոնելու համար: Դրամանի իրագործման պարտականությունը շահը դնում էր մահմեղականացած վրացի Թահմագղուլի թեկի վրա, որին հրամայում է ոչ մեկին չըռողնել Զուղայում և բոլորին «միահաղոյն» քշել: Դավատուրաց վրացին մեծ եռամդով լծվում է գործի և սպառնում Զուղայի բնակիչներին «սարստելի և տաճանելի մահուամբ կրուսանել զնոսա», եթե նրանք ժամանելին չկատարեն բազավորի հրամանը: Մունետիկների միջոցով նա հայտարարում է, որ ովքեր կփախչեն կամ կբաքնվեն. նրանց բաժանոցի վայրը ցույց տվողին «ապրանքն նորա ցուցողին լիցի՝ և գլուխմ թագաւորին»:

Ծրջակա գյուղերի մահմեղական խաժանումը հոժ խմբերով լցվում է Զուղայի վորոշութեղ զարդողների գույքին տիրանալու համար: Նրանք Թահմագղուլիի գինվորների հետ մտնում են տուն առ տուն և ծեծի ու բռնության միջոցով ստիպում «ելանել և գնալ», միաժամանակ հափշտակելով մարդկանց ունեցվածը:

ճարահատոյալ դուրս գալով քաղաքի պարիսպներից, Զուղայի բնակիչները զնում են Ս. Աստվածածին կամ Վերին Կաքան եկեղեցին և արտասկալի աշքերով աղաղակում առ Սուրբ Աստ-

վածածին. «... այս թանալիք սրբոյ եկեղեցւոյ մերոյ և տանց մեռոց քնզ յանձն լիցի»: Այս թառերով նրանք իրենց տների և եկեղեցիների թանալիները գցում են Արաքսը և սկսում գետն անցնել:

Դավրիժեցին հաղորդում է, որ շահը հատուկ վերաբերմունք էր դրսնորում ջուղայեցիների նկատմամբ: Բանալելով Արաքսի ափին, Աքրաս Ս-ը իրամայում է իր գորապետներին, որպեսզի նրանք օգնեն ջուղայեցիներին գետանցի ժամանակ, նրանց տրամադրելով ուղտեր ու երիվարներ Արաքսի մելք ափից մյուսը ամվտանգ անցնելու համար: Միանգամայն ակնհայտ է, որ շահն ամեն ինչ անում էր, որ խորաները իրենց հարստությունը անվնաս տեղափոխեն իր երկիրը: Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի գորադարանում գտնվող ձեռագիր ավետարամի հիշատակարանը վկայում է, որ գաղթի ժամանակ Արաքսն անցնելիս «ոչ ոք վնասեցաւ խնամովն Աստուծոյ»: Սակայն պետք է ներադրել, որ դա չափազանցություն է և չնայած շահի հատուկ վերաբերմունքին, ջուղայեցիների թվում ևս եղան գոհեր ու տուժողներ: Դենց Դավրիժեցին ինքը հիշատակում է, որ չնայած շահի իրամանին, նրա գինվորները հափշտակում էին ջուղայեցիների ունեցվածքը, առևանգում նրանց կանանց ու երեխաներին:

Գետանցից հետո շահը իր մոտ է կանչում Թահմազղուլի թեկին և հարցնում, թե «յետ հանելոյ քո զբնակիչսն Զուղայու՝ այրեցի՞ր գշինուածն նորա»: Եղր լսում է որ ոչ, մոլեզմում է և հրամայում անհապաղ իր գործերով հետ վերադառնալ և այրել բոլոր տներն ու շինությունները: Թահմազղուլին ճշտիվ կատարում է նրա իրամանը:

Գաղթից հետո զանազան հանգանանքներով տարագրությունից խուս տված կամ լեռներում ու քարանձավներում թաքնված ջուղայեցիները վերատիմ վերադառնում են հայրենի քաղաքը: Մի քանի ամիս հետո, տեղեկանալով այդ մասին, զայրացած շահը հրովարտակ է իշեցնում Զուղայում մնացած թնակչությանը տեղահան աննելու մասին: Իր այդ իրամանի իրագործումը

շահը դնում է իր գորապետներից մեկի՝ Յամդամ աղայի վրա: Վերջինս իր գործերով մտնելով Զուղա հայտարարում է, որ եթե որևէ մեկը չանսա թագավորի հրամանին և իր ընտանիքով ու ստացվածքով անմիջապես չլրի Զուղան, ինչը սրի կրաշի նրանց և իրենց ու իրենց ընտանիքի անդամներին կրչի գերության: Ղզլրաշական գործերով թաքստոցներից հանում են ջուղայեցիներին և քշում գետանցի, միաժամանակ հրի ճարակ դարձնելով Զուղայում դեռ կանգուն մնացած, կամ կիսավեր տները: Կարկած կա այն մասին, որ շահի հրամանով գինվորները թունավորում են նաև Զուղան սնուցող բոլոր աղբյուրները: Զուղայի այս երկրորդ բռնագաղթի գումեր նկարագրությունը գտնում ենք 1608 թ. ընդօրինակված մի ժողովածուում, որտեղ իմիջիայլոց նշվում է, որ «զի սակաւ էր նաևն ի՝ յանցուցանելն, քեցեցին զամրոխն աշխարհաժողով և ի գետն մղեցին և սկսաւ ջուրն լինել նոցա գերեզման և յուղարկաւոր»:

Բռնագաղթին ականատես, բնիկ երնջակցի, Նախիջևանի եպիսկոպոս Ավգուստինոս Բաջեցին Զուղայի և Նախիջևանի գյուղերի տեղահանությունը նկարագրելիս դառնությամբ նշում է: «Թողինք տունն ապրանքով լի, հօտն ի դաշտին, հայրն որդին ուրացավ, մայրն ի դուստրն ուրացավ... դուրս արին ամենայն մարդ իւր յերկրէն որպէս նահիր և ինքեան եղեն «սրով ու նիզակով քշողք... լալն ու հառաջանքն ելաւ մինչև երկինս...»:

Բռնագաղթի ենրարկվածների գետանցը Բաջեցին նկարագրում է հետյալ կերպ: «Եկաց հասաք ի գետն, որ կոչի Արաստղ [Արաքս], խիստ մեծ, որ մարդ առանց նաևի չէ կարիլ անցնիլ: Ամենայն ժողովուրդն լցին ի մերն առանց նաևի և առանց տաւարի, որն որ անցաւ, որն որ ջուրն տարաւ, որն որ հայրն կանչելով, որն որդի ծայնելով, որն մայրն կանչելով... շատոնք ի գետ խեղեցան: Ես մեղաւորս այլ գետն կու տաներ, մեկ ջամշիլ լունշիլ աքի ընկաւ ծեռս. Աստուծով դուս եկի»:

Առաքել Ղավլիժեցու հաղորդման համաձայն, «մեծ սուրգունն» իրականացվել է մի քանի փուլով: Մասնավորապես,

պատմիչը նշում է, որ այն տեղի է ունեցել յոթ-ութ անգամ, որը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու այն իրողությունը, որ շահի կողմից կազմակերպված իր մասշտաբներով այդ վիթխարի ծեռնարկը պահի բելադրանք չէր, այլ համգամանորեն մշակված մի հեռահար ծրագիր, որը բայլ առ բայլ իրագործվում էր Իրանի տիրակալի կողմից:

Աղյօւրմերի հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ բնագաղի առաջին ալիքը սկսվեց 1604 թ. աշնանը և ավարտվեց 1605 թ. զարնանը: Դետագայում, հատկապես 1608, 1615 և 1618 թվականներին տեղի ունեցան նոր, խոշոր բռնագաղեր, որոնց հետևանքով Անդրկովկասի հայ, վրացի, հրեա և մահմեդական բնակչության խոշոր գանգվածներ տեղափոխվեցին Իրան:

Յայ ժողովրդի կրած ամուսնանելի աղետը և բռնագաղի հետևանքով նրա համար ստեղծված իրադրությունը Դավրիժեցին բնութագրում է հետևյալ կերպ: «Անապատ եղև վայելուշ և քաղցր աշխարհս մեր: Եւ ազգ և ժողովուրդ մեր խեալ ի տեղեաց և անջատեալը ի հայրենի և ի բնիկ ժառանգութեանց... եղեն վտարանդեալը և տարամերժեալը յերկիր օտար և յազգ այլասեռ և այլալեզու...»:

Իր ժամանակի հիշատակարաններում բացակայում են տեղեկությունները տարագրյալների թվի մասին: Այդ առթիվ պարզուց ու հստակ տեղեկություն չի հաղորդում նաև Դավրիժեցին: Նա միայն նշում է հետևյալը. «Եւ ստորոտ լերանցն Գառնույ մինչ ի յեզրն երախսայ մեծի գետոյն, լայնութիւնն էր բանակին, իսկ գերկարութիւնն դովիմք կշտեաց դու, բայց ևս ասեմ աւուր միոյ ճանապարհ, եւ յայլուր տեսի՝ որ իինգ աւուր ճամապարհ կին գրեալ»:

Գառեցված ջուղայեցիների թվի մասին ևս ոչ մի հավաստի տեղեկություն գոյություն չունի: Սովորաբար տրվում է երկուերեք հազար ընտանիք թիվը: Առհասարակ, աղբյուրների հաղորդած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Դայա-

տանից տարագրվածների մոտ կեսն է միայն հասնէ Պարսկաստան, իսկ մնացած մասը խեղդվել է Արաքսի ջրերում, կամ ճանապարհներին ոչնչացել սովոր. ցրտից ու զրկանքներից: Ծատերն էլ պարսիկ զինվորների կողմից սրահտողող են եղել, կամ թշվել գերության: Այդ առթիվ Նոր Շուղայի Ս. Սինաս Եկեղեցում հայտնաբերված ծեռագիր հիշատակարանում ասվում է «Եւ եր զմտաւ ածենք՝ քան զլիւն մահուան ի կնամս փոխեցան առ Աստուած, ոմանք սրախոց սպանան, ոմանք սովանահ եղան. ոմանք ջրախեղոյ մնուան՝ ոմանք ի ցրտոց պակասեցան և ոմանք ազգի ազգի մահուամք առ Մրիառոս փոխեցան»: Ավգուստինոս Բաքեցին ևս վկայում է. «Ի ճանապարհն որ երթայինք, այն ինչ յետ մնայր սպանէին... շատոն ի սոսանե ցրտ և խորշակէ, սովու և նեղութեանց, բազում ցավի տիրացան: Երեկոյին որ իշնեաք, ի վաղն ելնեաք բազում մետեացք մնային իշեւանքն եւ բազում հիւամդը:... Ի ճանապարհն բազում կանայք դնէին իշեւանց ստնդեայ տղայքն ի վայր երթային վասն տկարութեան»:

Ի լրացումն այս բոլորի, 1607 թ. մոլեզնում է նաև սովոր, տանելով հազարաւոր մարդկանց կյանք:

Մմենայն հավանականությամբ, Իրան գաղթեցված հայ գաղթականների ընդհանուր թիվը եղել է 400-500 հազար մարդ, կամ մոտ 80.000 ընտանիք, որոնցից տեղ է հասել մոտ 250 հազարը: Դարցի վերաբերյալ նորագույն ուսումնասիրություններում ավելի հաճախակի թիվը է 400 հազար թիվը:

Այնուամենայնիվ, ի՞նչ նպատակներ եր հետապնդում շահ Արքասը, կազմակերպնով այդ աշխարհավեր ծեռնարկը կամ նոր ժամանակների «ժողովուրդների այդ մեծ գաղթը»: Կերտում արդեն խոսվեց ծրագրի ռազմաստրատեգիական նպատակների մասին անապատի վերածնել այն տարածքները, որոնցով անցնելու եր օսմանյան բանակը: Ծահի Ենթադրությամբ, դա ոչ միայն կղմվարացներ հակառակորդի գործերի առաջխաղացունք, այլև ապագայում նշանակալիորեն կապահովեր Իրանի սահմանային խոցների շրջանների անվտանգությունը: Ծահը նմ-

թաղրում էր նաև, որ օսմանցիները կվորցնեն իրենց հետաքրքրությունը կովախնձոր հանդիսացող, բայց և անմարդաբնակ ու ամայի դարձած Հայաստանի նկատմամբ, որն ի վերջո կանցներ Իրանին: Օսմանյան կայսրությունից ուազմական առումով թույլ Իրանը, շահի ենթադրությամբ, միայն այդ ճամապարհով կարող էր նրա նկատմամբ տանել հաղթանակ և տիրանալ այն տարածքներին, որոնք Արքաս Ա-ը համարում էր «ժառանգական հողեր» և այսպիս կոչված «իրանական աշխարհի» անրաժամնեցի մասը:

Սակայն շահը միայն ուազմագիտական նկատառումներով չէր դեկավարվում: Նրան թերևս ավելի, քան այդ նկատառումները, հետաքրքրում ու հուգում էին ծնննարկի քաղաքական ու տնտեսական օգուտները: Քաղաքական նպատակը միանգամայն հստակ էր. թուլացնել պետության ոչ իրանական էրմու ունեցող շրջանները՝ կանխելու համար անկախության հնարավոր շարժումները: Ի դեպ, շահի նվիրական երազանցներից մեկն էլ այն էր, որպեսզի իր մայրաքաղաքը բնակեցնի ոչ մահմեդական տարրերով, ներցին խորվություններ ծագելու դեպքում այդ տարրերի վրա հենվելու նպատակով: Այսուհետև նա ծգուում էր թուլացնել ազերիական քոչվոր Ֆեռդալների տիրապետող դիրքերը և նպաստել նրանց դեկավարող քաղաքական դերի անցնանք իրանական քաղաքացիական թյուրուկրաստիային և դրանով իսկ կենսագործել Սեֆյան պետության «իրանականացման» կամ հստակ իրանական դիմագիծ ծեռք թնդելու իր ծրագրած քաղաքականությունը: Ավելի համապարփակ ու ընդգրկուն էին հետապնդվող տնտեսական նպատակները, նախ շահը ծգուում էր մարդկային նոր զանգվածների հաշվին զարգացնել Իրանի նոր բնակչություն ունեցող կենտրոնական նահանգները, զարկ տալ այդ շրջանների և առհասարակ ամբողջությամբ վերցրած երկրի արտադրողական ուժերին, նպաստել առևտորի, արհեստների, հողագործության ծաղկմանը: Շահը իհանալի հասկանում էր, որ Իրանում նշանակալից թվով առևտրական ու

արիստուավորական թնակչության թնակեցումը դրական ներգործություն կունենա այլ երկրների հետ ապրանքափոխանակության ամի վրա և կնպաստի իրանի տնտեսական վերելքին և գործարար կյանքի ակտիվացմանը:

Այս լայնակուն ծրագրերի մեջ էր կարևորագույն դերն եր ունենալու հայ առևտուական-խոշայական կապիտալը, որը ներկայացնող դասի օգնությամբ Իրանի տիրակալը ճգույն եր զարկ տալ երկրի ճգնաժամի մեջ գտնվող տնտեսությանը և հատկապես ծաղկեցնել լճացում ապրող արտաքին առևտուրը: Նրա Նվիրական երազանքն եր միջազգային առևտուի կենտրոնը Արաքսի վրա գտնվող Զուղայից և հայ թնակչություն ունեցող մյուս վայրերից տեղափոխել Իրան, իսկ մետաքսի արտահանման քարավանային ուղիները անց կացնել էր մայրաքաղաք Սպահանի վրայով դեպի Պարսից ծոց, որտեղից բացվում էր ծովային ճանապարհը դեպի Եվրոպա: Համբ ննթադրում էր, որ այդ ճանապարհը մի շարք ակնառու առավելություններ ունի Փոքր Ասիայի վրայով անցնող թուրքական գամաքային ճանապարհի, ինչպես նաև Կողմանապահան առևտուական ուղու համեմատ: Այդ ծրագրի իրագործումով շահ Արքասը մտադիր էր նաև տնտեսական ծանր հարգած հասցնել իր ախոյան Օսմանյան կայսրությանը, նրան գրկելով Փոքր Ասիայի վրայով իրանական հում-մետաքսի արտահանումից գանձվող հսկայական չափերի հասնող մաքսալութերից: Չենց այդ նպատակին հասնելու ճգույնն էր, որ շահին մեծ անապատ դարձնել այն բոլոր երկրանասերը, որոնք ընկած էին էրգում-թափրիզ առևտուական ճանապարհի վրա, որի վրայով կատարվող աշխույժ առևտուի հասույթների մեջ նաև մտնում էր օսմանյան գանձարան:

Իրանը մետաքսի միջազգային առևտուի կենտրոն դարձնելու սկզբուն նպատակը շահին մղում էր ամենածայրահեղ նիշոցների: Բռնագաղբի ժամանակ, օրինակ, նա Անդրկովկասից 40 հազար հայ գյուղացիների, 12 հազար վրացիների և 7 հազար

հրեաների գաղթեցրեաց Իրամի մետաքսարեր շրջանները՝ Կասպից ծովի արևնտյան մասում գտնվող Գիլան և հարավում գտնվող Մազանդարան, որին շահը տվել էր «ողբախտանման» ամվանումը: Իրամի տիրակալի «խասսե», այսինքն՝ անձնական տիրույթ հանդիսացող այդ նահանգը, նրա մտահղացմանը, անբողոքին պետք է մասնագիտանար մետաքսի արտադրության մեջ: Սակայն զաղթեցվածների համար կարճ ժամանակամիջոցի ընթացքում այդ Երկրամասը հանդիսացավ գերեզման գաղց օդի, հիվանդութ կլինայի և ուժից վեր ծանր աշխատանքի պատճառուվ: Շատերն էլ իրենց կյանքը փրկելու համար ընդունեցին իւլանը և արդեն 1675 թ. այդ Երկրամասում մնացել էր ընդամենը Երկու հարյուր հայ ընտանիք:

Ուշագրավ է նաև նշել, որ շահի հրամանով Կախեթում ոչնչացվեցին բրի բոլոր ծառնոր, որպեսզի վերջ տրվի վրաց շերամապահությանը: Միանգանայն ակներև է, որ դրանով շահը նպաստակ ուներ նախ տնտեսական հարգված հասցնել օսմանցիներին, որովհետև վրացական հոլոմ-մետաքսը ամրողացած արտահանվում էր Փոքր Ասիայի վրայով, այնուհետև վերացնել իրանական հոլոմ-մետաքսի հիմնական մրցակցին, իսկ ամենակարևոր ծեռք թերեւ քաղաքական օգուտներ, որովհետև մետաքսի առևտությը, որը կազմում էր Վրաստանի արտաքին առևտուրի հիմքը, անրացնում էր վրացիների՝ Մոսկովյան պետության հետ ունեցած կապերը:

Չափի քաղաքական հաշվարկների մեջ եական նշանակություն ուներ նաև այն իրողությունը, որ Իրամ զաղթեցված հայ թնակցությունը որպես հարկադրու, հակայական նկամուտներ էր թերելու շահական գանձարանին: Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ որպես այլադական «գիմմի», տարագրված հայերը, թացի սովորական հարկերից, պարտավոր էին վճարել նաև գլխահարկ («ջիզյա»): Դամենայն դեպք, պետք է, որ խիստ արդյունավետ եղած լիներ Երկրի թնակցումը նոր՝ հարկադրու, ար-

հետապոր, շինարար, հողագործ և վաճառական թմակիչներով, որպեսզի բնագադրերը կրկնվեին նաև հետագա տարիներին:

Նոր Զուդայի պատմության ու մշակույթի ուսումնասիրության օտարերկրյա երախտավորներից մեկը՝ Զոն Քարսվելը հայտնել է այն ուշագրավ տեսակետը, որ շահի նտահղացմամբ, մայրաքաղաքի՝ Սպահանի մեջ և նրա շուրջը բնակեցված հայերը պետք է ծառայեին նաև որպես կենդանի պատմեց բախրիարական քոչվոր ցեղերի անընդհատ կրկնվող ասպատակությունների դեմ:

Այսպիսով, հարյուր հազարավոր մարդկանց տառապանքների գնով շահ Արքաս Ա-ը իրականացնում էր իր մտահղացած վիրիսարի ծրագիրը, որի վերջնական նպատակն էր առանց այն ել հզոր ու լայնարձակ ՍԵՓյան պետությունը դարձնել անխոցելի և ամենակարևորը տարածաշրջանի առաջատար ուժային կենտրոնը:

Ավելորդ չեն նշել նաև, որ պարսիկ և օտարազգի մի շարք հեղինակների կողմից հայտնվել է նաև տեսակետ այն մասին, որ շահի կողմից կազմակերպված բնագադրը հետապնդում էր զուտ «մարդասիրական» նպատակներ: Ըստ այդ տեսակետի, շահը մտահոգված էր, որ բուրք-իրանական պատերազմների հետևանքով քրիստոնյա և առհասարակ այլաղավան, ինչպես նաև մահմեդական թմակչությունը, ուժնակուս կլինի պատերազմող բանակների ուժերի տակ ու կոչնչանա: Ուստի գանգվածային «սուրգունի» միջոցով շահն աշխատում էր փրկել այդ թմակչությամբ: Զարգացնելով այս տեսակետը, շահ Արքաս Ա-ի պալատական պատմիչ Խսքանդար Մունշին գոռում է, որ բանագադրը քրիստոնյաների նկատմամբ շահի հոգատարության արդյունքն էր և զարդեցված քրիստոնյաները, մասնավորապես ջուղայեցինները, թմակություն հաստատելով Սպահանում, «ժամանակի իրադարձություններից ապահովություն ստացան»:

Մոտավորապես նման տեսակետ են առաջ քաշուն նաև պարսիկ ժամանակակից պատմաբաններ Նասրոլլա Ֆալսաֆին և

Աբոլդասեմ Սահարքը: Ընդ որում նրանք վկայակոչում են ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնիեին, որն արտահայտել է այն միտքը, որ չպետք է կարծնլ, որ շահ Աթրասը հայերին զարդեցնելով իրենց հայրենիքից, նրանց նկատմամբ չարիթ է գործնլ, որովհետև ընակվելով թուղթիայի և Իրամի սահմանային շրջաններում, նրանք շարունակ գրկանքներ էին կոռւմ իրանաբուրքական պատերազմների հետևանքով:

Իրականության հետ անհարիր խիստ պարզունակ և պատմական քննություն չընող այդ տեսակին տուրք է տվել նաև անգլիացի պատմաբան Պերսի Սայքսը, որի կարծիքով շահ Աթրասի վարժունքը հայերի նկատմամբ ապացույց է նրա «հայցքների լայնության» ու «մեծահոգության»: «Փոխանակ այդ քրիստոնյա գերիների հետ վարվեր ինչպես ստրուկների հետ, գրում է նա, - շահը 500 հայ ընտամից իրենց ողջ ունեցվածրով Արաքսի վրայի Զուղայից տեղափոխեց Սպահանի մոտ զտնվող Նոր Չուղա»:

Գաղթեցված հայ քնակչության հիմնական գանգվածին, հատկապես առևտրական և արհեստավորական տարրերին, շահ Աթրասը ընակեցրեց Երկոյն կենտրոնական շրջաններում: Քաղաքացիներին զվասպորապես Սպահան քաղաքի մեջ (հայկական աղջուրներում Սպահանը հիշատակվում է Ծոշ անունով), Երևանցիներին, դաշտեցիներին Ծամսաբադ, Թորսկան և Ծելին Ծարան քաղամասերում, գաղթածների մի մասին՝ Փաղալա կոչված քաղում, իսկ մնացածին մայրաքաղաքի զանազան քաղերում (Խորասրան և այլն, որոնք ունեին խառը քնակչություն): Իսկ զյուղական քնակչությանը շահը տնդավորեց Սպահանի շրջակա մահալներում ու զյուղերում՝ Լճանում, Ալճանում, Գանդիմանում, Զղախտոտում, Փերիայում, Քյարվանդում, Բուրվարիում և այլն, ինչպես նաև Բախրիարիում (Շհարնահալ): Դետագայում հայ գաղրականներ քնակեցվեցին նաև հետևյալ գավառներում: Թյագագ, Թյամրա, Գյափլա, Մալայեր և Ղարադան:

Գյուղական բնակչությանը տարբեր բնակավայրերում տեղափորելուց հետո, շահը հրամայեց արքունի պահեստներից նրանց տրանսպորտ սերմացու, հատկացնել եզներ և այլ անասուններ երկրագործությամբ գրադարձելու և իրենց ապրուստն ապահովելու համար: Իրենց ստացած այդ օգնության փոխհատուցումը գաղրեցված գյուղացիները պետք է կատարեին տարիների ընթացքում:

Զգալի քանակությամբ քանագաղթվածներ բնակեցվեցին Թավրիզում, Արդարիլում, Ղազվինում, Դամադանում, Գոլփայեգանում, Բերմանում, Խումսարում, Բաշանում, Ղումում, Սուլքանարայի շրջաններում: Ֆարսի նահանգի տիրակալ Ալլահվերդի խանը շահ Աբրասից խնդրեց 500 տուն հայեր, որոնց բնակեցրեց Շիրազում: Թաղաքներում տեղաբաշխված գաղրական-արհեստավորներին հնարավորություն տրվեց գրադարձելու իրենց արհեստներով, իսկ շատերը, որոնք չեին տիրապետում արհեստների, գրադարձելու համար մշակությամբ: Զարմանալին այն է, որ հակառակ իսլամական արգելվելի, հայերին հնարավորություն տրվեց գրադարձել զիմեզգործությամբ: «Ոմանք,- գրում է Ղավոհիմեցին,- առ այլազգիս վաճառեին զընախլիս որով հոգային զիւրնանց պէտս»: Պատմիչը նաև շեշտում է, որ պնտությունը հոգ տարավ, որ «ամենայն գաղրականք հայոց ըստ իւրաքանչիւրոց հանգամանաց կեցութեան գտանել գապուտ և կենցաղավարիլ»:

Բնակության վայր ընտրելիս և շահը առանձնահատուկ վերաբերունք դրսեւրեց ջուղայեցիների նկատմամբ, որոնց թերեւնց իր մայրացաղաքը՝ Սպահան: Այս քաղաքը, որը 1598 թվականից դարձել էր Սեֆյան պետության նայրաքաղաքը, համոլիսանում էր շահի հատուկ ուշադրության առարկան: Աբրաս Ա-ը մտադիր էր ոչ միայն այն վերածել պետության գործարար կյանքի կենտրոնի, այլև Սպահայի լավագույն քաղաքներից մեկի: Թերևս հենց այդ ժամանակ է ծնունդ առել «Սպահանը աշխարհի կեսն է» արտահայտությունը:

1605 թ. հասուկ հրովարտություն Սպահանի հարավային մասում, Զայենդեհուղ գետի աջ ափին, շահապատկան «Խասսե» հողերից Աքքաս Ա-ը ջուղայեցիներին հատկացրեց մի ընդարձակ հողակտոր, ընդ որում անվճար, որպես արքունական հավատենական պարզե, իսկ մի մասն էլ հայերը պնտք է ծեռք բերին որամով:

Սպահի կառուցման համար զօնեց քաղաքի գլխավոր հատակագիծը. «Զգեցին զմի ուղղագիծ երկայն պողոտայ՝ յարևելից առ յարևմուտս, որոյ երկայնութիւնն է 3275 քայլ և լայնութիւնն է 16», - գրում է Յ. Տեր-Շովիանյանցը: Այդ փողոցի անունը դրվեց «Նազարի խիավան» («Նազարի պողոտա») ի պատիվ «խոչա Նազար մեծ և առաջավոր իշխանապետի Զուղայու»: Նազարի պողոտայի երկու ժայրերում տներ կառուցեցին «Երևելագույն իշխանը կամ պայազատ տոհմականք Զուղայու»: Դրանք էին հայ Առաքելական եկեղեցու հետևորդ հայեր խոչա Սաֆրագյանները և հոռոմեադավան (Կարոլիկ) Շահրիմանյանները: Ուստի պողոտայի արևմտյան մասը կոչվում էր «ողում Սաֆրագյանց», իսկ արևելյան կողմը՝ «ողում Շահրիմանյանց»: Այս գլխավոր պողոտայի շուրջն էլ գետից դեպի հարավ ծագվեցին տասը ուղղաձիգ լայնարձակ փողոցներ, որոնք հատվում էին Նազարի խիավանի հետ և քածանվում քան ինքնուրույն հատվածների: Այդ փողոցներից յուրաքանչյուրը, որն ունեցել է իր մուտք դարպասը, դիտվել է որպես մի ինքնուրույն քաղանաւ «Մասնակ»: Քաղաքային վարչական այդ միավորների քաղաքների դեկավարները կոչվել են «Մասնակավագներ»: Որոնց պաշտոնը ընտրովի է եղել: Նրանց պարտականությունների մեջ է մտել նաև պետական, հարկերի ու տուրքերի գանձումը, որը քայլանքարի (քաղաքապետի) միջոցով հանձնվում էր պետությանը, ինչպես նաև իրենց իրավասության ներքո գտնվող քաղի անվտանգության ապահովումը:

Նոր Զուղայի թուղոր քաղերն անխսիր ունեին հիանալի մշակված պարտեզներ, որոնք օգտագործվում էին քաղի բնակչութ-

յան կարիքների համար: Ցուրաքանչյուր «տասնակ» ունեցել է իր անվանումը՝ օրինակ, Գիլաքննց, Մեծ խոցենց, Բաղրամենց, Ավագենց և այլն: «... Ծինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց հրաշալի յօրինուածովք, կամարակապ փողոցօք, թևաւոր ապարամօք, և ամարասուն հովանոցօք, բարձրաբերձ և արքայակերպ շինուածօք, զարդարեալ և յօրինեալ ի ծաղիկս ոսկոյ և լազվարոյի և պէս պէս երանգաց ակնախտիդ տեսողաց», - գրում է Առաքել Դավիթեցին այդ նոր բնակավայրի կառուցման մասին:

Բաղաքն ի հիշատակ Զուղայի կոչվեց Նոր Զուղա, որտեղ և բնակություն հաստատեցին ջուղայեցիները: Նրա հիմնադրությունն եղել է 1605 թ.: Աղբյուրները լուս են, թէ քաղաքի հիմնադրման ժամանակ որքան բնակչություն է ունեցել այն: Որոշ տվյալներով XVII դարի սկզբներին այն մի փոքրիկ կոկիկ քաղաք էր, որն ուներ երկու հազար ընտանիք կամ տասը հազար բնակչություն: Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը գրում է, որ 1660 թ. Նոր Զուղան բաղկացած էր 3400-3500 ընտանիքից կամ 30 հազար շնչից: Մի քանի տարի անց, 1677 թ. Զոն Ֆրայերը Նոր Զուղայի հայ բնակչության մասին հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «հայ քրիստոնյաների թիվը այնտեղ ավելի քան վեց հազար ընտանիք էր»: Ընդ որում նա ավելացնում է, որ Նոր Զուղայում բացի հայերից, բնակություն էին հաստատել նաև որոշ թվով գյարինք (զրադաշտականներ), մի քանի ֆրանսիացի ու շվեյցարացի ճարտարագետներ, գինագործներ, ժամագործներ, ոսկերիչներ, հովաներ (քժիշկներ և այլն), որոնք ամուսնալով հայուհիների հետ ժամանակի ընթացքում հայացել են: Նույն հեղինակի հաղորդմամբ, Նոր Զուղայում եղել են նաև չնշյն թվով մահմեղականներ:

Ստեփանոս Երեն Դագարօրիբեցի պատմիչը հաղորդում է, որ Նոր Զուղայում և Սպահանում տեղավորված հայ ընտանիքների թվաքանակը կազմում էր 12 հազար: Բոլոր դեպքերում թէ՝ Նոր Զուղայի հիմնադրման ժամանակ և թէ՝ հետագայում, հավաստի

տեղեկություններ գոյություն չունեն, թե իդականում որքան էր նրա բնակչությունը:

Ահա այս նոր բնակավայրում ջուղայեցինները վերընծոյտվում են: Քաղաք-ավանը սկսում է արագործն կառուցվել ու բարզավաճել:

Խորագետ ու շրջահայաց շահ Արքասը գիտակցում էր, որ չի կարելի բռնությամբ տարագրված մարդկանց նկատմամբ, որոնց համար կորցրած հայրենիքի ցավը չափազանց խորն էր. իսկ կրած տառապանքների ու կորուստների հիշողությունը երկար տարինների համար անմոռաց, վարել կոշտ քաղաքականություն, մանավանդ, որ նրանց ինքն էր հայրենազուրկ դարձրել:

Աղյուսները միաբերան վկայում են, որ ջուղայեցինների հետ շահը վարվում էր «ամենայն քաղցրությամբ» և «արքայական առատ քարեշնորհումներով»: Խվապին, իր հիմնադրման առաջին իսկ օրնից Նոր Զուղան շահից ստացավ քացարիկ իրավունքներ ու այտունություններ: Տնտեսական, քաղաքական և իրավական բնույթի առանձնաշնորհումներ առաջին հերթին տարածվում էին խոժայական դասի վրա, թեև քաղաքի բնակչության «խոնարի» խավերը և լայնորեն օգտվում էին դրամցից: Նախ հայերն օգտվում էին շարիաթական օրենքներով «զիմմիներին» հատկացվող բոլոր հասարակական և անձնական իրավունքներից: Անշուշտ, այդ իրավունքները հարգվում էին մահմեդական պնտության նկատմամբ լոյալության դեպքում: Չահը ջուղայեցիններին իրավունք տվեց պահպանել ու գաղողացնել իրենց ազգային ու կրոնական առանձնահատկությունները, մի հանգամանք, որն ըստ Եռլիքան անօրինակ երևույթ էր մահմեդական մի երկրի համար: Ֆրանսիացի ճանապարհորդ Տավերնին վկայում է, որ ողջ Մերձավոր Արևելյան Իրանն այն երկիրն է, որտեղ հայերն օգտվում են ամենալայն իրավունքներից: Նա մասնավորապես շեշտում է, որ Զուղայի հայ վաճառականները օգտվում էին բարձրագույն սոցիալական կարգավի-

ճակից, այլ կերպ ասած, նրանք համարվում էին իրանական հասրակության արտոնյալ դասակարգ: Ի դեպ, Նոր Զուղան պաշտոնավես համարվում էր շահի մոր հովանավորության տակ զտնվող բնակավայր, որը նշանակում էր մի բացառիկ առանձնաշնորհում: Բացի այդ, ջուղայնցիներին թույլատրվեց օգտվելու «արքունի իասասերին», այսինքն շահապատկան կալվածքներին վերապահվող բոլոր իրավունքներից: ՍԵֆյան Իրանում դրանցից օգտվող շրջանները և քաղաքները համարվում էին արտոնյալ համայնքներ, մասնավորապես հարկային քաղաքականության բնագավառում: Խևկապես, Արքաս Ա-ը ջուղայնցիներից գանձում էր թերեւ գլխահարկ («ջիզյե») և «իսարազ»: Զուղայնցիներին հատկացվեց ազատ քաղաքացիության արտոնություն: Նոր Զուղայի գնրեզմանաւուն տապանաքարերի վրա հաճախ կարելի է համույթու «ազատ» բառին, որը շեշտում էր, որ հանգուցյալը եղել է ազատ քաղաքացի և ոչ թե գերի: Այդ տապանաքարերի վրա դրոշմված են նաև խոժաների բարձր դիրքն ու կոչումը շեշտող գանազան պատկանուններ: «իշխան», «մելիք», «թեկ», «աղա», «պարուն», «խոջա», «որդիչ ազատաց», «ազատածին», «պայազատ», «ազատազարմ», «պայազաթագարմ», «ազնվատուններ», «ազգավն մեծ», «ազգավն ազատ Զուղայնցի», «որվարավորք» և այլն: Ի դեպ, Էջմիածնի կարողիկուսի կոնդակներում և Զուղայի մեծահարուստ ու անվանի խոժաները մնարվում են «իմաստուն», «խոհեմ», «հանճարեղ» տիտղոսներով:

ՍԵֆյան իշխանությունների կողմից ջուղայնցիները ճանաչվել են նաև իրեւ «հյուր» («մեհման»), որը նրանց տալիս էր Արևելքին հասուկ լրացուցիչ արտոնություններ: Դա նաև նշանակում էր, որ նրանց վրա չափու նայել որպես օտարականների: Երբ ջուղայնցիների և Սպահանի Սարնուն կոչված քաղանասի պարսիկ բնակիչների միջև մի չնչին առիթով ծագում է վեճ, որը վեր է ածվում կովի, շահը հրապարակում է հատուկ ֆիրման (հրովարտակ), որտեղ հանդիմանում է իր հպատակ ու

դավանակից պարսիկներին, թե «այդ է կերպ պահելոյ զիհւըն» զի ժողովուրդը այնորիկ ի պատիւ մեր ի հայրեննաց իւրեանց (ուրանօր բնակեալ կային ի հազարաւոր անաց հետէ) քածանեալ և լքեալ զրեան ուսկի և զմետաքս իւրեանց՝ ի տունն ձեր եկեալ իցեն, արժէ՝ վասն հարիւր հատ սեխմի՝ և վասն հարիւր լիսր խաղողոյ և բամբակի կռուել ընդ նոսա: Ի Զուղայ (ի հինն) կայր տուն, որոյ ծախցն նղեալ է նրկու հազար թուման, աւերեցին գայնոսիկ, և զգերդաստանաւ իւրեանց առեալ եկին աստ, արժա՛ն ընդ նոսա գործել զգործ այնպիսի: Ծառ և շատ վաստ եք գործեալ: Զարնանք են զի հայր ոչ են սպանեալ զմարդիկ Մարնունայ... Դրամայնմք, զի բազմութիւնն (մարնունցիք) որք կռուեալ են ընդ հայս՝ պատժեսցին»:

Նման դեպքերը ստիպում էին շահին հրապարակել մի շարք ֆիրմաններ, որոնք կոչված էին ջուղայեցիներին պաշտպանել տնօղական իշխանությունների և մոլեսամոդ ամբոխի հալածանքներից ու կամայականություններից: Այդ հրամանագրերում խատիվ պահանջվում էր Նոր Զուղայի բնակչության նկատմամբ վերաբերվել ճիշտ այնպիս, ինչպես վերաբերվում է ինքը՝ շահը: Այդ բոլորը այն աստիճանի համարձակություն էր տվել հայերին, որ ինչպես վկայում է Ղավրիժեցին, երբ հրապարակներում ու շուկայում մահմեղականների և հայերի միջև ծագում էր կօիվ, «համահաւասար զմինեանս հարկանւին և հայիոյին առանց երկիւրի», որը նույնպես մի անօրինակ երևույթ էր խւանական երկրի համար:

Սպահանից և շրջակա գյուղերից շահն արտաքսեց բազմաթիվ մահմեղականների, որպեսզի նրանց տեղը բնակեցնի հայերին: Նա հրապարակեց մի հրամանագիր, ըստ որի հային սպանողը դատապարտվում էր ոչ թե նրա արյան զնի փոխհասուցման, այլ մահվան, որը հակառակ էր շարիաթական օրենքներին: Ղա նշանակում էր, որ հայերը վերցվում են պետական հովանավորության տակ:

Ծահը ոչ միայն արգելը չէր հարուցում Նոր Զուղայում հայկական «նեծանիստ» ու «քարձրաշեն» եկեղեցիներ ու վանքեր կառուցելու գործին, այլև ինքն էր խրախուսում դրանց շինարարությունը, հաճախ այդ նպատակով նույնիսկ շահական գանձարանից բաց բողնելով միջոցները: Դավրիժեցու վկայությամբ, եկեղեցական տոնների ժամանակ նա հաճախում էր հայկական եկեղեցիներ և «ուրախանայր ընդ քրիստոնէից»: «Դայնը համարձակորեն կատարում էին քրիստոնեական բոլոր ծեսերը», - շարունակում է պատմիչը: Նրանք իրավունք ունեին խաչ և խաչվառով, քարձրածայն շարականներ երգելով քաղաքի միջով տանել իրենց հանգուցյալներին քաղելու, եկեղեցիներում կոչնակ խփել, քարձրածայն ժամերգություն կատարել և այլն: Եզրւ չէ, որ խաչատուր խիզանցի գրիչը գոհունակությամբ արձանագրում է. «Բայց գոհութիւն Տեսան որ հանց համարձակ կու պաշտեն գթրիստոս Աստուած այս գերի անվեալ ազգս Դայոց...»:

Սակայն կրոնական այդ ազատությունները նիայն ջուղայեցիների համար էին: Իսկ մնացյալ գաղքականների նկատմամբ Արքաս Ա-ց վարում էր մահմեդականությունը թռնի պարտադրելու և կրոնական հալածանքների քաղաքականություն:

Ծահը Նոր Զուղային տրամադրեց նաև ներքին ինքնավարություն: Զուղայեցիներն իրավունք ունեին առանց իրանական իշխանությունների միջամտության, ընտրել քալանքար (քաղաքապետ), դարուդա (ոստիկանապետ) և ներքին ինքնակառավարման նարմիններ (քյաղաքուղա), որոնք իրականացվում էին գաղթօջախի պաշտոնական հարաբերությունները սեֆյան իշխանությունների հետ: Քալանքարները համարվում էին քաջավորի խորհրդականները, մասնակցում էին օտարերկրյա դեսպանների հետ շահական արքունիցի քանակցություններին, հաճախ կազմակերպում էին օտարերկրյա դեսպանների ընդունելություններ և այլն: Տավերնին նկարագրում է, որ երբ 1664 թ. ինքը ժամանել է Սպահան, իրեն ոիմավորողների թվում, քազում

հեծյալների հետ, գտնվում էր նաև Նոր Զուղայի քալանթարը: Նա վկայում է, որ շահը հարուստ և ազդեցիկ ջուղայեցիներին տրամադրել էր այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնցից օգտվում էին միայն սեֆյան պետության մեծառութիկ ու ազնվազարմ մարդիկ: Իսկ մեկ այլ ֆրանսիացի՝ Գարրիել դե Շինոնը, Նոր Զուղան անվանում է «փոքրիկ հանրապետություն», որը ղեկավարում էին քալանթարները:

Չեղագիր հիշատակարաններից մեկում քալանթար խոչա Սարֆրազը մեծարվում է նույնիսկ որպես «հայոց թագավոր»:

«Ա իմ աննման խոչա, որ էիր հայոց թագաւոր,

Անումտ Սարֆրազ կոչի սրբնբաց գօրեղ դատաւոր,

Խելօց, քո ճարտար լեզիւտ գարմանար ամեն թագաւոր,

Ըստ իշխան քո տեսուտ փափազ, ահեղատնս իշխան փառաւոր»:

Յակառակ Իրանում գոյություն ունեցող ավանդական կարգերին, որոնց հաճածայն ըրիստոնյա հպատակը իրավունք չուներ պետության մեջ գրավելու բարձր պետական ու վարչական պաշտոններ, Արքաս Ա-ը խախտելով այդ կարգը, հայ ազդեցիկ խոչաններին շնորհում էր զանազան պաշտոններ: Օրինակ, խոչա Սարջան անունով մեկը գրադեցնում էր Սեֆյան պետության ֆինանսական գերատեսչության գլխավոր կառավարչի պաշտոնը: Ի դեպ, շահ Արքաս Բ-ի օրոք այդ նույն պաշտոնը գրադեցնում էր Ռուսաստանում հայտնի Լազարյան տոհմի (Նոր Զուղայում այս տոհմը հայտնի էր Եղիազարյաններ կամ Աղազարյաններ անունով) Մերկայացուցիչներից մեկը Աղազարը: Կային նաև պարսիկ պետական բարձր պաշտոնյանների խորհրդականներ, դիվանագետներ, զինվորականներ, բարգմանիչներ և այլն:

Նոր Զուղայում հայերին իրավունք էր վերապահված նաև դատական վեճները լուծել տեղում «ազգային խաղաղարար դատաստանաւ», այսպես կոչված «գլխավոր դատավորի» կողմից, որը սովորաբար ընտրվում էր համայնքի ազդեցիկ վաճառականներից ու հոգևորականության ներկայացուցիչներից: Իսկ

առավել կարևոր հարցերը ենթակա էին բազավորի կամ սեֆյան պետության դատական իշխանությունների իրավասության: Ամուսնական, ընտանեկան և ժառանգական իրավունքին վերաբերող բոլոր հարցերը գտնվում էին հայ առաքելական եկեղեցու հրավասության ներքո:

Հահը հատուկ իրամանագրով խոչաներին ճամաչեց որպես շահապատկան ապրանքներ վաճառող առանձնաշնորհյալ «քաջիր-ե խասս-է շերիֆի» վաճառականներ, որը մեծ առավելություն էր տալիս նրանց:

Սյսպիսով, Իրանի պետական շահը պահանջում էր, որ Արաս Ա-ը լայն արտօնություններ ու իրավունքներ շնորհի գույղայիցիներին, որոնք ոչ միայն ճնշված, իրավագուրկ ազգի ներկայացուցիչներ էին, ույաներ, այլև այլադավան ու «անհավատ» քրիստոնյաներ: Չաշվի էր առնվում նաև այն հանգամանքը, որ հայերը պարտաճանաչ և օրինապահ հպատակներ էին և «լավ» հարկատուններ: «Պատահական չեն, որ շահը սիրում էր աւել, որ «մեկ հայը ինձ վճարում է ավելի շատ հարկեր, քան տասը մահմեդականը»:

Միանգամայն թնական է, որ պարսիկ մեծամեծներին, ինչպես նաև ռամիկ ժողովրդին թնավ դուր չեր գալու հայերի նկատմամբ շահի իրականացրած հովանավորողական քաղաքականությունը: Այդ առթիվ Նոր Ջուղայում գրված գրչագիր մի ավելությունում ասվում է: «Թեպետ թագաւորի սիրում քաղցր է ի վերայ քրիստոնեց, սակայն թնակիչը քաղաքին չարք հակառակ հայուիչը օրինաց մերոց»: Եվ երբ պարսիկ հոգևորականներն ու իշխանավորները տրտնջում են, թե «ինչու այդքան երես ես տալիս հայերին և նրանց իրենց մոլար կրոնից չես դարձնում իսլամության», շահը պատասխանում է: «Ուուր իմ այս արտաքին ծեական համակրանքին ուշադրություն մի դարձնեց. մի մոռանաք, որ ես այնքան ահազին դժվարություններ կրեցի, ծախսեր կատարեցի, հազար ու մի ջանք ու հնար գործադրեցի, մինչև որ նրանց բերեցի իմ երկիրը ոչ թե հանուն իրենց օգտի, այլ հա-

նուն մեր օգտի, որպեսզի այն շենանա ու բարգավաճի և ավելանա մեր ժողովուրոց: Եթե ես այդ բոլոր հայերին կտոր-կտոր անեմ, ոչ մեկը իր հավատը չի փոխի, որովհետև հայրենի երկրի սերը դեռ շատ բարս է նրանց մեջ. ընդհակառակը, նրանք բոլորը կիսրտմեն և մեկիկ-մեկիկ կփախչեն իրենց երկիրը: Ուստի ես սիրով եմ վերաբերվում դեպի նրանց, որպեսզի կապեմ մեր երկրի հետ և նրանք մնան այստեղ: Թող անցնի ժամանակ, իին մարդիկ, որոնք ծնվել են հայոց աշխարհում, կմեռնեն և մեր երկրում ծնված նորերը ոչ թե մեր հրավերով. այլ իրենք իրենց կզան մեր կրոնին ու պարսիկ կղառնան: Այն ժամանակ կտսնեք մեր ազգի շահն ու օգուտը: Եկ եթե դուք ցանկանում եք մեր ազգի օգուտը՝ նրանց հետ վարչեցեք այնպես, ինչպես ես եմ վարվում»:

Սոաբել Դավրիմեցին, հավանաբար, հիանալի գիտակցել է շահ Աբբասի այդ նկատառումները և նրա «քրիստոնեասիրության» բուն դրդապատճառները. ուստի նրան անվանում է «վիշապ անդամային»: Ինչ վերաբերում է խորայական դասին, ապա նա կատարելապես գոհ էր իրեն ընծեռնված լայն արտոնություններից ու իրավունքներից: Աշուտ Շովիանմիսյանի դիպուկ արտահայտությամբ, «Դայաստանի ավերողը նրանց աշքում դառնում էր նրա վերակառուցողը»: Դավրիմեցին վկայում է, որ իրան գաղթեցված մնացած զանգվածը մատնվել էր Ժայրահեղ թշվառության. «Եւ ազգն հայոց որք եկին յԱսպահան,- գրում է նա,- զատ ի Զուղայեցւոց և յԵրեվանցւոց ամենթքեան չքավորեցան... զի զոր ինչ ունեին վաճառեցին և կերան»: Անտոնիո դե Գուլբեան ևս վկայում է, որ գաղթականներն ապրում էին Ժայրահեղ չքավորության վիճակում և նույնիսկ ստիպված էին դիմել մուրացկանության: Տարագրված հայության երազանքն էր վերադառնալ հայրենից: Դայրենի եզերքի կարուտը չէր թողնում, որ նրանք ամբողջապես հարմարվեն իրենց նոր կյանքի պայմաններին և ապրեն լիարժեք կյանքով: Սոաբել Դավրիմեցու վկայությամբ, շահն իր համար ցանկանում էր պարզել հետևյալ

հարցը. թեև ինքը «խնամակալ է ազգին հայոց» և «զամենայն զօրու և զբանս նոցա ըստ կամաց նոցա կատարէ», սակայն ինչո՞ւ հայերը ջերմությամբ ու սիրով չեն վերաբերվում «յաշխարհիս Սպահանայ, զի շեն աշխարհ է», իսկ հայոց աշխարհը աղքատ է և գտնվում է թշնամու «բերանում» և միշտ ենթակա է ավարի ու զերության: Որպես պատասխան, նա տարագիր հայերից լսում է հետևյալը. «յաշխարհին հայոց ամենայն քարեաց լիուրիւն և առատութիւն է և թերևագին է..., և անդ գերեզմանատունք հարց և նախնեաց նոցա. և վանորայք, և ուխտատեղիք, ուր դամբարանք են սրբոց, և մանաւանդ մեծահամելս Արուն սուրբ Էջմիածին...»:

Դամոզվելով, որ գաղթեցված հայության հայացը չի կտրվում Եջմիածնից, շահը որոշում է նրանց իրանի հետ հաստատուն կերպով կապելու, և միաժամանակ հայ ազգային եկեղեցու հիմքերին հարպած հասցնելու և հետագայում իրանահայության հանաձուլունց ոյուրին դարձնելու համար քանդել Եջմիածինը և նրա քարերն ու Լուսավորչի Աջը տեղափոխել Սպահան և այնտեղ կառուցել «նոր Եջմիածին», որտեղ օրինվի մեռնք և սիրովի ամրող աշխարհով մեկ, ինչպես նաև իր մայրաքաղաքը դառնա հայ Առաքելական եկեղեցու նստավայրը: Նրա այդ մտահղացման համար Դավիթիթեցին շահ Արքասին անվանում է «օճ դարանակալ»: Ի կատարումն իր որոշման, 1607 թ. շահը հրաման է ուղարկում Երևան բեկլարքեկ Թահմազ դուլի խանին, որպեսզի նա Եջմիածնի տաճարի ամենանշանավոր քարերը՝ Մուրը Սեղանը, Քրիստոսի իջնան տեղի քարը և այլն, ինչպես նաև Լուսավորչի Աջը և այլ մասունքներ ուղարկի Սպահան: Թահմազ դուլին տաճարից քանդում է 50 քարեր, որոնցից 15-ը կարել է տալիս կաշվե տոպրակների մեջ և ուղարկում Սպահան:

Սակայն շահը հրաժարվում է իր մտահղացումն իրականացնելուց: Այդ առթիվ կան տարբեր վարկածներ: Օրինակ, դրան խանգարեց Վրաստանում սկսված ապստամբությունը, ջուղայե-

ցի խոջաներին հաջողվեց համոզել շահին հետ կանգնելու իր չարագուշակ մտահղացումից, Երան նախագուշացնելով, որ իր այդ անխոհեմ քայլից կտուժի իրանական գանձարանը, որովհետև խոջաները կլցեն Իրանն ու կհեռանան այլ երկրներ: Յ. Տեր-Շովիանյանցի կարծիքով, շահին այդ քայլից հետ պահեց այն, որ նա մտավախուրյուն ունեցավ, որ «նոր Եօմիածինը» ի վերջո կընկնի կարողիկ եկեղեցու հսկողության տակ, որն ամրմունելի էր շահի համար: Գուցե շահը շահակացա՞վ առնակատման մեջ նունել հայ հոգևորականության հետ, որի ազդեցությունը մեծ էր համայն հայության վրա: Չպետք է մոռանալ, որ պետականության բացակայության պայմաններում հայ Առաքելական եկեղեցին և նրա գլուխ կանգնած կարողիկուս խաղում էին ժողովրդի բնական առաջնորդի դեր: Շահի համար ոչ պակաս կարևորություն ուներ նաև այն հանգանանքը, որ նա հանձինս հայ հոգևորականության տեսնում էր այն միջոցը, որի շնորհիվ Իրանը կարող էր պատուիան բաց անել դեպի Արևմուտք, սերտացնելու համար պետության տնտեսական ու քաղաքական կապերը քրիստոնյա տերությունների հետ: Բոլոր դեպքերում Եօմիածինը Սպահան տեղափոխվելու այդ ծրագիրը չստացվեց: Եօմիածնից բերված քարնոր տեղափոխվեցին Նոր Ջուղայի խոջենց ժամ, ապա ս. Գևորգ եկեղեցու բակ, որտեղ և մինչև օրս գտնվում է դրանց մի մասը (ընդամենը 7 քար):

## ՆՈՐ ԶՈՒՂԱԾ ԵՎ ԱՐԵԿԵԼՔ-ԱՐԵԿՄՈՒՏՔ

### ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵԿՏՈՒՐԸ

XVII դարի սկզբներին Իրանը դեռևս թույլ էր ընդգրկված եվրոպական պետությունների առևտրական շահերի շրջանակների մեջ, իսկ եվրոպացի վաճառակամները համեմատաբար թույլ մասնակցություն ունեին Սեֆյան Իրանի արտաքին առևտրի մեջ: Մինչդեռ Իրանը կենսականորեն շահագրգուված էր այդ երկրների հետ գարգացնելու առևտրատնտեսական հարաբերությունները: Շարդենի վկայությամբ, շահ Աբբասը գտնում էր, որ առևտուրը երկրի հարստացնան ու բարգավաճնան միակ ճանապարհն է: «Եսույնիսկ ահարկու բռնակալներն եւ չեն մոռանում,- գրում է Լեոն,- որ մի երկրի բարօրությունը հաղթական պատերազմների մեջ չէ, այլ ծաղկած արդյունաբերության և առևտրի մեջ: Առևտուրն իր գարգացման համար պահանջում է խաղաղ կյանք, ապահով հաղորդակցություն և այլ այսպիսի հեշտացնող ու շահավետ դարձնող պայմաններ»: Գիտակցներով այդ բոլորը, շահ Աբբասը եռանդուն կնրպուվ ծեռնամուխ է լինում իր երկրի ներքին և արտաքին առևտուրը խրանող դյուրություններ ստեղծնելուն: Նա սկսում է կառուցել ճանապարհներ, քարավանսարայներ, դաժան պայքար է ծավալում ճանապարհներն անապահով դարձնող ավագակախմբերի դեմ, կարգավորում է ճաճսատների աշխատանքը և այլն: Ընդառաջներով շահ Աբբասի մտադացումներին Իրանի արտաքին առևտուրը Փոքր Ասիայի ցամաքային քարավանային ճանապարհներից դեպի Պարսից ծոց շրջելու ուղղությամբ, նոր ջուղայնցի վաճառակամները առաջին քայլերը սկսեցին անել օգտվելու համար դեռևս լիովին յուրացված առևտրական այդ ուղուց: Սակայն ծոցում իրենց տիրապետությունը հաստատած պորտուգալական իշխանությունները արհեստական արգելվներ էին ստեղծում հայ վաճառակամների առջև, նրանցից գանձելով բարձր նարսատուրքեր և բույլ չտալով, որ նրանք Պորտուգալի

առևտուր անեն օտարերկրյա վաճառականների հետ: Այս է պատճառը, որ ջուղայեցի խոջաննորի պնդմամբ, հավանական է նաև շահական կառավարության թելադրանքով, եզնիածնի կաթողիկոս Մելքիսեդք դիմում է խսպանական թագավորին: «Զի յամուանի շահաստանի անդ յՈրմուգ, որ ի Պարսից ծոցին կայ, յորում յայլոց քրիստոնեայ վաճառականաց վասն տուրևատիկ վաճառաց մտիցն ու ելիցն ի սակ տասանորդի հայն պահանջին, ի նոցունց Դայլոց նոյն սակ կրկին չափով որպէս յանհաւատիցն պահանջի, ի մեծ վնաս նոցին և իրաց և համրաւոյ»:

Դայ խոջանների նկատմանք պորտուգալացինների նման վերաբերմունքը առաջ էր բերում շահ Արքասի զայրությունը: Կերպինս որոշեց հարցին լուծում տալ ռազմական ճանապարհով: «Պատերազմական գործողություններ սկսելով պորտուգալացինների դեմ, շահը դեռևս 1601-1602 թթ. գրավեց Բահրենյան կղզինները, իսկ 1622 թ. անզիական Օստ-Հնդկական ընկերության ռազմական նավատորմի օգնությամբ քախցախնց պորտուգալացիններին և Պարսից ծոցը բաց արեց Իրանի արտաքին առևտուրի համար:

Նկատի ունենալով, որ Իրանի արտահանման հիմնական ապրանքը հում-մետաքսն էր, որի պահանջարկը համաշխարհային շուկայում նվրոպական մանուֆակտուրանների գարզացման պատճառով չափազանց մեծ էր, շահ Արքասը հում-մետաքսի հայրայթման ու արտածման գործը հոշակեց պետական մենաշնորհ: Սակայն նրա արտահանման խնդիրը կապված էր մեծ դժվարությունների հետ, որովհետև օտարերկրյա վաճառականների այցելություններն Իրան կրում էին դիպվածային ու քուցիկ բռույթ: Իսկ թուն իրանցի վաճառականները (պարսիկներ, հրեաներ և այլն) առավելապես գրավվում էին ներքին առևտուրով և հազվադեպ էին մեկնում նվրոպական երկրներ: Շահի ռազմաթիվ փորձերը նրանց ներգրավելու նաև արտաքին առևտուրի մեջ, չույնեցին ցանկալի արդյունքներ: Ավելին, նրանք չարդարացրին շահի հույսները: Բազմաթիվ վաճառականներ նվրոպայում շա-

հապատկան մետաքսի վաճառքից հետո այլևս չիմ վերադառնում էրան, դրամը վատնելով կանանց վրա և վարելով գոփ ու շվայտ կյանք: 1599 թ. շահի կողմից Եվրոպա ուղարկված հետպանության կազմի մեջ ընդգրկված պարսիկներից համարյա ոչ ոք չվերադարձավ էրան: Դեսպանության երեք քարտուղարները Ալի Դուկի խանը, Բոնայեղ բնեկը և Օրուջ բնեկը դաշտափոխ լինելով՝ մնացին Խապանիայում, ընդունելով Շոն Ֆիլիպ, Շոն Դիեգո և Շոն Շուան (Շոււան) անունները, իսկ դեսպանության մի քանի ժառայողներ մնացին Շուոմում, որոնք ժիգվիենների կողմից նույնպես դաշտափոխ եղան և ընդունեցին կարուղիկությունը:

Ըստ երևույթին նման դեպքերը այն աստիճանի հաճախակի բնույթ էին կրում, որ Վենետիկի հանրապետության սենատը ստիպված էր հրավիրել շահի ուշադրությունը:

Էրանական մետաքսի արտահանումը Եվրոպա կազմակերպելու ճանապարհին կար նաև մեկ այլ դժվարություն: Բանն այն էր, որ հատկապես Եվրոպայի կաթոլիկական մոլեռանդ շրջաններում մահմեդականների նկատմամբ վերաբերվում էին անվստահությամբ, իսկ հաճախ նաև թշնամանքով, որը ծայրահեղորեն դժվարացնում էր այլադավան վաճառականների մուտքը Եվրոպական երկրներ, նրանց տեղաշարժերը այդ երկրների ներսում, կամ անցումը մեկ երկրից մյուսը: Բացի այդ, սուննիթական Թուրքիայի և շիհրական Էրանի միջև խորը կրոնական թշնամանքի պատճառով շիա վաճառականների տեղաշարժը օսմանյան տարածքներում կապված էր մեծ դժվարությունների հետ: Ընդհանրապես Օսմանյան կայսրությունում քրիստոնյա, այդ թվում նաև հայ, վաճառականների նկատմամբ ավելի լավ էին վերաբերվում, քան «հերօնվածող» շիհրների նկատմամբ:

Այս բոլորի հանրագումարում, իր ծրագրերն իրազրծներու ճանապարհին, հայ վաճառականներին օգտագործելուց զատ, շահ Աբրասի համար այլ երկընտրանք գոյություն չուներ: Այսպիսով, եկել էր ջուղայեցի խոջաների միջազգային առևտորի մեջ ունեցած հարուստ փորձը ի շահ Սեֆյան ախտության օգտագոր-

ծելու ժամանակը: «Ծահ Արքասն իր հայացքն ուղղեց հայերին,- գրում է Տավերնիեն,- որովհետև իր մտադրություններն իրականացնելու համար նրանք իրեն ավելի հարմար էին թվում: Ըստում, որ առույգ ու հոգության դիմացող մարդիկ են, երկար ճանփորդություններ անելու ընդունակ, թե շատ ժուժկալ էին կերուխումի մեջ և խնայասեր, և թե քանի որ քրիստոնյա էին ավելի ոյուրությամբ կարող էին առևտուր անել ամրող քրիստոնյա աշխարհի հետո»:

Դադրնձված և մասամբ ունեցրկված ջուղայեցի խոջաներին ուղի կանգնեցնելու և նրանց առևտրական գործունեությունը սատարելու նպատակով, սկզբնական շրջանում շահը նրանց հատկացնում էր ամսուկոս դրամական վարկեր և ապրանքներ, գլխավորապես հում-մետաքս, որը նրանց հնարավորություն էր տալիս արագործն վերականգնել իրենց նախկին առևտրական կամքոց: Դենց որ շահական աստիճանամակորները նահանջներից, գլխավորապես Գիլանից ու Մազանդարանից, արքունի հում-մետաքսը տեղափոխում էին նայրաքաղաք, շահն իր մոտ էր կանչում առավել փորձված ջուղայեցի վաճառականներին և նրանց հանճնելով մի քանի տասնյակ հակ հում-մետաքս, ուղարկում էր եվրոպական նրկոներ: Փոխառվության ձևով հատկացված մետաքսի արժեքը ջուղայեցիները վճարում էին վերադառնալուց հետո: Իրենք, խոջաները ևս, գործողության մեջ դրեցին ավելի փոքր վաճառականներին դրամական վարկեր հատկացնելու գործառույթը այսպես կոչված «ընկերական դաշինք»: Իհնան վրա: Նման գործարքների ժամանակ կողմերի ազնվությունը համարվում էր ամեն ինչից վեր: Գործարքը կնքելիս խոջաները միմյանց տվել են ստացական կամ «քուղք ապահովութեան», որը կոչվում էր նաև «խարփաթիք»: Դրա առկայությունը բացառում էր վեճերն ու տարածայնությունները: Իսկ հազվագյուտ ժագող վեճերը լուծվում էին խոջաների իսկ կազմակերպած առևտրական դատարաններում, որոնք կոչվում էին «վաճառականների ժողով»: Վերջինիս կողմից վճիռը կա-

յացմելուց հետո նզրակացությունը գրվում էր գրավոր հայտարարագրի ձևով, որը սկսվում էր հետևյալ բառերով. «Սովորագրի դուստուրն այս է... և թէ մեջ վասն այսր գործոյ՝ այսպէս գիտեմք»:<sup>1</sup>

Հահը ամեն կերպ խրախուսում էր ջուղայեցի խոջաների ջանքերը՝ հայտնաբերելու նոր, ազատ շուկաներ: Այդ գործը նրանց համար առանձնակի բարդություն չէր ներկայացնում, որովհետև խոջաները քաջ ծանոթ էին առևտրի համաշխարհային կոնյուկտուրային, ունեին հիանալի տեղեկություններ տարբեր երկրներում չափերի, կշիռների, շրջանառության մեջ գտնվող դրամների, ապրանքների գների, մաքսատուրքերի չափերի, տարբեր քաղաքների ու երկրների առևտրի պայմանների մասին և այլ տեղեկատվություն:

Ըստ Էռլեյան շահական կառավարության և Զուղայի հայ առևտրական դասի միջև ստեղծվեց շահերի միասնություն, մի տեսակ դաշինք: Կառավարությունը խոջաների համար ստեղծում էր առևտրի բարենպաստ պայմաններ, իսկ վերջիններս էլ իրենց առևտրով մեծ եկամուտներ էին թողում շահական գանձարանին: / Չահ Արքասը ջուղայեցի վաճառականներին հատկացրեց ոչ միայն ազատ առևտրի իրավունք ողջ Իրանի տարածքում, այլև մահմեդական վաճառականների հետ հավասար իրավունքներ: Խւլամական 1043 թ. մուհարրամ ամսին (1627 թ.) շահ Արքասի տված «սիհեզերալուր» իրամանում ասվում էր, որ ճանապարհների վրա գործող «կապալառուր, հարկապահանջը և բաժառութ (մաքսավորներ)» իրավունք չունեն վաճառականներից գանձելու ավելի մաքսեր և տուրքեր, քան դա սահմանված է արքունի դիվանի կողմից: Դրամանագրում խստիվ պահանջվում էր չնեղել վաճառականներին, այլապես սպառնալով նրանց դաժան պատիժների ենթարկել:

Պիհետրո Ղելլա Վալլեն դիպուկ նշում է, որ «ջուղայեցիները Իրանի բազավորի համար այն են, ինչ ջենովացիները իսպանա-

կան քագավորի համար, առանց քագավորի նրանք չեն կարող ապրել, ինչպես և քագավորն առանց նրանց»:

Դեռևս շահ Աբրաս Ա-ի տիրապետության շրջանում շնորհիվ Նոր Ջուղայի, պետության մայրաքաղաքը Սպահանը, դարձավ միջազգային առևտուրի խոշորագույն կենտրոն: Շինաստանից, Ղնդկաստանից, Կենտրոնական Ասիայից, Արարիայից, Օսմանյան կայսրությունից և Եվրոպայից այստեղ էին հոսում գանձան ապրանքներ:

Ջուղայի խոջաները համեյս էին գալիս իրեն «շահլուղ» (արքունի) մետաքսի վաճառահանման խոշորագույն կոմտրագենտներ: 1618 թ. շահ Աբրասը աճուրդի դրեց Իրանի ողջ հում-մետաքսի արտահանման մենաշնորհը: Այդ աճուրդին մասնակցեց նաև Արևելքում ամենազոր անգլիական Օստ-Ղնդկական ընկերությունը, որը հանեյս էր գալիս իրեն ջուղայեցի վաճառական-ների ամենալուրջ մրցակից: Այդ աճուրդում հայրանակ տարան հայ խոջաները, որոնք յուրաքանչյուր հակ հում-մետաքսի համար տվեցին ամենաբարձր գինը: Դա հնարավոր դարձավ շնորհիվ այն քանի, որ հայ վաճառականները բավարարվում էին ավելի փոքր շահույթով, քան անգլիացիները:

Ծահ Աբրասն ամրողապես չեղյալ հայտարարեց Օստ-Ղնդկական ընկերության հետ 1617 թ. կնքած առևտրական պայմանագիրը, որի հետևանքով Իրանից հում-մետաքսի արտահանման մենաշնորհն անցավ հայ վաճառականների ծեսքը: Այսուհետև Իրանի մետաքս արտադրողները պարտավոր էին ծայրահեղ ցածր գներով իրենց ողջ արտադրանքը համձնել շահի պաշտոնյաններին, որոնք իրենց հերթին այն տրամադրում էին ջուղայեցիներին միջազգային շուկաներում իրացնելու համար: Եվրոպացի ճանապարհորդների հայորդման համաձայն, հում-մետաքսի պետական մենաշնորհի օգնությամբ շահը ծգտում էր խոշոր շահույթ ստանալուց բացի մրցակցության մեջ մտնել Օսմանյան կայսրության հետ և խափանել բուրբական մետաքսի վաճառքը Եվրոպայում: Աստիճանաբար ջուղայեցիները իրենց

ծեղթերում կենտրոնացրին նաև իրանական ավանդական նյուև ապրանքների արտահանման գործը, փաստորեն իրանի արտաքին առևտորի մեծագույն նաև վերցնելով իրենց ծեղթը: «Բազուկ վաճառականութեանն ջուղայեցւոց,- գրում է Յ. Տեր-Դովհանյանցը,- ծգեցաւ ընդ ամենայն աշխարհի»: Կոստանդ Զուղայեցին մեկ առ մեկ թվարկում է այն երկրներն ու քաղաքները: Հնդկաստանի 30 քաղաքներից բացի նա հիշատակում է աշխարհի քազմաքիլ երկրներ ու քաղաքներ. Ինդոնեզիա, Ֆիլիպիններ, Սեպալ, Չինաստան, Չարեշստան, Ուգրեկստան (Բալխբուխարա), Ղանդահար, Ղազնի, Թարուլ, Փեշավար, Զաշմիր, Երևան, Գյանջա, Ղարաբաղ, Շիրվան, Շամախի, Մուսկով, Լեհաստան, Յունգարիա (Լեհունագար). Բասրա, Արարստան (Արարական թերակղզի), Բաղդադ, Ջալեա, Կ. Պոլս, Բուրսա, Երգրում, Թոքաբ, Իզմիր, Խտալիա (Սեսինա, Զենովա, Ալիկոռնա, Վենետիկ), Ալաման (Գերմանիա), Ֆոանգսայ (Ֆրանսիա), Ընկերել (Անգլիա), Անստերդամ, Ղանցիզ, Խսանիա և «Ենգիդունի երկիրն» (Ամերիկա): Ընդ որում Զուղայեցին գանց է առնում ծովեզրյա նավահանգիստները, որանք համարելով այն աստիճանի հանրահայտ, որ իր կարծիքով արժանի չեն հիշատակության:

Խոջաններն իրենց առևտորով ոչ միայն հարստացնում էին շահական գանձարանը, այլև իրենք էին կուտակում հսկայական հարստություն: Շրջանառության մեջ գտնվող նրանց կապիտալները հասնում էին միլիոնների: Տավերնիեն վկայում է, օրինակ, որ ջուղայեցի խոջաններից մեկը իր մահվանից հետո թողել էր մոտ 40 միլիոն բռնամի հասնող հարստություն, որն իր ժամանակի համար վիրհսարդ գումար էր: Զուղայի վաճառականական դասը միատարր զանգված չէր: Կային մեծածախ վաճառականներ, որոնք ապրանք էին մատակարարում խանութպան-«դուքսանդարներին»: Կային նաև վաճառականներ, որոնք «երկրն դուրս չեն գալնան, դուքսանումն նստած այլնայլ ամեն երկրի

ճոր կու ծախեն»: Եվ վերջապես վաճառական-խոջաների երրորդ խումբը գրադպատմ էր միջազգային առևտրով, որոնց կարելի է անվանել նաև «շրջիկ» վաճառականներ: Սրանք աշխարհի տարբեր ծագերում ունեին իրենց գործակատար-«սարցարներ», որոնց վարկավորում էին առևտրական գործարքներ կատարելու համար:

XVII դարում Եվրոպա-ասիական առևտրական ամենաբարանուկ ճանապարհն անցնում էր Փոքր Ասիայի վրայով: Մասնավորապես Թավրիզ-Երզրում-Զնյութնիա առևտրական մայրուղիով ջուդայեցի վաճառականները իրենց ապրանքները տեղափոխում էին Լևանտի՝ արևելյան Միջնորդածովյան ավագանի Երկրների առևտրական կենտրոններ՝ Աղյանա, Յալեա, Բեյրութ, Տրիպոլի, Ալեքսանդրիա (Յայոց ծոց), ինչպես նաև միջազգային առևտրի խոշորագույն կենտրոններ՝ Կ. Պոլիս, Բուրսա, Զմյութնիա, Սալոնիկ, Ալեքսանդրիա և այլն: Փոքր Ասիայի վրայով անցնող ցանացային քարավանային ճանապարհների վրա ողջ XVII դարի ընթացքում հայ վաճառականները մրցակիցներ չունեին, մանավանդ որ Եվրոպացի վաճառականները չեն գրադպում քարավանային առևտրով, ուստի և հնարավորություն չունեին Օսմանյան կայսրության վրայով անմիջական առևտրական հարաբերություններ հաստատել հրանի հետ և անձամբ կազմակերպել մետաքսի և արևելյան այլ ապրանքների արտահանումը Եվրոպա:

Լևանտի քաղաքներում ջուդայեցի վաճառականները գործում էին նաև որպես Եվրոպացիների առևտրական գրասենյակների գործակալներ ու քարգամանիչներ, քանի որ նրանցից շատերը տիրապետում էին մի քանի լեզուների, որոնք նրանք յուրացնում էին ոչ միայն Եվրոպացիների հետ շփումների միջոցով, այլև ուսումնասիրում էին Սպահանում գործող ճիզվիր և կապույն միսիոներների դպրոցներում:

Լևանտի առևտրական կենտրոններում քազմամարդ հայկական գաղութների և գաղրօջախների առկայությունը նշանակա-

լիորեն հեշտացնում էր խոցաների գործունեությունը և բարձրացնում նրանց մրցողունակությունը: Օրինակ, Շալեպում, որը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի, ընդհուպ մինչև նոր ժամանակները հանդիսանում էր աշխարհի առևտրական մեծագույն կենտրոններից մեկը, գոյություն ուներ բազմամարդ գաղութ իր եւեղեցիներով, սրբատեղիներով, հյուրանոցներով և այլն: Շայ վաճառականները, հատկապես ջուղայեցիները, այս վաճառաշահ քաղաքում չափազանց մեծ թիվ էին կազմում: Նրանց մասին Սիմեոն Լեհացին հիացմունքով գրում է. «իմաստուն, փարթամք, գեղեցկատեսիլ, նման Չուղայեցոց և Անքեցոց՝ անւանիր եւ մեծ վաճառականը, որ մարդ անաչէր երեսին նայել: Կայր խոջա Շանտիլն և այլ համբայց նորա քառսուն հազար, յիսուն հազար թեռան տեր»:

Շալեպում հայ վաճառականների հիմնական գործընկերներն էին վենետիկցի, ֆրանսիացի, հոլանդացի և խսպանացի վաճառականները: Շատկապես հայտնի են եղել խոցաներ Պիետիկենց և Սանոսենց առևտրական ընտանիքները, որոնք ունեին առևտրական խոշոր ֆակտորիա (գրասենյակ): Նրանց ծեղբերում էր կենտրոնացած իրանական հում և մշակված մետաքսի զննան և վաճառահանման մենաշնորհը:

Սովորաբար մետաքսով բեռնված ջուղայեցի վաճառականների քարավանները Շալեպ էին ժամանում Եփրատի հովտով, հաստեղով Կարինը, իսկ ավելի հաճախ Թավրիզ-Կան-Բաղեշ-Շիարբեքիր-Քիրեջիք ճանապարհով:

Կոստանդնուպոլիսում Եվրոպական վաճառականները արևելյան ապրանքներ կարող էին ծեղը բերել միայն հայ վաճառականների միջոցով: Սիցնորդ կամ կոմպուադորական առևտուրը հայ վաճառականների համար մի մենաշնորհ էր, որ նրանք պահպանեցին մինչև XIX դարը: Թեև ջուղայեցի խոցաների կողմից Լևանտի առևտրական կենտրոններ արտահանվող ապրանքների մեջ առաջնությունը պատկանում էր իրանական հում մետաքսին, սակայն նրանք արտածում էին նաև բազմապիսի

այլ ապրանքներ, որոնց ծագումը մեծ մասամբ իրանական չէր, այլ Իրան էր ներմուծվում Հնդկաստանից, Չինաստանից, Սիամից, Ինդոնեզիայից և ասիական այլ երկրներից: Այսանուի շուկաներում Եվրոպական վաճառականները նրանցից ծեղաց էին թերում բազմապիսի գործվածքներ, գորգեր, թանկարժեք ու էժանագին քարեր, բուժիչ խոտեր, բնրադեղեր, շաքրան, պղպան, մեխակ և այլ համեմունքներ, մուսկարի ընկույզ, լեղակ, սնդիկ, բազմապիսի ներկեր, դեղեր, վարդագույր, խնցեղեն, գինի, ծուռմբ, բրինձ, այծի բուրդ, ծիներ և այլն:

Արևմտյան Դայաստանից արևմուտք, ողջ Փոքր Ասիայի տարածքում, հայ բնակչության առկայությունը ևս ստեղծում էր մի միասնական շղթա, որոնց իրար հետ կապված էին առևտրատնտեսական բազմապիսի թելերով: Իզուր չէ, որ XVII դարի սկզբին Սիօնոն դագիր Լեհացին գրում էր. «Եւ քէ հաշուես ի Պուդտանայ մինչև Ստամպոլ, պուրակ Ռուսումէլին մինչեւ մեծն Վանատիկ, նա չկայ քաղաք, գեղ կամ չֆուլիկ, որ հայ չկենայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս զփոշի»:

Զուղացից վաճառականները իրականացնում էին իրենց առևտրությունը, հաղթահարելով բազում դժվարություններ: Կապիտուլյացիաների հաստատումով Մերձավոր Արևելքում արդեն ավարտվել էր Եվրոպական առևտրական կապիտալի ներքափանցումը և Արևելքի շուկաները կռվադաշտ էին դարձել Արևմտյան Եվրոպայի առևտրական պետությունների միջև: Ուստի Ասանտում հայ վաճառականները կամա թե ականա հանդիպելու էին լուրջ առևտրական նրգակիցների ու ախոյանների, զիսավորապես հանձինս Անգլիայի, Ֆրանսիայի և Յոլանդիայի առևտրական կապիտալի ներկայացուցիչների: Բացի այդ, Օսմանյան կայսրության փոքրասիական տիրույթների վրայով անցնող ցամաքային քարավանային ճանապարհը բացարձակապես անվտանգ չէր, որովհետև այդ պետության մեջ առևտրական քարավանների կողոպուտը սովորական երևույթ

էր: «Ողջ Թուրքիան,- գրում է Տավերնին,- լի է ավագակներով, որոնք թափառում են խոշոր խնբերով և ճանապարհներին դարանակալում են հայ վաճառականներին: Եթե համովապում են հարուստ վաճառականներ, կողոպսում են նրանց, իսկ հաճախ զրկում են նաև կյանքից»: Ավագակներից բացի ապստամբ փաշաները, դերերեներն ու այանները ևս անիմա քայլամի էին ենթարկում իրենց սահմաններից անցնող առևտրական քարավանները: Գրիգոր Դարանադշին, օրինակ, հաղորդում է, որ էրգրումի Արագա փաշան 1624 թ. Սուամուվից վերաբարձոր յոր հարյուր ջուղայեցի վաճառականներին կողոպսելուց հետո ասում է նրանց: «Ինծ շատ պիտոյ է քան ծեզ, գնացէք նոր վաստակեցէք»: Գողությունը, ավագակությունը, կողոպսումն ու քայլանը այն աստիճանի տարածված երևուր էր Փոքր Ասիայում, որ անգլիացի ճանապարհորդ Պարրին այդ երկրամասն անվանում է «գողերի երկիր»: Ճետաքրքիր է նշել, որ Կոստանդ Զուղայեցին մեկ առ մեկ թվարկում է այդ բոլորը որպիս տեղեկատու նյուր հայ վաճառականների համար:

Նման պայմաններում ջուղայեցի խոժանները ստիպված էին առևտրական քարավաններ կազմելու և նրանց տեղաշարժերը ապահովելու գործը կազմակերպել ամենայն քայլամուրքյամբ: Նրանք մի վայրից մյուսը շարժվում էին կազմելով խոշոր քարավաններ: Զուղայեցի խոջա Սաֆար ամունով վաճառականին մի ֆրանսիացու կողմից ուղղված այն հարցին, թե հայ վաճառականները ինչպիս են իրենց մեծ քանակությամբ ապրանքները տեղափոխում դեպի Յնողկաստան, Ռումելի (Փոքր Ասիա), Արարատան և այլ երկրներ, քանի որ իրենց երկրում ծով ու նավագնացություն չկա, խոջա Սաֆարը պատասխանում է, որ խիստ հեշտ, քանի որ երբ շատ ապրանց է լինում, նրանք կազմում են քարավան, որն ունենում է իր «քյարլիանքաշին», «չավուշն», «թիանզին»: Նրանք իրենց ապրանքները բարձում են ուղտերի վրա, իսկ իրենք ծիերի վրա նստած իրրև մի քանակ շարժվում են առաջ, իջևանում են քարավանատներում, իրենց

հետ ունենում են ամեն տեսակի սննդամբերք, որտեղ որ կանգնում են, խփում են վրան և այլն:

Յուրաքանչյուր հայ խոջա հիանալի տիրապետում էր զենքի գործածությանը և անհրաժեշտության դնապում ի վիճակի էր իր գույքը պաշտպանել ավագակախմբերի հարձակումներից:

Իրենց առևտրական ուղևորությունները հեշտացնելու համար ջուղայեցի խոջաները կարիք ունեին զանազան տեղեկատուների, քարտեզների և այլն: Այդ նպատակով 1685 թ. կազմվում է Կոստանդ Զուղայեցու «Աշխարհաժողովը» կամ «Վասն նորահաս մամկանց եւ երիտասարդ վաճառականաց խրատ» աշխատությունը, որն իրենից ներկայացնում էր ուսումնական մի ծեռնարկ սկսնակ վաճառականների համար: Նրանում ընդարձակ տեղեկություններ էին տրվում տարբեր երկրներում գործածվող չափ ու կշիռների, դրամական միավորների և այլնի մասին: Անվարան կարելի է ասել, որ այն համեստանում է XVII դարում հանաշխարհային առևտուի և նրանում հայերի մասնակցության վերաբերյալ լավագույն սկզբնադրյուրներից մեկը:

Զուղայեցի հաջատութի որդի պարոն Պետրոսի ծախսով Անստերդամում տպագրված է 80 էջից բաղկացած մեկ այլ տեղեկատու գրքույկ, որտեղ հարուստ տեղեկատվություն է պարունակվում այն մասին, թե որ երկրում կամ քաղաքում ինչ է արտադրվում, որ երկրից է ծեռնոտու ու շահեկան ծեռք բերելու այս կամ այն ապրանքը և այլն:

(1695 թ. Անստերդամում թուվմա Վանանդեցու կողմից հրատարակվում է «Համատարած աշխարհացոյց» անունով քարտեզը, իսկ 1696 թ. այդ քարտեզի բացատրությունը կամ «Քանալին», որոնք նույնպիս նախատեսված էին հայ վաճառականների համար:)

Եվրոպան, Ասիան և Աֆրիկան չափող ջուղայեցի խոջաները ունեցել են նաև վաճառականական գքաղնունքի տեր մարդկանց հատուկ գործնական խառնվածքը: Նրանք իրենց ճանապարհորդությունների ժամանակ պահել են օրագրեր («դավ-

թար»), որտեղ մեկ առ մեկ գրամցվել են տարբերով անցնող առևտրական ճանապարհների հետ կապված մանրամասնությունները, չափերն ու կշիռները. Վաճառականներից զանձվող հարկատեսակները և այլն, որոնք պետք է ենթադրեն, իրենց գործընկերների կողմից օգտագործվել են որպես ուղեցույց:

Ինչպես նշվեց, թեև ջուղայեցի վաճառականներն առևտուր էին անում տարբեր երկրներուն արտադրվող ապրանքներով. սակայն երևելի խոցաները հիմնականուն մասնագիտացել են մետաղսի, մարդարտի, գոհարեղենի և «ազնիվ ցփսիների» վաճառքի մեջ: Դայտնի է. օրինակ, որ Շաֆուազ անունով ջուղայեցի մի վաճառական ոռուսական կոճս Օրլովին 400 հազար ռուբլի գումարով վաճառում է ժամանակին նաղիր շահի կողմից Շնդկաստանից բերված մի աղամանդ, որը հետագայում ստացել էր «Օրլովի աղամանդ» անվանումը: Շաֆուազն այդ աղամանդը կոնսին վաճառում է իր իրական արժեքից չափազանց ցածր գնով. խնդրելով, որ նրե կոճսը այն նվիրենլու է Եկատերինա Բ կայսրություն, վերջինս էլ իրեն մի ինչ-որ շնորհ անի: Եթո Օրլովը աղամանդը նվիրում է կայսրություն, վերջինս էլ Շաֆուազին շնորհում է ազնվականության տիտղոս:

Մեզ է հասել ջուղայեցի վաճառականների կողմից իրենց առևտրական գործունեությանը նվիրված չափած նկարագրություններ, որոնք եզակի աղբյուրներ են նրանց առևտուրի ծևերի. վաճառքի ապրանքների և այլնի մասին: Որպես նմուշ բերենք դրանցից մեկը, 1682 թ. ջուղայեցի մի վաճառական Վենետիկ է տառում գոհարեղեն, որտեղ չի անդիպելով «աջողակ քաղտի», այդ մասին չափած ծևով տրտնջում է.

«Ի թուականիս հազար հարիւր երեսուն մեկ էր Շայկազեան,  
Ալկամդարու ծովովն անցանք նաւովն եկանք Ֆրանկուտան,  
Տերն հասոյց Ալիկօնայ՝ ուր կուիշխէ գրանդու կան,  
Փոստով եկաք մեք Վաճառիկ՝ որ ժամանակն էր անառան,

Ունինք ալմազ եաղութ բաներ թերինք վասն վաճառականութեան,

Պատահեաց մեզ բասար բազար գինն պակաս կուգեն յեժան...»:

Նոր Զուղայի խոջաները վերականգնեցին նաև Կիլիկյան Հայաստանի ծովային առևտորի ավանդույթները: Նրանք իրենց ապրանքները բարձելով նվրոպական առևտորական նավերի վրա, կտրում անցնում էին Սիծերկլուական ծովը և մուտք էին գործում նորա ավազանի բազմաթիվ երկրներ: Դատկապես նվրոպական երկրներում նրանք փնտրում էին ավելի լայն ու հուսալի շուկաներ, ինչպես նաև գործումնության ապահով ու ազատ ասպարեզ: Նրանցից շատերը մշտապես հիմնավորվում էին նվրոպական երկրներում, նոր շունչ հաղորդելով այնտեղ խամրած հայ գաղրօջախներին: Ֆրանսիացի Տուրնըֆորը գրում էր, որ Պարսկաստանի խորթերից եկած հայ վաճառականները հիմնավորվում էին Լիվոնոյում, Սարսելում, Շոլանդիայի և Անգլիայի քաղաքներում և այլուր:

Ունեոր խոջաների արտագաղրը, որի հետևանքով երկիրը դատարկվում էր գործարար բնակչությունից, ցավով էր ընկալվում հայրենակիցների կողմից: Այդ զգացումը հիանալի պատկերված է հետևյալ տողերի մեջ.

«Ի հայրենեաց մըղեալ արտաք  
Առուտուրա շահավաստակ  
Ի Կենեսիկ եւ ի Գենուա,  
Եւ ի սահմանս առին ըգկայ  
Ի Դիրենիան եւ ի յԱտրիակ.  
Միմանց համդեպ ծովուց իշխանը,  
Յալիկունա Անքոն քաղաք  
Երամ երամ պանդիստականք,  
Բիւր աստ թիւր անդ բափառական

Կործանեցին ըգ՛Ջայաստան  
Եւ զԹորգոն իմ եւ Ազգանազ  
Վերածեցին ի թիւ նւազ»:

Սիցերկորածովյան առևտրի զարգացնանը գուգընթաց մեծանում էր նաև հայ նավատերերի թիվը: Մեզ են հասել մի շարք նավատեր հայերի անուններ՝ Զանդ, որի նավը կոչվում էր "Spirito Santo" («Սուրբ հոգի»), Չահումյաններ և Նուրիջյաններ, որոնց նավերն էին «Սուրբ խաչ» և «Տիրամայր Շնորհաց» ("Madonna della Grazia"), Ասլան Պողոս (նավը «Ս. Յովսենի»), Պետրոս Սիման (նավը "Galleria S. Giorgio"), Առաքել Գերարդյան (նավը «Տիրամայր խաղաղարար» ("Madonna della Pace") և այլն: Դատկապես մեծ հոչակ էին ծեղը թերել Լևանտի և Հոլանդիայի միջև առևտրական թեռնափոխադրումներով զբաղվող նորջուղայեցի նավատերերի "Coopman Van Armenien" (Դայաստանի վաճառական) և "Coopman Van Persien" (Պարսկաստանի վաճառական) նավերը:

Իրենց ապրանքները ծովահենների հարծակումներից ապահովելու համար, հայ նավատերերը Եվրոպական տերություններից վարձում էին ուազմանավեր, իրենց նավերին ուղեկցելու համար: Դայ խոջաների նավերին սպասարկող հոլանդական ուազմանավերից աղբյուրներում հիշատակվում է "Gelderland" ուազմանավը:

Եվրոպական շուկաներուն մրցակցային դաժան պայքարին դիմանալու համար խոջաները մշտապես ստիպված են եղել դրսերել ամօրինակ ճկունություն: Նրանք, օրինակ, Եվրոպացիների օրինակով միավորվել են առևտրական ընկերությունների մեջ, որոնցից հատկապես աչքի է ընկել «Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերությունը»: Նոր Զուղայի մեծահարուստ կաթոլիկ ընտանիքներից մեկը՝ Չահրիմանյանները ստեղծել էին առևտրական մի ընկերություն, որը 720 հազար դուկատ գումարով դրամական ավանդ ուներ Վենետիկի «Ա.

Մարկոս» կոչված բանկում: Ընկերությունը վարկեր՝ «մայա» էր տրանսպորտ միջազգային առևտորով գրադպող բազմաթիվ հայ վաճառակամների: Այն իր գրասենյակներն ու առևտրական ներկայացուցիչներն («սարքար») է ունեցել Եվրոպայի և Ասիայի համարյա բոլոր առևտրական կենտրոններում: Ընկերության ներկայացուցիչներ Սանվել և Անտվածատուր Շահրիմանյանները ծշտական բնակության համար տեղափոխվել են Եվրոպա, իրենց հետ տանելով երկու ճիշխոն դուկատի չափ դրամ:

(Զուղայեցի վաճառակամները ստեղծում էին նաև համատեղ առևտրական ընկերություններ Եվրոպացի իրենց գործընկերների հետ: Այսպես, 1623 թ. նրանց առաջարկով ստեղծվեց հայ-օթնովական «Արևելյան Հնդկաստանի առևտրական ընկերությունը», որի նպատակն էր ջննովական առևտրի գարգացումը Հնդկաստանի և Իրանի հետ:

(Նոր Զուղայում աշքի ընկնող առևտրական ընկերություններ են ունեցել նաև խոջա-Սինասենց, Աղազարյամների կամ Լազարյամների և այլոց ընտանիքները: Ինչպես հայ չներիմերը Թուրքիայում, Նոր Զուղայի խոջաները ևս գրադպում էին բանկային գործառնություններով, վարկատվությամբ, դրամափոխությամբ, վաշխառությամբ և այլն: Արևելքում անձի և գույքի անապահովության պայմաններում նրանք սովորաբար իրենց դրամները պահում էին Եվրոպական բանկերում: Զուղայեցիները, օրինակ, դրամական խոշոր ավանդներ ունեին Վենետիկի "Banco Dolfin" հայտնի դրամատանը:

Խոջաները հարկադրված են եղել յուրացնել Եվրոպայում գոյություն ունեցող առևտրի ձևերը, սովորել լեզուներ, ուսումնասիրել տեղական կենցաղն ու սովորույթները, ծանոթանալ Եվրոպայի շուկայական իրադրությանը, այդ շուկաներում արևելյան ապրանքների պահանջարկին, համագործակցության մեջ մտնել Եվրոպական առևտրական ընկերությունների ու վարկավորող հաստատությունների հետ և, վերջապես, կապեր հաստատել Եվրոպական պիտությունների կառավարող շրջանների հետ:

Դայտնի է, օրինակ, որ 1696 թ. Իննովենտիոս XII պապը Շահրիմանյամների ընտանիքին շնորհեց Հռոմի քաղաքացու պատվավոր կոչում, որը նրանց իրավունք էր տալիս ազատ առևտուր անելու Հռոմում և Անկոնայում: Էր հերթին Ավստրիայի կայսր Լեոպոլդ Ս Յաքարուրգը այդ ընտանիքին շնորհեց մի պարզեագիր, որով նրանց ճանաչեց որպես Ավստրիայի ազնվականության դասակից ու հավասար և նրանց ողջ գերդաստանին տվեց կոմսության տիտղոս՝ տոհմական գինանշան ունենալու իրավունքով:

Եվրոպայում ջուղայեցի վաճառականների վաղեմի առևտրական գործընկերներ են հանդիսացել Խոայիայի քաղաք-հանրապետությունները և առաջին հերթին Վենետիկի հանրապետությունը, Ֆրանսիան, Պոլանդիան, Անգլիան և այլն: Վենետիկի սենատը ընդունել էր մի շարք որոշումներ, որոնցով ջուղայեցի վաճառականներին հատկացվում էին գանազան արտոնություններ և իրավունքներ: Ի նշան երախտագիտության, 1693 թ. Մարդար Շահրիմանյանը երկու հարյուր հազար դուկատ գումարով փոխառություն էր հատկացրել Վենետիկի հանրապետությանը օսմանցիների դեմ պատերազմ մղելու համար:

Ջուղայեցի վաճառականներին դեռևս XVI դարից սկսած մի շարք արտոնություններ ու իրավունքներ էին հատկացրել նաև Թուսկանայի մերժինները, հատկապես մեծ հերցոգ Ֆերդինանդո Ա-ն: 1671 թ. Լիվոնոյում իրանական ավագ հյուպատոսի պաշտոն էր վարում Պետրոս անունով դափիանցի մի հայ: Սրան հաջորդել են նորքուղայեցի Գրիգոր Միրմանը (Գրիգոր Գերար) և իր ժառանգները, որոնք կողմաս Գ-ի ժամանակ ճանաչվեցին որպես իշխանազուն տոհմ: Մեզ է հասել երկու մեղալ, որվագված Գրիգոր Գերարի դիմաքանոնակով, որոշմված 1673 թ.: Այդ մեղալների մյուս երեսին պատկերված է «Գառն աստծոյ»: Ծայս կողմում մի առյուծ, որի մեջքից բարձրանում է արեգակը, իսկ ցածում մեղվի մի փերակ, դեպի որը շեշտակի ճնպում է մի մեղվապարս: Ենթադրվում է, որ այդ պատկերը մի այլարանություն

է աշխատանքի և ծավալուն գործունեության: Սակայն ավելի մոտ է այն ենթադրությունը, որ քանդակված մեղվի փերակի տակ պետք է տեսնել խոջա Գերազի մեծահարուստ որդիների գանձարանը, իսկ ի դեմս մեղուների պարսի՝ նրանց տասմյակ գործակատարներին, որոնք ուկու քակներով այդ գանձարանը լցնելու համար թափառում էին երկրից երկիր:

Այնքան շատ ջուղայեցիներ են հաստատված եղել Խոտալիայի Վենետիկ, Զենովա և Լիվոոնո քաղաքներում, որ Ստեփանոս արքեպիսկոպոս Ջուղայեցին իր 1688 թ. մի գրությունը վերնագրու է «Գիր օրինութեան աստուածաշն քաղաքացն Վենետիկ, Ալեկոռոնոյ և Զենովայ եղեալ քրիստոսասէր եւ քարեպաշտօն ջուղայեցի վաճառականաց, սիրելի և հարազատ եղբարց»: (1651 թ. թվագրված մի փաստաթղթում վենետիկյան իշխանությունները հայուարարում էին: «Ներկայունս արժմ միայն խրախուսել հայերի առևտուրը, նրանց տրամադրելով ամենալայն արտոնություններ»: Վենետիկի արքունի դիվանի այլնայլ հիշատակությունների մեջ ծերակույտի կողմից հայ ազգը անվանվում է «Երախտապարտ ազգ» (nazione Venetemaria), «քարյացապաշտ», «սիրելագույն», «հաճոյական», «օգտակար», «միշտ շահավոր», «քազմերախռո» և այլն: Ի նշան համակրության, Վենետիկի ծերակույտի կողմից շնորհված էր հրաման, որ հայերը համարձակ կարող են իրենց ապրանքները վաճառել Ա. Մարկոսի հրապարակում, առանց որևէ հարկ վճարելու: Վենետիկում այնքան մեծ է եղել ջուղայեցի վաճառականների թիվը, որ Ա. Մարիամ Ֆորմոզայի եկեղեցու կից փողոցը կոչվել է «Ջուղայի փողոց»:

Վերին աստիճանի ծավալուն էր նաև ջուղայեցի վաճառականների առևտուրը Ֆրանսիայի քաղաքների՝ Մարսելի, Նամստի, Տուլոնի, Բորդոյի, Լա-Ռոշելի և առևտրական այլ կենտրոնների հետ: Ծուտով հայ խոջաները դատնում են Ֆրանսիայի վաճառականների լուրջ մրցակիցներ: 1628 թ. Նոր Ջուղայի քայլանքար խոջա Նազարը կարողացավ ստանալ կապուչինյան

միարանության անդամ Պատղիֆիլի համաձայնությունը միջնորդելու Ֆրանսիական արքունիքի առօք, որպեսզի դադարեցվեն հայ խոջաների նկատմամբ գործադրվող հալածանքներն ու առևտրական սահմանափակումները: 1629 թ. նոյեմբերի 23-ին հրապարակվեց Լյուդովիկոս XIII-ի և կարողինալ Ռիշելյի հատուկ արտոնագիրը («պատենտ»), որով հայ վաճառականներին թույլատրվում էր ազատ ելք ու մուտք ունենալ Սարսելի նավահանգիստը: Ֆրանսիայի պետական քաղաքականության սամձերը իր ծեռքում պահող այդ կարողինալը ծրագրեր ուներ նաև հայ վաճառականներին բնակեցնելու Ֆրանսիայի առավել խոշոր քաղաքներում, որպեսզի նրանք անմիջականորեն զբաղվեն լեռնություններում: «Պատենտը» շնորհելիս կարողինալ Ռիշելյը առաջնորդում էր նաև գուտ քաղաքական նկատումներով: Նա Արևելքի երկրների քրիստոնյաներին հանարում էր ֆրանսիական քաղաքականության նեցուկ և ամեն կերպ աշխատում էր շահել նրանց համագործակցությունը, որպեսզի նրանց օգնությամբ Ֆրանսիան տարածի իր տնտեսական ու քաղաքական ազդեցությունը հատկապես Մերձավոր ու Միջին Արևելքում:

Լյուդովիկոս XIV-ի կառավարման շրջանում և (1643-1715) Ֆրանսիան խրախուսում էր քուղայեցի վաճառականների առևտության Սարսելի հետ: Այդ ուղղությամբ հատկապես մեծ ջանքեր էին գործադրում կարողինալ Շուլզի Մագարինին և ականավոր քաղաքական գործիչ Կոլբերը: Վերջինս Մարսելը հայտարարեց բաց նավահանգիստ («պորտ ֆրանկ»): Ազատ քաղաքներ հայտարարվեցին նաև Տուլոնը, Դյունկերկը, Բորդոն, Լա-Ռոշելը, Նամստը և այլն: Բացի այդ, Լյուդովիկոս XIV-ը 1687 թ. Զնյութենիայի ֆրանսիական հյուպատոսին հրամայեց, որպեսզի հայ վաճառականներին հատուկ հովանավորություն գույց տրվի, ինչպես նաև թույլատրեց, որ հայերը Ֆրանսիայի հարավային նավահանգիստներում բաց անեն առևտրական տներ:

Դայ խոջաների նկատմամբ ֆրանսիական կառավարության հովանավորողական քաղաքականության հիմնական պատճառն այն էր, որ Փարիզում նկել էին այն համոզման, որ իրենց արևելյան, մասնավորապես իրանական առևտուի հաջողությունը քացառապես կախված է հայ վաճառականների համագործակցությունից և նրանց բարի կամեցողությունից:

Ի դեպ, Կոլըերը սկսեց խրախուսել նաև Մարսելի հայ գրատպությունը: Լյուտովիկոս XIV-ի 1669 թ. հրամանագրով, հայերին իրավունք շնորհվեց Սարսելում, Լիոնում և այլ քաղաքներուն հիմնադրել տպարաններ և հայերեն լեզվով հրատարակել ամեն տեսակի գրքեր: Սակայն տաս տարի գործելուց հետո Դոլմի հավատաքննության գործադրության «ջանքերի» շնորհիվ 1683 թ. Մարսելի տպարանը փակվեց: Դայնորի պաշտպանության օգտին հանդես եկան փարիզյան հայտնի անձնավորություններ: Ի վերջո, գործին միջամտեց նաև բազավորը Լյուտովիկոս XIV-ը, որը հրամանագիր հրապարակեց տպարանի իրավունքները լրիվ վերականգնելու մասին:

Դայտնի է, որ հայերը Մոսկովյան պետության հետ առևտուր էին անում նրա կողմից Վոլգա-Կասպյան ճանապարհը ծնոց բեռնուց դեռ շատ առաջ: Իվան Ահեղի կողմից Ղազանի (1552 թ.) և Աստրախանի (1556 թ.) խանությունների նվաճումից անմիջապես հետո հայ վաճառականները եռամդուն փորձեր են անում վերականգնելու Մոսկովյան պետության հետ իրենց ունեցած հնամենի առևտրական արտօնությունները և վերսկսելու առևտուրը Ուլսաստանի հետ: Իվան Դ-ն բավարարում է նրանց խնդրանքը: Դժբախտաբար, 1626 թ. Մոսկվայում բռնկած հրդեհի ժամանակ արխիվային բոլոր նյութերը այրվել են և այդ պատճառով XVII դարի առաջին քառորդի հայ-ռուսական հառաբերությունների, այդ բոլոր նաև առևտուի մասին, մենք համարյա նյութեր չունենք: Մի քան սակայն ակնհայտ է, որ հայերի առևտրական կամքնը Ուլսաստանի հետ երբեք չեն դադարել և այդ գործում դարձյալ նախաձեռնությունը պատկանել է նորջու-

ղայեցիներին: Դայտնի է, օրինակ, որ 1647 թ. մարտի 14-ին նոր ջուղայնցի վաճառական Ի. Թավաքաբայանը դիմում է Ալեքսեյ Սիհիսայլովիչ ցարին խնդրելով իրեն տրամադրել արտօնագիր Ուժաստանում ազատ առևտուր ամելյու վերաբերյալ! Խոկ 1660 թ. Նոր Զուղայից Մոսկվա է ժամանում խոջա Զաքար Շահրիմանյանը իրեն ուղեկցող ինը անվանի հայ վաճառականների հետ: Նա Ալեքսեյ Սիհիսայլովիչ ցարին նվիրեց Զուղայի հայ վարպետների կողմից պատրաստված նշանավոր «աղամանյա գահը», որի ուսկյա մասերի վրա ընդելուգված էին 876 աղամանդ, 1 լալ, 1223 հակինք, երեք շարք մարգարիտներով պատկերված հրեշտակներ: Նվերների բվում էին նաև գուղահայ հայտնի նկարիչ Թանդրիվերանի (հետագայում Մոսկվա տեղափոխվելուց հետո ուստանական միջավայրում նա հայտնի էր որպես սրբապատկերների հոչակված նկարիչ Իվան կամ Բոգդան Սալբանով անունով) նկարած «Խորհրդավոր ընթրիթ» նկարը, մեկ ուսկն մատանի, այլևայլ բանեկարծեք բաժակներ, ազնիվ ընպելիքներ, օճանելիքներ և այլն: Մոսկվայում տեղի ունեցան բանակցություններ ուստական պետական բարձրաստիճան պաշտոններության հետ Ուստաստանում ջուղահայ առևտրականների գործունեության ընդարձակման հարցի շուրջ: Այդ բանակցությունների ժամանակ խոջա Զաքարն աշխատում էր ամեն կնոպ ցուցադրել իր համակրանքը ցարի «քրիստոնեական մեծ տիրակալի նկատմամբ»:

1666 թ. փետրվարին կրկին Մոսկվա են ժամանում նորջուղայնցիներ Ստեփան Ռամադանսկին (Ստեփան Մովսիսյան Ռամադանով) և Գրիգոր Լուսիկովը (Գրիգոր Մատթեոսյան Կուսիկյան կամ Լուսիկենց), որոնց ուղեկցում էին 40 հայ վաճառականներ և արիեստավորներ: «Պոսոլսկի պլիկագի» Ուստաստանի արտաքին գործերով գրադվոր գերատեսչության դեկանար Աֆանասի Օրդին-Նաշչուկինի հետ բանակցություններից հետո Ալեքսեյ Սիհիսայլովիչ ցարը 1667 թ. մայիսի 31-ին «Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերությանը» տալիս է մի շնորհագիր,

որը փաստորեն ծեռք թերեց առևտրական պայմանագրի նշանակություն: Այդ շնորհագիրը իր նշանակությամբ նաև հավասարագոր էր Ռուսաստանի և Իրանի միջև առևտրական պայմանագրի: Նրանով հայ վաճառականները պարտավորվում էին իրանական ողջ հում-մետաքսը արտահանել Ռուսաստան և նրա վլայով արևմտանվրուպական նրկրներ: Խոչանները ստանում էին Ռուսաստանում ազատ տեղաշարժվելու, մուտքի և ելքի, ինչպես նաև մետաքսը առանց մաքսատուրքեր վճարելու Ռուսաստան ներմուծելու իրավունք: Ապրանքը Ռուսաստանում չվաճառվելու դեպքում խոչանները ստանում էին այն Ռուսաստանի վրայով Եվրոպա արտահանելու արտոնություն:

1667 թ. ջուղայեցիների կնքած պայմանագիրը դարձավ Մոսկվյան պետության հետ հայերի ծավալած առևտրատնտեսական ու քաղաքական հարաբերությունների հիմքը: Այսուհետև Ռուսաստանի հետ իրանահայ և Թուրքահայ վաճառականների պատահական կապերը փոխարինվեցին առևտրական ամուր, տևական ու ծավալում հարաբերություններով: Ռուսական կառավարությունը երկրի արևելյան առևտրի նշանակալից մասը հանձնարարեց հայ վաճառականներին:

1673 թ. փետրվարի 7-ին ռուսական կառավարությամ և «Նոր Ջուղայի հայկական առևտրական ընկերության» միջև կնքվեց նոր առևտրական պայմանագիր, որի հետևանքով այդ ընկերության հայ վաճառականները ռուսական քաղաքների Արևանգելսկի, Նովգորոդի, Նարվայի և այլն վրայով առևտրական լայն հարաբերություններ ծավալեցին Արևմտյան Եվրոպայի երկրների Ըվեղիայի, Դոլանդիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Դամիայի, Գերմանիայի, Իտալիայի, ինչպես նաև Մերձբալթյան ու Արևելյան Եվրոպայի երկրների հետ: Այդ առևտուրը շարունակվեց նաև XVIII դարում: 1697 թ. Պյոտր I-ը հրապարակեց անվանական հրամանագիր հայ վաճառականներին ամեն տեսակի աջակցությում ցուց տալու մասին: Ենտաքրքիր է նշել, որ երբ 1689 թ. ռուսական կառավարությունը բոլոր արևելյան վաճա-

ռականներին արգելեց Ռուսաստանի վրայով առևտուր անել արևմտանվրոպական երկրների հետ, բացառություն արվեց միայն «Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերության» անդամների համար:

Պատմական իրողություն է, որ ջուղայեցի հայ վաճառականների նախաձեռնությամբ և շնորհիվ նրանց գործադրած եռանդուն ջանքերի, Կասպ-Վոլգյան առևտրական ճանապարհը ծեռք թերեց միջազգային առևտրական ուղղու նշանակություն և Ռուսաստանը հնարավորությունների մեջ մտնել Իրանի, Անդրկովկասի և նրանց վրայով նաև Արևելքի երկրների հետ: Պյուտր Ա-ի արևելյան քաղաքականության ընդհանուր խնդիրների մեջ կարևորագույն նպատակներից մեկն էր հայերի միջոցով Արևելքի երկրների, հատկապես Իրանի և Հնդկաստանի հետ առևտրական հարաբերությունների զարգացումը: Սասնավորապես, Պետերբուրգի հիմնադրումից հետո կայսրը ձգտում էր, որ մետաքսի ու արևելյան այլ ապրանքների տարանցիկ առևտուրը Արևմուտքի հետ իրագործվի իր նորաստեղծ մայրաքաղաքի վրայով: Դենց այդ նպատակով, 1708 թ. մարտի 11-ին Պյուտր Ա-ը նորօդայեցի վաճառական Սաֆար Բարսեղյանին հատկացնում է մի շարք առանձնաշնորհումներ: Խոկ 1711 թ. մարտի 2-ին հատուկ իրամանագրով Պյուտր Ա-ը կարգադրում էր խստորեն պահպանել «Նոր Զուղայի հայկական առևտրական ընկերության» հետ Ռուսաստանի կնքած պայմանագրերը: Քիչ ավելի ուշ, 1719 թ. հունիսի 6-ին կայսրը իրապարակում է մի նոր իրովարտակ, որով Նոր Զուղայի և Աստրախանի հայ վաճառականներին իրավունք էր տրվում հավասարապես օգտվել այն բոլոր իրավունքներից, որից օգտվում էին այլ երկրների վաճառականները: Ի լրացումն այդ բոլորի, 1723 թ. հունիսի 3-ին Պյուտր Ա-ը իրապարակեց մի նոր իրովարտակ Ռուսաստանի հետ ջուղայեցիների ազատ առևտրի վերաբերյալ: Այնուհետև նշվում էր, որ ռուսաց կայսրը պատրաստ էր հայ վաճառական-

Ներին շնորհել նաև Ռուսաստանի հպատակություն։ Այդ հրովարտակի հրապարակումից հետո Նոր Չուղայի քազմաքիչ երևելի վաճառականներ դիմեցին ռուսական հպատակություն ստանալու համար և իրենց ընտանիքներով տեղափոխվեցին Ստորախան և այլ վայրեր։

ճանապարհորդելով Ֆրանսիայում, Պյոտրը զարմացել էր տեսնելով Լիոնում և այլ քաղաքներում մետաքսյա գործվածքների արտադրությունը։ Նրա ցանկությանը, Ռուսաստանում ևս կազմակերպելու մետաքսյա գործվածքների արտադրություն, առաջինը արձագանքել են նորօրուղայեցի խոշաները։ Նրանց ջանքներով 1710 թ. հիմնադրվում է ռուսական մետաքսագործության առաջնեկը՝ մետաքսի գործարանը Թերք քաղաքում։ 1736 թ. օգոստոսի 23-ին Պյոտր Բ-ը հրովարտակ է իշեցնում նորօրուղայեցի Ավետ Կորուսյանի անունով, նրան իրավունք տալով Աստրախանում կառուցելու մահուլի գործարան։ Իսկ 1855 թ. ապրիլի 2-ին Ելիզավետա Պետրովնա կայսրությին հատուկ հրովարտակով ջուղայեցի վաճառականներին իրավունք էր շնորհում առանց մաքսի մետաքս ներմուծել Ռուսաստան։ Նշված հրովարտակում հիշատակվություն կա այն մասին, որ ժամանակին Պյոտր Ա-ը ջուղայեցի Խնմառոս Շահրիմանյանին իրավունք է տվել Սոսկվայում կառուցելու մետաքսի կամ մահուլի գործարան։

Աստրախանում առևտրական ֆակտորիաներ ստեղծած ջուղայեցի վաճառականները տարրեր երկրներից Ռուսաստան ապրանքներ տեղափոխելու համար ունեցել են նաև իրենց սեփական ծովային և գետային նավերը։ Ռուսաստանի Պետական սենատը 1769 թ. նոյեմբերի 19-ին որոշում է կայացնում «քույլ տալ Աստրախանի հայերին կառուցելու ծովային նավեր կասպից ծովի վրայով ապրանքներ տեղափոխելու համար»։

Նոր Չուղայի վաճառականները առևտրատնտեսական սերտ հարաբերություններ են ունեցել նաև Յնոկաստանի, Յեռավոր Արևելքի և Յարավ-Արևելյան Ասիայի երկրների հետ։ Դեռևս Յն-

կաստանում Սեծ Մողոլների դիմաստիայի թագավոր Զալալուր-դին Աքքարը (1556-1605) ցանկանալով գարկ տալ իր պետության մեջ ներքին ու արտաքին առևտրին, հայ վաճառականներին հասկացրեց մի շարք իրավունքներ և արտոնություններ, ընդհուպ մինչև թույլտվություն մտնելու Յնողկաստանի այնպիսի շրջաններ, ուր արգելված էր օտարենրկուացիների նուտքը: Օգտվելով այդ առանձնաշնորհումներից, հայ վաճառականները Յնողկաստանի բազմաթիվ քաղաքներուն հիմնեցին առևտրական հաստատություններ, կազմեցին առևտրական գաղութներ և այլն: Կոստանդ Զուղայեցու «Աշխարհաժողովում» բերվում են Յնողկաստանի 30 քաղաքների անվանումներ, որտեղ կային հայ գաղթօջախներ կամ բնակվում էին հայեր:

Մինչև Յնողկաստան տանող ծովային ճանապարհի հայտնագործումը, Արևմուտքի երկրների վաճառականները Յնողկաստանի հետ առևտուր էին անում հիմնականում արևների, այդ թվում նաև հայ վաճառականների միջոցով: Սակայն այդ միջնորդավորված առևտրից օգտվելը բնակ ծեռնտու չէր նրանց: Նենց այդ հանգամանքը նշանակալիորեն արագացրեց Յնողկաստան տանող ծովային ճանապարհների որոնումները:

Նոր Զուղայի վաճառականները ակտիվորեն ներգրավվեցին նաև Պարսից ծոցի վրայով Յնողկաստանի հետ առևտրի մեջ: Զուղայեցի վաճառականներին մեծապես հետաքրքրում էր նաև հենց Պարսից ծոցի ավագանի երկրների հարստությունները և առևտրական հնարավորությունները: Այդ կողմներում կար մեծ քանակությամբ մարգարիտ, գորշ համապար, զմրուխտ, կարմիր հալիքներ, շափյուղա և այլ բանկարժեք քարեր: Տեղեկություններ կան, որ այդ հանքերը կապալով շահագործողների թվում կային նաև մեծ թվով իրանահայեր: Պարսից ծոցի ավագանից ջուղայեցի խոջաները դեպի Լևանտ և Եվրոպական երկրներ էին արտահանում նաև զանազան համեմունքներ, մուշկ, ինչպես նևս տեղական արտադրության զանազան ապրանքներ:

Ներգրավվելով Հնդկաստանի հետ ծովային առևտորի մեջ, ջուղայեցի վաճառականները համահավասար օգտվում էին նաև Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհներից: Նրանց կասպից ծովով գնում էին խորասան, այնտեղից քարավաններով մեկնում էին Պանդահար և Թարու, իսկ այնուհետև Պելի: Այսպիսով, ջուղայեցի խոջաները հանդիսանում էին Ասանտի նրկրները Հնդկաստանի հետ կապող օդակ:

Իրանա-հնդկական ծովային առևտորի հիմնական կենտրոններն էին Պարսից ծոցի Բենդեր-Աբբաս, Բենդեր-Բուշիր, Հնդկաստանի արևմտյան ծովափին գտնվող Սուրաբ նավահանգիստները, որոնց միջև կամոնավոր նրբնեկում էին ջուղայեցի վաճառականների առևտրական նավերը: Առավել խոշոր խոջաների տրամադրության տակ կային նաև օվկիանոսային նավեր, որոնցից մի քանիսի անունը հասել է մեզ՝ «Ա. Միջայել», «Խոլուել», «Ասանտա Կրուգ» և այլն:

Տեղեկություններ կամ, որ մեծահարուստ խոջաների մեջ կային մարողիկ, որոնք հանդիսանում էին իրենց սեփական նավերի նավավարները: Դրանցից էին, օրինակ, Հնդկաստանում խոշոր վաճառականի համբավ ծեղը թերած Շովհան և Շովսեփ Մարգարյանները, որոնք արևմտյան աշխարհում հայտնի էին Զոն և Չոզեֆ Դա-Սարկ կամ Դեմարկորա անունով:

Ծովային թռնափոխադրումներ կատարելիս ջուղայեցի վաճառականները հաճախ օգտվում էին նաև Պարսից ծոցի և Հնդկաստանի միջև նրբնեկող անգլիական, արաբական, մասամբ նաև հոլանդական նավերից:

Զուղայեցի խոջաների առևտրական նավատորմը քաղկացած էր մեծ մասամբ ոչ մեծ առագաստանավերից, որոնք վերին աստիճանի շարժումնակ էին, արագընթաց և ունենին բավարար թռնատարողություն: Նկատի ունենալով նման նավերի շահավետությունը, բրիտանական Օստ-Հնդկական ընկերության դեկավարները իրենց աշխատակիցներին հանձնարարում էին վաճառել այդ ընկերության տրամադրության տակ եղած խոշոր նավե-

որևէ մոտիկ տարածություններում թեռնափոխադրումներն իրականացնել ավելի քիչ ծախսատար հայերին պատկանող նավերով:

Ի դեպ, պետականության բացակայության պայմաններում, զուրկ լինելով ազգային դրոշից, հայ նավատերերը ստեղծել էին իրենց կարմիր-դեղին-կարմիր գույնի դրոշը, որի վրա պատկերված էր գառնուկ:

Չուդայեցի վաճառականները չեին սահմանափակվում լոկ Դնդկաստանի ծովափնյա քաղաքների առևտորով: Գանգես գետի վրայով նավերով նրանք թափանցում էին երկողի խորքերը: Ա. Ալպոյաճյանը իրավացի է, երբ նկատում է, որ Դնդկաստանում «Եվրոպացից հայ վաճառականի ոտքին հետքերուն հետևելով է, որ միայն կրցած են առաջանալ»:

Ակադեմիական շրջանում բրիտանական Օստ-Դնդկական ընկերությունը, որը XVII դարի առաջին կեսին դեռևս հետու էր Արևելքում, այդ թվում նաև հնդկական շուկայում, մենաշնորհային դիրք ունենալուց, ստիպված էր հաշվի նստել Դնդկաստանի տեղական վաճառականների, այդ թվում նաև հայերի հետ: Ծանոթ չլինելով տնօրական լեզուներին, հնչած նաև առևտորի մերողներին, որոնք այնքան տարրերվում էին Եվրոպականից, անզիացիները սկզբնական շրջանում ստիպված էին առևտուր անել տեղական միջնորդների միջոցով: Օստ-Դնդկական ընկերությունն աշխատում էր ջուդայեցի վաճառականների միջոցով տեղեկանալ ոչ միայն Դնդկաստանի, այլև նրա հարևան երկրների առևտորական իրադրությանը: Խզուր չէ, որ ընկերությունը իր ծառայողներին խորհուրդ էր տալիս ուսումնասիրել պարսկերեն և հայերեն լեզուները հայերի առևտորի մերողների հետ ծանրանալու համար:

Օստ-Դնդկական ընկերության դեկավարությունը օգտվում էր նաև հայերի ծառայություններից տեղական իշխանությունների հետ կապեր հաստատելու համար: Այսպիս, 1651 թ. ընկերությունը մի դեսպանություն ուղարկեց շահ Զահանի մետ Բենգա-

լիայում առևտրական արտոնություններ ծեռք բերելու համար: Այդ դեսպանության ղեկավարն էր ջուղայիցի վաճառական խորա Սարհաղը: Բանակցությունների հետևանքով շահը անգիտացիներին իրավունք տվեց հաստատվել այն վայրում, ուր հետագայում հիմնադրվեց Կալկարա քաղաքը:

1688 թ. հունիսի 22-ին Սուրաբ քաղաքում բրիտանական Օստ-Հնդկական ընկերության և Յնդկաստանում առևտուր անող ջուղայիցի վաճառականների միջև ստորագրվեց մի պայմանագիր: Անգլիացիների կողմից այն ստորագրեցին Օստ-Յնդկական ընկերության նախագահներ Բենջամին Բաթըրսթը և Շոշուա Չայլդը, ինչպես նաև ընկերության քարծրագույն վարչության անդամներ, իսկ ջուղայիցի վաճառականների կողմից նրանց ներկայացուցիչ խոժա Փանոս Ֆալանքարը: Ի նշան երախտագիտության, նույն օրը ընկերությունը խոժա Փանոսին հատկացրեց թանկարժեք քարերի առևտուրի մենաշնորհը:

Պայմանագրին կից իրապարակված Օստ-Յնդկական ընկերության խարսխայում ջուղայիցի վաճառականներին տրամադրվում էին չափազանց լայն իրավունքներ և արտոնություններ: Նախ նրանց ստանում էին բրիտանական հպատակներին համահավասար իրավունքներ, այդ թվում նաև քաղաքացիական պաշտոններ գրադեցնելու քնազավառում: Նրանց վրա էին տարածվում նաև այն բոլոր արտոնությունները, որոնցից օգտվում էին եվրոպական վաճառականները:

Դայերին ազատ իրավունք էր տրվում բնակվել Օստ-Յնդկական ընկերության իրավասության տակ գտնվող ցանկացած քաղաքում, ավանում, թերդում, ծեռք թերել կալվածքներ և տներ, շարժական ու անշարժ գույք, վայելել հավատի ու դավանանքի կատարյալ ազատություն, ընտրվել քաղաքական պաշտոններում և այլն: Դարձերն ու տուրքերը ջուղայիցիների համար սահմանվում էին նույնքան, որքան անգլիացիների համար: Պայմանագրում նշվում էր, որ եթե ընկերության որևէ պաշտոնատար անձ, այդ թվում նաև նահանգապետը, խախտի պայմա-

նազրի վերոհիշյալ կետերը, կամ խանգարի հայերին տրված արտօնությունների և իրավունքների իրականացնանք, նա պետք է պատճեն ընդհուպ մինչև պաշտոնից հեռացումը:

Սնգլիացիների համար ամենակարևոր պայմանագրի վերջին հոդվածն էր, որտեղ ասվում էր. «... Նախկինում հայերը հնդկական ապրանքների հիմնական մասը արտահանում էին ցամաքային տարանցիկ ճանապարհով Իրանից և Արարիայից Թուրքիա: Այսուհետև նրանք համաձայնություն են տալիս իրենց բոլոր ապրանքները արտահանել անգլիական ճանապարհով» (այսինքն Աֆրիկայի շուրջը ժովային ճանապարհով Վ. Բ.): Ընդ որում, ջուղայեցի վաճառականները պարտավորվում էին իրենց ապրանքները արտահանել քաջառական անգլիական նավերով և ոչ մի դեպքում չօգտվել հոլանդական և արաբական նավերից:

Այսպիսով, 1688թ. պայմանագիրը ջուղայեցի վաճառականներին հնարավորություն էր տալիս ոչ միայն օգտվել քրիստոնական իշխանությունների հգոր հովանավորությունից, այլև իրենց առևտորի իրականացման համար օգտագործել անգլիացիներին պատկանող նավահանգիստները, պահեստային կառուցները, բենափոխադրումներն իրականացնել անգլիական նավերով, հետևաբար նաև ապահովագրել իրենց ժովահենների հարձակումներից:

1691 թ. Օստ-Հնդկական ընկերության Լոնդոնի կենտրոնը հրահանգում էր Հնդկաստանում իր ներկայացուցիչներին ընկերության կողմը «ներգրավել հայերին, այդ փորձառու վաճառականներին, որոնք այնքան շատ են նպաստել Հնդկաստանում, Իրանում և ողջ Ասիայում առևտորի գարգացմանը: Մաղրասում նրանց տրամադրել հատուկ քաղանաս, որտեսդ նրանք կառողանային ապղել ինչպես իրենք են ցանկանում և կառուցեն եկեղեցի: Այդ քաղանասը կարելի էր անվանել Զուլա, շահ Աքրասի օրինակով, որը նրանց գաղթեցրեց Սպահան: Այդ հայերը հարուստ ժողովուրդ են և հանգիստանում են երկրագնդի վրա ամենափորձառու վաճառականները»:

Օստ-Դնդկական ընկերության Դիրեկտորների խորհրդի 1695 թ. սեպտեմբերի 13-ի հաղորդագրության մեջ նշվում էր, որ ընկերությունը խոշոր վճասներ է կրել միայն այն պատճառով, որ նրա գործակալները փորձել են Մուլթանում և Սինդում հաստատել առևտրական կապեր՝ շրջանցելով հայ վաճառականներին:

XVII դարում Դնդկաստանը մի հսկայական հենակետ էր, որի վրայով հայ վաճառականները առևտուր էին անում նաև Շինաստանի, Հարավ-Արևելյան Ասիայի, Կենտրոնական Ասիայի, Դեռավոր Արևելքի երկրների, Խաղաղ և Դնդկական օվկիանոսների կղզիների հետ և այլն: Նրանք հատկապես աշխույժ առևտրափոխանակություն ունեին Բիրմայի, Սիամի, Տիբերի (հայ և եղողական մի շարք աղբյուրներում Տիբերը հիշատակվում է Բութանու անվանումով), Ինդոնեզիայի, Նեպալի, Ֆիլիպինների, Սալայան արշիպելագի և բազմաթիվ այլ երկրների հետ:

Ի դեպ, XVII դարում հայ վաճառականների համար ամեայտ աշխարհամաս չէր նաև Աֆրիկան: Միջազգային առևտրով գրադպուդ խոջաները հատկապես հաճախ են այցելել Երովոյիա (Բարեխատան), Նուբիա, Սոււդան և Սահարայի վրայով անցնելով Աֆրիկայի հյուսիսային շրջանները (Սաղրիթի երկրներ), հասել մինչև Զիրլարքար:

XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին ասիական երկրներում տեղի ունեցած քաղաքական և սոցիալական բնույթի տեղաշարժերը բացասական ազդեցություն ունեցան աշխարհի տարրեր ծագերում ցրված հայ գաղթօջախների, այդ թվում նաև Նոր Ֆուդայի ճակատագրի վրա, որի հետևանքով անկում ապրեց նաև հայ վաճառականությունը, փակելով խոջայական կապիտալի պատմության երթնմի փառավոր էթերը:

## ՆՈՐ ԶՈՒՐԱԾ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱՌՈՒԴԻՆԵՐՈՒՄ

1629 թ. շահ Արքաս Ա-ի մահվանից հետո սեֆյան զակը ժառանգեց նորա թոռը՝ շահ Սեֆի Ա-ն (1629-1642), որի օրոք Նոր Զուրան շարունակում էր օգտվել Արքաս Ա-ի հատկացրած արտօնություններից ու իրավունքներից: Զնոպիլ իիշատակարաններում այդ ժամանակաշրջանի մասին նշվում է, որ Նոր Զուրայի և առհասարակ Իրանի հայությունը ապրում էր խաղաղության պայմաններում: Իշխանության գալուց անմիջապես հետո նոր շահը հրապարակեց ֆիրման հում-օնտաքսի պետական մեմաշնորհը վերացնելու մասին, որը հավանաբար չէր արդարացնում իրեն: Դա անխուսափելիորեն փոխելու էր ջուրայեցի վաճառականների կարգավիճակը, քանի որ նրանք դադարում էին արգունի հում-մետաքսի արտահանման գծով շահի պաշտոնական առևտորական գործակալներ կամ «թաջիր-ե խասս-ե շերիֆե» վաճառականներ լինելու հանգամանքից: Ուստի խոչաները սկսեցին հում-մետաքսն արտահանել սեփիական նախաձեռնությամբ, այն ձեռք բերելով անմիջական արտադրողներից և արտահանելով որպես սեփիական ապրանք: Չոլանդական և անգլիական Օստ-Հնդկական ընկերությունները փորձեցին մենաշնորհացնել Իրանի ողջ արտաքին առևտություն և դուրս մղել տեղական մրցակիցներին, որը սակայն նրանց չհաջողվեց, որովհետև իրանական ապրանքների արտահանման մեծագույն ճասա իրականացվում էր ոչ թե ծովային, այլ քուրքական ցամաքային քարավանային ճանապարհներով, որտեղ նախկինի պես տիրապետում էին հայ վաճառականները: Գարդիել Շինոնը վկայում է, որ հետևելով իր պատի օրինակին, Սեֆի Ա-ը որոշեց օգտագործել ջուրայեցի խոջաների փորձն ու առևտորական լայն կապերը երկրից հում-մետաքսն արտահանելու համար: 1633 թ. նա հրապարակեց մի հրամանագիր, որտեղ հրամայում էր նահանգների կառավարիչներին ջուրայեցի վաճառականներին

ցուցաբերել ամեն տեսակի աջակցություն և ոչ մի դեպքում նրանցից չգանձել մաքսատուրքեր:

Դարձյալ հետևելով իր պապի օրինակին, Սեֆի Ա-ը ջուղայեցի խոջաներին դիվանագիտական տարրեր հանձնարարություններով ուղարկում էր մի շարք երկրներ ռազմա-քաղաքական ու առատրա-տնտեսական քնութիւն բանակցություններ վարելու համար: Մասնակուրապես նա Կիրակոս և Ավետ Խաչիկյան եղբայրներին որպես պարսից պետության դեսպաններ ուղարկեց Ֆրանսիա, Անգլիա, Շոլանդիա, Օսմանյան կայսրություն և Շնողկաստան: Նրանց անունով տրված շահական հրովարտակում նշվում էր, որ «տիեզերատարած» բազավորի դեսպանները «կայսերական նշանի ասպետներ են», ուստի հարկ է նրանց ցուցաբերել ամեն տեսակի օգնություն և աջակցություն:

Կայրենսյամների միարամության անդամ Ֆրա Թիմասը 1629թ. Սպահանից Շոռն գրած տեղեկատվության մեջ հայտնում էր, որ Սեֆի Ա-ը ևս բարյացական է տրամադրված Զուղայի հայերի նկատմամբ և հաճախ այցելում է խոջա Նազարի և այլ Երևանիների տները նրանց հետ ճաշելու:

1642թ. Սեֆի Ա-ի մահվանից հետո զահ բարձրացավ նրա որդի Արքա Բ-ն (1642-1666), որը հայտնի է նաև շահ Արքա Փոքր անունով: Արա օրոք Սեֆյան պետությունը գեր արտաքուստ դեռևս ապրում էր վերնըթի շրջան: 1650թ. նոր շահը հրապարակեց մի հրովարտակ այն մասին, որպեսզի մահմեղականները չմիջանտնն Զուղայի հայերի դատական հարցերին և շարիաթական օրենքը պատրվակ չդարձնեն նրանց նեղելու համար: Հիշյալ հրովարտակով հայերին բույլատրվում էր իրենց միջև ծագած վեճերը հարթել հայ հոգևորականների միջոցով և միայն կողմերից մեկը մահմեղական լինելու դեպքում անպայման դիմել իսլամական դատական ատյանին շարին:

Այդ նույն 1650թ. Արքա Բ-ն հրամայեց Սպահամում պարսիկ բնակչության հետ խաղը քնակվող հայերին տեղափոխվել Նոր Զուղա, որոնք հիմք դրեցին «Երևան» և «Թավրիզ» անունով նոր

քաղամասերին: Այդ միջոցառման պաշտոնական քացատրությունն այն էր, որ քանի դեռ հայերը խաօք բնակվում են այլաղավանների հետ, հմարավոր չէ իրագործել շահի հրամանը Սպահանում գինու վաճառքը խստիվ արգելելու մասին: Սահմեջականները շահի մոտ ամրաստանել էին հայերին, թե «նոքա գինարքու ազգ են և հանապազ գինեաւ պղծեն զօուրն»: Դիշյալ միջոցառման հետևանքով Նոր Զուղան ընդարձակվեց դեպի արևամուտք: Այդ իրադարձության առիվ գրված հիշատակարանուն ասվում է «կարողութեամբն Աստուծոյ աստ շինեցար տունս գեղեցիկս՝ այգիս և պարտես և քուղաստանս ազգի ծաղկանց...»:

Առհասարակ պետք է նշել, որ տարիների ընթացքում Նոր Զուղան իր սահմաններով ծավալվում ու ընդարձակվում էր: Եթե այն հիմնադրվելու ժամանակ նրա բնակչությունը, առանձին քացառություններով, միայն հին ջուղայեցիներն էին, ապա հետագայում այն դարձավ Իրան գաղթեցված և հիմնականում առևտուրով գրադարձության բնակավայր, մի տեսակ գուտառևառական քաղաք:

Հակ Աբբաս Բ-ի օրոք ջուղայեցի խոջաների առևտուրը դեռևս շարունակում էր ծաղկում ասպել: Դրան մեծապես նպաստող հանգամանքներից էր այն, որ 1639 թ. Բարե-Շիրինի թուրք-իրանական պայմանագրի ստորագրումից հետո օսմանյան կառավարությունը արդյունավետ սիրոցներ էր ճենարկել Փոքր Ասիայի տարածքով առևտուրական քարավանների երթևեկությունը անվտանգ դարձնելու համար: Ընդ որում, օսմանյան գանձարանի հասույթները ավելացնելու նպատակով Իրանի հայ վաճառականների առևտուրը սկսեցին հովանավորել նաև քուրքական իշխանությունները:

XVII դարի կեսերին Նոր Զուղայի ամենաաշքի ընկնող խոջայական գերդաստաններն էին. Սարֆրազյանները կամ Շափոազյանները, որոնք սերել էին խոջա Նազարից, Եղիազարյանները կամ Նազարեթյանները, որոնք հանդիսանում էին հետագայում

Ուսաստան տեղափոխված հայտնի Լազարյանների նախնիները, Շահրիմանյանները (կարոլիկ), Վելիջանյանները կամ Խորը Պողոսյանները: Այս չորս անվանի ընտանիքները իրենց խորը դրոշմն են բողել Նոր Զուղայի հետագա պատմության ողջ ընթացքի վրա: Նոր Զուղայի արխիվներից քաղած տեղեկությունների հիման վրա Յ. Տեր-Հովհանյանցը բվարկում է և ցանկին նորջուղայեցի աչքի ընկանող ընտանիքների անուններ:

Չափ Սուլեյմանի (1666-1694) կառավարման շրջանում Մեֆյան պետության մեջ ծայր առավ տնտեսական և քաղաքական ճգնաժամ, որն ամենիցականորեն իր ագլոբությունն ունեցավ Նոր Զուղայի վրա: Երկրի ներքին և արտաքին առևտուրը սկսեց անկում ապրել: Ֆինանսական դժվարության մեջ հայտնված պետությունը սկսեց անօրեն ճանապարհներով գանձարանը եկամուտներով ապահովելու ուղիներ որոնել: Դրա համար ներկայանում է նաև հարմար առիթը: Զուղայեցի ոմն Հովհան Վարդապետ 1671 թ. Կ. Պոլսում Յակոբ կարողելիութիւնը ստանալով եպիսկոպոսության աստիճան, վերադառնում է Զուղա: Սակայն Ամենափրկիչ վանքի առաջնորդ Շավիթի կողմից մերժվում է նրա եպիսկոպոսական աստիճանի ճանաչումը իրու «չիք կարգադր»: Մոլեգմած նորաքուխ եպիսկոպոսը ուրանում է իր հավատու ու ընդունում իսլամը և շահ Սուլեյմանի առջև շարախոսում, որ Զուղայի եկեղեցիներն ու վանքերն ունեն մեծամեծ հարստություններ, ուսկուց և արծարից քազմաքիվ զարդեր և այլն: Այդ մատնության հիման վրա 1671 թ. շահ Սուլեյմանը Զուղայի բոլոր եկեղեցիների վրա նշանակում է հարկեր: Մինչդեռ նախորդ շահերի օրոք եկեղեցիներն ու եկեղեցական կալվածքներն օգտվում են հարկային ինունիտետից և ազատվում են ամեն տեսակի հարկեր և տուրքեր վճարելու պարտավորությունից: Այնուհետև «աղարտելով զահմանս պարկեշտութեան» շահ Սուլեյմանը Զուղայի վրա դնում է նաև «աղջկահարկ», պահանջում է, որ ջուղայեցիները իր հարևմի համար աղջկաներ տրամադրեն: Այդ առթիվ ժամանակագիրը հաղորդում է: «Թուին

ՈՅԼԸ (1683) շահ Սուլեյման ջրաւրինեաց օրն Զուղայու հայոց էն (27) հարսն և աղջիկ քաշեց և ուրացուց զնուաս»:

Նենց այս շահի օրոր Շիսուսյան (ճիզվիր) միսիոներները Նոր Զուղայում «յարուցին գնորդորիկ մեծ», ցանկանալով ջուղահայությանը պարտադրել կարողիկությունը:

1694 թ. Սեֆյան գահի վրա իր հորը շահ Սուլեյմանին փոխարինեց շահ Սուլթան Հուսեյինը (1694-1722): Լինելով մեղլկասիրու և բույլ բնավորության տեր, նա պալատականների ծեռքին դարձավ խաղալիք: Նրա օրոր Սեֆյան պետությունը սկսեց արագորեն բուլանալ, որի հետևանքով նահանգների կուսակալները սկսեցին ավելի նվազ չափով հաշվի նստել շահի և կենտրոնական կառավարության հետ: Շահ Սուլթան Հուսեյինը աչքի չեղ ընկնում նաև կրոնական հանդուրժողականությամբ: Խոլանը պարտադրելու քաղաքականությունը սկսվեց գյարքերից կամ գրադաշտականներից, որոնք բնակվում էին Սպահանի Գյավուսարադ թաղում: Նրանք բոլորը, մոտ 200 տուն, ստիպված եղան հավատափոխ լինել և ընդունել «ճշմարիտ կրոնը» խոլանը: Դրանից հետո հերթ հայերինն էր: Իր նտքում փայփայած խորհրդողը հայերին պարտադրելու նպատակով շահն այցելում է Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքը, սակայն հանդիպում է Շովհաննես Մրցուց «տիեզերակույս» վարդապետի և վանքի միաբանության միահամուռ ոյնադրությանը և ոյսը սրտում ստիպված լինում ծեռնունայն վերադառնալ: Շահը հրամայում է մոլլաներին կազմակերպել բանալենք Շովհաննես Մրցուցի հետ կրոնական հարցերի շուրջը, ենքադրելով, որ նրանք իրենց իմաստությամբ ու գիտելիքներով կզախճախեն վարդապետին և դուանով իսկ ուղի կհարթեն հայերին խոլանը պարտադրելու ուղղությամբ: Մոլլաները շահին խորհուրդ են տալիս հրաժարվել այդ գաղափարից և գործը գլուխ բերել բռնությամբ: Սակայն կրոնական վեճը այնուամենայնիվ տեղի է ունենում և մոլլաների խայտառակ պարտությունից հետո շահն անցնում է բռնությունների իրականացման: Մտեփանոս պատմիչի վկայությամբ, իջ-

նում է թագավորական իրաման, հայերը պարտավոր են փողոց դուրս գալու ժամանակ իրենց վրա գցել հին կարպետ, գլխին դնել պատառութված զլիսարկ, որպեսզի տարբերվեն պարսիկներից: Անձրևոտ օրերին իրավունք չունեն մտմելու իսանութ կամ գնալու շուկա, որպեսզի թաց շորերով դիացելով պարսիկներին չպղծեն նրանց: Հրամայվեց նաև, որ հայերը պարտավոր են թարշ տալ մահապարտ սպանվածների դիակները «իրեն գիրծ անարգ յամօթ և ի նախատինս ինքեանց»: Հայերին կրկնակի նվաստացնելու միտումով նրանց վրա դրվեց «կուտի հարլք» արքունական հավերին կերակրելու համար: Գործողության մեջ է մտնում նաև այսպես կոչված «իմամ Զաֆարի» օրենքը, ըստ որի մահացած ազգականի ողջ ունեցվածքը հասնում էր իր ժառանգներից նրան, ով ընդունել է մահմեդականությունը: Դա մի գայթակղություն էր, որ շատերին մղեց հավատափոխության: Սուտ վկաների օգնությամբ խլանացած հայերը իրենց հարազատներից կորզում էին դրամ, որոնք իրը թե պարտություն էին վերցրել իրենցից: Հայերից դրամ կորզելու ամենատարածված ծեսերից մեկն է դառնում զրապարտությունն այն մասին, որ այսինչ հայը հայիոյել է Սուհամմեդի կրոնը: Պատիճների էին ենթարկվում նաև բոլոր այն հայերը, որոնց զրապարտում էին, թե որոշել է մեկնել այլ երկիր: Նման դեպքերում չեր թացառվում նաև գրպարտյալի մահապատիժը:

Սրբունիքի ստորագրչ ծառաները «որպես սովոր գայլերի ոհմակներ» հալածում էին հայերին, նրանց ենթարկելով ծանր կտտանքների շղթաներով զանակոծելով. կարմրացած երկարով խարանելով. հարդի ծխով շնչասպառ անելով, քնաբափությամբ տանջելով և այլն: Նրանք, ովքեր հրաժարվում էին դավանափոխ լինել, ցեխին ապակի խառնելով ստիպում էին բռնիկ ոտքերով տրորել: Շահի կրոնական մոլեռանդությունը նույնիսկ հասնում է այնտեղ, որ հրամայում է Զուլյայի հայոց զերեգմանատան քարերի ծայրերը ջարդել «որպես թէ թլպատեցան և ննջեցեալքն հայոց ըստ հրամանի թագաւորին»: Շահը դիմում է

նման արգահատելի միջոցների, որովհետև խզամական կրոնը արգելում է բռնությամբ հավատափոխ անել այլաղավաններին:

Դավատափոխ ջուղայեցիներից շատերը ճահիվան սեմին զղջում էին իրենց արածը և մեծահոգի հայրենակիցները թույլ էին տալիս, որ նրանց բաղեն Նոր Զուղայի հայոց գերեզմանատնից անջատ մի առանձին հանգստարանում, որը կոչվում էր «Խարանք»: Դետագայում նրանցից ծնվածները կրկին վերադարձան հայության գիրկը:

Մի խոսքով շահ Սուլթան Շուսեյինի օրոք սկսվում է Զուղայի «ըեկումը»: Հուսահատության մատնված և ապագայի նկատմամբ հավատը կորցրած բազմարիկ ջուղայեցիներ, լրելով իրենց տունուտեղը, հայրերի ու պապերի գերեզմանները, դիմում են արտազադի, որը գնալով ընդունում է զանգվածային բռնույթ: Ընդ որում գաղթելուց առաջ նրանք չեն կարող վաճառել իրենց ունեցվածքը, որովհետև դրանով իսկ իշխանությունների մոտ կմատնենի իրենց և կենքարկվենին պատիժների: Ուստի հայրենի քաղաքից փախուստը կատարվում էր գիշերով, զաղտագողի, անշշունչ ու հապճեա տագնապով, առանց սիրելիներին հրաժեշտի համրույր տալու: Պատմիքը վկայում է, որ հեռացողներն ապրում էին մի զգացում, որն հասուկ է բամտից փախչողներին: Ունենոր ջուղայեցիները հայրենի տնից հեռանալու իրավունքը ծեսը էին թերում Սպահանի քաղաքապետին, ուստիկանապետին և այլ պաշտոնատար անձանց կաշառելու միջոցով, որոնք իբր նրանց թույլատրում էին ուխտագնացության մեկնել Երուսաղեմ, կամ մայրաքաղաքի գավառի Շիշկանա գյուղ՝ տեղի ավետարանը համրուրելու համար:

Ծուլուվ ջուղայեցիներին սպասում էր նոր փորձություն. XVIII դարի 20-ական թվականներին ապստամբում են Սեֆյան պատությունից վասալական կախման մեջ գտնվող աֆղանները և 1722 թ. գրավելով Սպահանը, զահընկեց են անում շահ Սուլթան Շուսեյինին: Աֆղանները ամենաբարերարուսական ու զազանարար եղանակներով ավերածության ու կողոպուտի են նմբար-

կում Նոր Զուղան, զիսատում նրա քալանթարին, գերության քշում հարյուրավոր երիտասարդների և իրենց հարեմները լցնում քազմաքիվ հայ աղջիկներ: Սպահանում և նրա շրջակա մահալներում սկսվում է սարսափելի թանկություն և սով: Այդ առթիվ ծեռագորի հիշատակարանում ասվում է, որ «մարդիրն մին գմինու կերամ, ոիսչ սովանահ ելան»:

Վայրենաբարո աֆղանների կատաղի վրեժիմդրության ու հայածանքների գոհ դարձած պարսիկ ժողովուրդը վնտրում էր իր այդ օրիասական վիճակի մեղավորներ: Եվ ահա ինչ-որ մեկի հուշումով մեղավորի դիրում հայտնվում են հայերը: «Դուք թերիք զօրսն աղուանից ի վերայ թագաւորին պարսից», - նետում է նրանց երեսին ամբոխը: Ծայր են առնում հայերի կոտորածներ և նրանց ունեցվածքի կողոպուտ: Կրակի և սրի միջև ընկած հայությունը մատնվում է ծայր հուսահատության:

1736թ. Նադիր շահի տիրապետության հասալատումից հետո Իրանի նոր տիրակալը ևս որոշում է «քամել» Նոր Զուղան, նրա բնակչությանը պարտավորեցնելով մուժել ուժից վեր հարկեր: Նրա գիշատիչ ու անկուչտ ծառաները ևս իրենց բաժինն էին ուզում: Եվ ահա իշխանությունն ու ամբոխը ծեռը-ծեռքի տված, անագրույն դամանությամբ. «իրրև գայլը սովեալը» սկսում են «քամել» Զուղան: Այդ բռնությունների ու հարստահարությունների հետևանքով Նոր Զուղայի բնակչության նույնիսկ բարեկեցիկ կյանքով ապրող մասը հասնում է ծայրահեղ աղքատության ու թշվարության, շատերը անտանելի իրականությունից փախուստ են տալիս դեպի Լորեսքանի լեռները:

Ավանդությունը պատմում է, որ երբ Նադիրի հարկահանները մտնում են Զուղա հերթական անգամ կողոպտելու, ժողովուրդը նրանց դիմավորում է երգով ու պարով: Լսելով այդ մասին, Նադիրը հասկանում է, որ մինչև վերջին թելը ջուղայեցիները կողոպտված են և երգում ու պարում են, որովհետև այլև ոչինչ չունեն կորցնելու:

1747 թ. Նաղիր շահի սպանությունից հետո, գիտակցելով, որ Զուղան քայլայման ու անկան վիճակից դուրս բերելու միակ ճանապարհը ազգային համերաշխությունն է և փոխօգնությունը, 1749 թ. Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ՝ Պողոս Եահակոպոսը մի շրջաբերական նամակով դիմում է աշխարհի տարրեր ծագերում ցրված ջուղայեցի վաճառականներին, խնդրելով իրենց ծննդավայրը ողբալի վիճակից դուրս բերելու համար յուրաքանչյուրն իր հնարավորության սահմաններում վճարի մի որոշ գումար, որպես «ազգային տուրք»: «ՅԱՍՏՈՒՇԵ ՃԵԳ պարզնեալ յընչիցն Զրիստոսի մասն և քաժին հանեք վասն Եղրարց».- թախանձում եր առաջնորդը: Պարզ երևում է, որ իրենց պարտքի գիտակցությամբ համակված ջուղայեցի խոջաները հուսախար չեն արել հայրենասնը հոգևորականին:

Նաղիր շահի տիրապետության այդ հուսաբեկ ժամանակաշրջանում արտագաղթը Զուղայից ընդունում է ավելի մեծ չափեր:

Իսկ շահի սպանությունից հետո Իրամում կրկին ծայր են առնում արյունոտ միջավատական երկպառակություններ, որոնց ընթացքում ողջ իրանահայությունը, այդ թվում նաև ջուղայեցիները, մատնվել են նոր տառապանքների ու անորոշության, դառնալով պատեհապաշտ ու ժամանակավոր ինքնակալների ազահության ու ընչարադցության զոհը: Ստեփանոս Երեց պատմիչը հաղորդում է, որ այդ աղետալի ժամանակաշրջանում առանձնապես ավերվեցին ու տուժեցին Զուղան և Փերիայի ու Բուրվարի գավառները, «անպատսպար քրիստոնյաներին» «իրրև հողմախառն հուր ընդ եղեգն ընթացել, այնպէս լլկէին գանէին խարակէին հարկանէին նեղէին չարչարէին...»: Այդ ժամանակների ահարկու քոնակալներից մեկը՝ Ալիմարդան խանը, իր դաշնակից Քերիմ խան զննին է նվիրում Զուղան «իրրև պարզ քանկազին ի տրիտուր իւրոյ երախտեազն»: Ստեփանոս Երեցը պատմում է, որ Զերիմ խանը սկզբում մտադիր է եղել ավարի մատնել Զուղան: Սակայն իրոյ գիշերը երազ տեսնելով

սուկացնէ է իր այդ մտադրությունից և հաջորդ օրը նրա սրտում ծագել է սեր և գութ հանդեպ ջուղայեցիները և այցելելով նրանց, Զուղայում նշանակել է պահապաններ, պատվիրելով քաղաքը խնամքով պահպաններ: Ամենայն հավանականությամբ ոչ թե երազն էր բեկում մտցրել գիշատիչ բնագդներով առաջնորդվող լեռնական առաջնորդի վերաբերմունքի մեջ հանդեպ Զուղան, այլ գուցե ինչ-որ մեկի հուշումով հասկացել էր, որ Նադիր շահի ժամանակ կողոպտված այդ քաղաքը առանձնապես միանված մեծ հասույթ չի կարող բերել իր գանձարանին, մինչդեռ եթե հնարավորություն տրվի խոջաներին արդյունավետ կերպով շարունակելու առևտուրը, իր սպասելիք օգուտները կարող են ավելի մեծ լինել:

Չուտով Զուղայի շուրջը նախկին դաշնակիցների միջև ծագում է սուր վեճ: Ալինարդան խանը ինքն է ցանկանում ունենալ եկամտի այդ մշտական աղբյուրը: Վեճը վեր է ածվում պատերազմի: Ալինարդան խանը ավարի է մատնում Զուղան: Ի վերջո, Արիքուրան կոչված դաշտում նախկին դաշնակիցների միջև տեղի է ունենում արյունոտ ճակատամարտ, որի ընթացքում Ալինարդան խանը պարտվում և փախուստի է դիմում:

Սակայն այդ բոլորից հետո ևս անսամբ տարրերը շարունակում են անլուր հալածանքների ու կողոպուտի ենթարկել ջուղայեցիներին ու շրջակա գավառների հայերին: Փրկություն գտնելու հույսով Նոր Զուղայի Ամենափրկյան վանքի առաջնորդ Զաքարիա Եպիսկոպոսը Զուղայի քալամբարի հետ համատեղ աղերսագիր են ներկայացնում Քերիմ խանին, որպեսզի վերջինս հրանան տա Փերիայի հայերին տեղափոխվելու Զուղա, որպեսզի կարողանան գեր պահպանել իրենց Ֆիզիկական գոյությունը: Յրամանը չի ուշամում, սակայն Զուղա տեղափոխված Փերիայի հայերը, որոնք գյուղական կյանքին ու հողագործությանը հարմարված մարդիկ են, չեն ցանկանում բնակվել քաղաքատիպ ավանում և վերադառնում են իրենց բնակավայրը, առաջ բերելով Քերիմ խանի սոսկալի զայրույթը:

Քերիմ խանի մահվանից հետո Իրանում անսանծ տարրերը կրկին գլուխ բարձրացրին: Չուղան վերստին դարձավ կողոպուտի ու ու ավերի առարկա: Մանր բռնավորները ավելի դաժան էին և ավելի ագահ: Իրենց կարճատև տիրապետությունից առավելագույնը քամելու նիտումով նրանք ոչ նիայն անխնա ավարի էին մատնում այն վայրեղը, որտեղից դեռ ինչ որ բան կադիլի էր վերցնել, այլև անճնատուր էին լինում սանձարձակ գինարդութերի: Նրանք ջուղայեցիների վրա որեցին մի ստորացուցիչ հարկատեսակ, որն ամնախաղեա էր Իրանի պատմության մեջ: Միաժամանակ վերականգնեցին քրիստոնյաներից աղջիկ պահանջելու հին ավանդութը, որն ավելի պժգալի էր, քան ամեն մի հարստահարություն: Գեղեցիկ աղջիկներ հայտնարերելու պատրվակի տակ ներցինիները մտնում էին տնե-տում: Սա ևս նրանց հարստացման մի անսպառ աղօյուր էր համդիսանում: Դաճախ աղջիկներին չէր փրկում նույնիակ այն, որ ծնողները վաղ մանկության տարիներին հաշմում ու այլանդակում էին իրենց սիրատուն զավակներին: Պարզապես նրանց ազատելու կաշառքի չափու ավելի քիչ էր լինում:

Նշված ժամանակաշրջանում Իրանի տնտեսությունը հայտնվել էր նզմաժամային վիճակում: Գյուղատնտեսության և արհեստագործական արտադրանքի կրծատումը հանգեցրել էր Իրանի ապրանքահոլիստանակության ծավալների կտրուկ նվազման: Երկրի ընդհանուր տնտեսական անկման և արտահանության կրծատնան պայմաններում խիստ սահմանափակվեց նաև Նոր Ջուղայի վաճառականության առատուրն ու եկամուտները: Դաճախ խաները և մեծ ու փոքր աստիճանավորները իրենց էին կազմակերպում զինված ավագակախմբեր վաճառականների առևտրական քարավանները կողոպտելու համար: Առևտրի պայմանների վատրադարձան, անձի և գույքի ապահովության բացակայության, տնտեսական ճնշման և քաղաքական անկայունության հետևանքով Նոր Ջուղայի խոջայությունը սկսեց ելք որոնել իր սեփական գոյությունը փրկելու համար: Նա սկսեց

գամ իրամալեզու զննողի և թուրքալեզու դաշտական ցեղի միջև, որի ընթացքում իրամահայությունը կրկին մատնվելով անորոշության ու տագնապի, կրկին իր ծեռքը վերցրեց գաղտականի ցուազը: Այդ արյունախանճ կոհիվները, որոնք ուղեկցվում էին ահասարսութ դաժանություններով, ավարտվեցին դաշտաների հաղթանակով, իրանում իիմք դնելով կառավարող մի նոր թյուրքական դինաստիայի՝ դաշտաների կամ դաշտական դինաստիայի:

1815-1817 թթ. և 1804-1834 թթ. իրանում մոլեզմող սովոր նոր ավերներ պատճառեց Զուղային: Շատերը իրենց կյանքը փրկելու համար տեղափոխվեցին Հնդկաստան: 1828 թ. Թուրքմենչայի պայմանագիրը կնքվելուց հետո Զուղայեցիների մի մասը մեկնեց Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստան:

Յարկ է նշել, որ Ֆարի Ալի շահ Պաջարի (1795-1834) տիրապետության շրջանում Զուղան գտավ հարաբերական համգիստ: Յայերին համարելով պետության համար օգտագետ տարր, շահն աշխատում էր իրանում նրանց բնակության համար ստեղծել տանելի պայմաններ: Նա սկսեց վարչական խստություններ բանեցնել պետության ինքնազլուխ և անսանձ տարրների դեմ, հպատակ հայերի իրավունքներն ու պատիվը պաշտպանելու համար: 1825 թ. նա անձանք այցելեց Սպահան, տեղի անգուստ տարրերին պատմելու համար, որոնց հալածանքների էին ենթարկում նոր Զուղայի հայերին: Սունեստիկների միջոցով Սպահանում տարածվում է շահի հրամանը. «Եթե այսուհետև որևէ մեկը համարձակվի նեղել ու հալածել իմ հպատակ հայերին, կենթարկվի պատիժների»: 1832 թ. Ֆարի Ալի շահը հրապարակեց մի հրամանագիր, որով պետական գանձարանից Նոր Զուղայի Ամենափրկչյան վանքին հատկացվում էր տարեկան 262 թուման պարզե: Այդ նույն հրամանագրով վանքապատկան բոլոր կալվածքներն ազատվում էին հարկությոց: Թվում էր, թե Զուղայի սակավամնաց բնակչիները ստացել են ազատ շունչ քաշելու հնարավորություն: Սակայն Սպահանից շահի հեռանալուց

հետո ամեն ինչ դարձավ նախկինի պես։ Նոր Զուղայի բնակչության վիճակը այդ շրջանում ։ Տեր-Շովիանյանցը բնութագրում է հետևյալ լակոնիկ արտահայտությամբ։ «մեռած քայց անքաղ»։

1840 թ. Սպահանի նահանգի նահանգապետ է նշանակվում մահմեդականությունն ընդունած հայազգի Սանուչեիր խանը։ Վերջինս երկաթյա կամքով ու վճռականությամբ կարողանում էր ընդարձակ և մարդաշատ նահանգը պահել խաղաղության մեջ, վճռական պայքար մղելով կենտրոնախույս հակումներ ունեցող խամերի և տնօւական մեծ ու փոքր բռնավորների դեմ։ Սակայն 1847 թ. Սանուչեիր խանի մահվանից հետո Նոր Զուղան, կենտրոնական իշխանության քուլացման պայմաններում, կրկին դառնում էր ապստամբ խաների հարստահարությունների և անօրինությունների առարկա։ Տեղական իշխանությունները, որպես կանոն, մատների արանքով էին նայում քրիստոնյաների նկատմամբ բռնավորների գործադրած «չարաճիճիթություններին»։

XIX դարի կեսերին Նոր Զուղան կատարելապես անշքացել էր։ Նա ուներ ընդամենը 371 տուն, կամ 1191 շունչ։

Նասր-Էդ-Ղիմ (1848-1896) և Սոզաֆֆար-Էդ-Ղիմ (1896-1907) շահերի կառավարման շրջանում իրանահայության վիճակի մեջ դրական առումով կտրուկ փոփոխություններ տեսի ունեցան։ Այդ գործիքներն աշխատում էին մրում տալ Իրանի հայության գործարար և հոգևոր եռանդին։ Երկիրը տնտեսական լճացման վիճակից դուրս բերելու, արիեստներն ու առևտուրը խթանելու նպատակով շահական կառավարությունը իրապարակեց մի շարք իրամանագրեր, որոնցով վերջ էր տրվում հայերի նկատմամբ եղած մի շարք սահմանափակումներին, արգելվում էր նրանց բռնի հավատափոխությունը, կանոնավորվում էր հայ քաղաքային և գյուղական բնակչությունից գանձվող հարկերի գործը, օրինականացվում էին հայ եկեղեցիների կալվածքները և այլն։ Դայերին նորից վստահվեցին արօւնի և պետական

բարձր պաշտոններ: Մի խոսքով օրենսդրական կարգով հայերը վերցվեցին պետության հովանավորության տակ: 1845 թ. Խասր-էդ-Ռին շահը հրապարակեց մի հրովարտակ, որտեղ ասվում էր: որ «Դայերը մեր լավ հպատակներն են, տերության հավատարին քաղաքացիները»: Այդ շրջանում մշակութային կյանքը ևս Նոր Զուղայում կենդանության նշաններ դրսորեց: Գործում էին երեք դպրոցներ:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հակառակ նրան, որ առհասարակ Խրանում բարձր հոգևորականությունը բուռն պայծարի մեջ էր արունելիքի դեմ, որը ջանքեր էր գործադրում թուլացնելու հոգևորականության տիրապետող ազդեցությունը, վերջինը հայության հանդեպ գույց տված իր վերաբերմունքով կատարելապես համերաշխ էր ընթանում պալատի հետ: Այսինքն՝ նա էլ հովանավորում ու պաշտպանում էր հայությանը, մինչդեռ պալատի դեմ վարած իր պայծարի մեջ նա կարող էր շահերի ու կառավարության այդ քաղաքականությանը կրոնական գունավորում տալով՝ հատուկ մի գենք դարձնել իր համար:

Խրանական կառավարության և շիֆրական բարձր հոգևորականության կողմից հայության նկատմամբ որդեգրած բարյացական ոլորորոշումը թուլացնում էր ամրոխային վատ վերաբերմունքը, չնզորքացնում հակահայ շարժումներն ու հայության դեմ նյութած դավադրությունները, մեղմացնում մահմեդականի և քրիստոնյայի միջև այդ ժամանակներում առկա խոլ ատելությունը և ստեղծում համեմատաբար դրացիական խաղաղ մքնոլորտ:

Նոր Զուղայի թեմի առաջնորդ Թադևոս վարդապետ Քեկնազարյանը (1813-1863) դիմել է Խասր-էդ-Ռին շահին, խնդրելով բարելավել իրանահայության և նախնավորապես Նոր Զուղայի հայերի դրությունը: Ծահը ընդառաջ է գնացել այդ խնդրանքին և հայերին ազատել գորակոչից, նվազեցրել է Նոր Զուղայի և Փերիայի հայությունից գամճվող հարկերի չափերը և հատկացրել ևս մի շարք արտոնություններ ու իրավունքներ: Ընդունվել է,

օրինակ, հատուկ որոշում, ըստ որի այսուհետև հայերից հարկը պետք էր գանձել այն չափով . ինչ չափով որ գանձվում էր տեղացի մահմեդական-պարսիկներից: Վերջապես Թաղևոս վարդապետի միջամտությամբ, արքունիքը պատժիչ զորքեր է ուղարկել բախթիարի գնդի ավագակների դեմ, որոնք շարունակարար հարձակվել են Սպահանի շրջանի հայկական գյուղերի ու Նոր Ջուղայի վրա և թալանել ու կողոպտել են հայ բնակչությամբ:

Նախ-Եղ-Դին և Մոզաֆֆար-Եղ-Դին շահերի կողմից իրանակայությանը հատկացված արտոնությունների և իրավունքների շնորհիվ, հայությունը կատարելապես ազատ էր իր եկեղեցու, կրոնական ու դավանական խնդիրներում: Ամուսնական, ամուսնալուծական, ժառանգական ու կրոնական խնդիրների լուծման իրավասությունը պատկանում էր Յայոց Առաջնորդարանին կամ կրոնական խորհրդին:

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԴԵՐԸ ՀԱՄԱՐԱՅԿԱՎԱԾ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ  
ՈԽՆԵՑՈՂ ՇԱՐՑԵՐՈՒՄ

XVII դարում պատերազմների, գերեվարությունների, տարագրությունների և ամեն տեսակի թռնությունների հետևանքով հայ բնակչությունը մաշվում, կամ դուրս էր մղվում իր հայրենիքց: Բնական է, որ այդ բոլորը ժողովրդի մոտ չեղ կարող առաջ չըներել ազատագրական բաղծանքներ: Սակայն Յայաստանի տնտեսական ու քաղաքական նասնատվածության պայմաններում իրական հնարավորություններ գոյություն չունեին նրա վրա ծանրացած բռնատիրական լուծը բորբակելու համար: Թե Արևմտյան և թե՝ Արևելյան Յայաստանում չկային քիչ թե շատ ուժեղ իշխանություններ, որոնք ի վիճակի լինեին համախմբելու ժողովրդին ու դատանալու ազգային անկախության հենարաններ: Եկեղեցին նույնպես ի վիճակի չեր ազգային հավաքականության անունից հակադրվելու օտար նվաճողներին, մանավանդ որ XVII դարում խաթարվել էր հայ ազգային-եկեղեցական կազմակերպության միասնությունը:

Նման պայմաններում միակ ուժը, որն ի վիճակի էր իր վրա վերցնել նման պատմական առաքելություն, դա բուրժուականացող հայ առևտուրական դասն էր, որը պատմական աննպաստ պայմանների պատճառով ստիպված էր գործել հայրենիքից դուրս և որի շահերը տուժել էին Յայաստանում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով: Ենց նա էլ առաջինը սկսեց դժգոհություն դրսնորել իր գործունեության պատճենում կաշկանդող օտար լջի նկատմամբ: Որքան նա հարատանում էր ու ծերում բյութական ուժ, այնքան ավելի ցայտուն էին դրսնորվում նրա այդ տրամադրությունները: Յայ խոջայությունն աստիճանաբար սկսում էր հետաքրքրություն դրսնորել սեփական ժողովրդի քաղաքական կյանքի նկատմամբ, հատկապես մտահոգվելով նրա իրավագուրկ վիճակով:

XVII դարում ավելի հետևողականորեն էր արժարծվում Արևմուտքի քրիստոնյա պետությունների օգնությամբ Հայաստանն ազատագրելու գաղափարը: Հայ առևտրական-խոջայական դասը ոչ միայն եռանդուն կերպով ներգրավվում է այդ շարժման մեջ, այլև անմիջական մասնակցություն գուցարերում այդ ուղղությամբ ծնոնարկվող բանավարություններին:

Պատմական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ հայ առևտրական կապիտալի առաջամարտիկը հանդիսացող Նոր Զուղայի խոջայությունը հայ ժողովրդի քաղաքական շահագրգություններից հետու կանգնած, ապաքաղաքական հակումներ ունեցող մի գանգված էր, որն ավելի շուտ քոնում էր տիրողների նկատմամբ խոնարի համակերպության ճանապարհը, քան ճակատ էր տալիս իր ժողովրդի ազատագրման համար, չի թոնում պատմական քննություն: Նոր Զուղայի խոջայության ազգային-քաղաքական անգործունեությունն ու կրավորականությունը ցույց տալու նպատակով սովորաբար վկայակոչվել է XVII դարի հայագետ Յոհ. Սկրուելի «Արամեան լեզուին գանձ» աշխատության մեջ ոմն Ֆրանչեսկոյի և Նոր Զուղայից առևտրական գործերով Ամստերդամ ժամանած խոջա Սաֆարի երկխոսությունը, որտեղ նվյուպացին շոշափում է նաև հայ ժողովրդի քաղաքական դրության հարցը: Խոջա Սաֆարը ասում է. «Ուղորդ այ, մեր ազգն էսօր էլ ոինչ այ քանց մեր բագաւորաց վախտին, գարա կոի չի գնալ, ու ամէն ազգի հետ ազատ ելումուտ ունի»: Ետոն խոջայի արտահայտած այդ միտքը մեկնարանում է հետևյալ կերպ. «Քային հարկավոր էլ չէ սեփական քազավոր. եթե ունենա այդպիսի բան, սիտի պատերազմի գնա, մինչդեռ այժմ նա կովի չի գնում և ազատ առևտուր է անում բոլոր ազգերի հետ»:

Անկասկած, XVII դարում հայ առևտրական դասի և նույնիսկ հոգևորականության շրջանում ննան մտայնությունը բավականին մեծ տարածում է ունեցել: Նույնիսկ XVIII դարում հայ հոգևորականներից մեկը՝ Գևորգ Սլուելինյանը, ծիշտ է այլ

դրդապառճառներով, սակայն կրկնելով խոջա Սաֆարին, գրում էր. «Արևելյան քրիստոնեայթ թեպետ առանց քազաւորութեան, սակայն առաւել երջանկութիւն և անդորրութիւն ունին, քան զնոսա, որը ընդ թագաւորութեանը են»:

Նախ խոջա Սաֆարի երկխոսությունից երևում է, որ շրջահայց ու գգույշ խոջան խռւսափել է քաղաքական հարցեր շոշափող Եյութից. Մեծյան իշխանությունների նկատմամբ իր լոյալությունը կասկածի տակ չդնելու համար, և ապա նրա հայտնած տեսակետը կարող էր լինել մասնավոր կարծիք և ոչ ընդհանրական ողջ խոջայական դասի նկատմամբ: Ի վերջո չպետք է ձուռանալ, որ առհասարակ գաղութաբնակ հայ վաճառականությունը և մեծատունները, թեև օգտվում էին իշխանությունների քարյացակամ վերաբերնունքից և նրանց շնորհված էին իրավունքներ և արտոնություններ, սակայն միևնույն ժամանակ իրենք էլ էին ենթակա ազգային ու կրոնական ճնշման: Աղբյուրները վկայում են, որ Մեծյան Իրանում հազվագյուտ չեն եղել նաև կրոնական քոնությունները մեծահարուստ խոջաների նկատմամբ: Բացի այդ, XVII դարի երկրորդ կեսից սկսած շահական կառավարության քաղաքականությունն էր ոչ թե պաշտպանել խոջայական առևտությը, այլ հարատահարել ու կողոպսել նրան: Եվոյպական ուղեգիրները վկայում են, որ նորջուղայեցի խոջաների հարստության աղյուրներն սկսում են ցամաքել և հազվագյուտ են դաշնում մեկ միլիոն և ավելի կարողություն ունեցող ընտանիքները:

Մի խոսքով, ասիական թիրտ տիրապետությունը փոխեց հայ առևտրական դասի քաղաքական տրամադրությունները: Նա սկսում է դրսնորել քաղաքական անրավականություն և որոնել ազգային ազատագրության պայքարի ուղիներ: Նրա այդ գաղափարները պարարտ հոդ են գտնում ոչ միայն իրանահայ զանգվածների շրջանում, այլև Արևելյան Պայաստանում, որտեղ Մեծյան իշխանությունների ճնշման ուժները ազատագրության շարժման ալիք էր քարոզական: Փաստն կան

նաև այս մասին, որ իրանակայ խոջայության քաղաքական տրամադրությունները համահնչյուն էին արևմտահայերի շրջանում խմորվող տրամադրություններին: Դրաժարակվելով սննդյան ների քաղաքական շահավանդրություններին աջակցելու իրենց նախկին դիրքերից, իրանական պետությունից դիմադրած, ջուրակայ խոջայությունը հետևողականորեն որոնում էր քաղաքական ազատության ուղիներ:

Անժիստելի է, որ արևմլահայության շրջանում քաղաքականացնեն ամենահաստին և ամենազործուն դասը XVII դարում հայ խոչայական-առևտորական դասն էր: Ի դեպ, նա սկսել էր առաջինը գիտակցել, որ հայ ժողովրդի թշվար դրությունը հետևանք է սեփական պետականության բացակայության: Դեպի Ռուսաստան հայության քաղաքական կողմնորոշման գործում ևս, ինչպես հայտնի է, կարևոր դեր ուներ գաղութահայ առևտորական բուրժուազիան: Դայ ազատագրական պայքարի շավիդներում ակնառու դեր խաղացած Խորայի Օրիի գործունեությունը և քաղաքարիկ թելերով կապված է Նոր Ջուղայի խոչայության հետ:

Բնավ պատահական չէ, որ XVIII դարում Իրանում ստեղծված քաղաքական ու տնտեսական անապահով պայմանների պատճառով Նոր Չուղայից Յնոկաստան տեղափոխված խօժաները ևս բոլորանվեր լծվեցին Յայաստանի ազատագրության գործին: Մտահոգված լինելով սեփական ժողովրդի վերածնության խնդրով, նրանք ծեռնամուխ եղան քաղաքական եռանդում գործունեության, որն իր մակարդակով հայ առևտրական բուրժուազիայի քաղաքական գործունեության ավելի հասուն շրջան էր: Նրանց գործունեությունը հատկապես մեծ քափ ու ծավալ է ստանում այն ժամանակ, երբ Յնոկաստանում XVIII դարում անգլիացիներն սկսում են հետևողականորեն դուրս նցել իրենց մրցակից հայ առևտրական բուրժուազիային: Ելք փնտելով այդ անրադակի վիճակից, Շահամիր Շահամիրյանը և Մադրասի հայրենասիրական խմբակի մյուս ներկայացուցիչները, որոնք ծագումով բոլորն եւ նորուղայեցիներ էին, առաջ են քա-

շում Հայաստանի անկախության վերականգնման իրենց հայտ-  
նի ժրագիրը:

Չափազանց մեծ էր Նոր Զուղայի դերը և կշիռը համագգային  
գործերում, կամ ավելի ծիչտ XVII դարի սկզբից այդ գաղթօջա-  
խը իր ծեռքն է վերցնում հայ ազգային կյանքի դեկավարությու-  
նը: Պամահայկական նշանակություն ունեցող բազմաթիվ հար-  
ցեր լուծվում էին ջուղայեցիների գիտությամբ և նրանց միջո-  
ցով: Առանց չափազանցության կարելի է ասել, որ XVII-XVIII  
դարերի ընթացքում Նոր Զուղան էր ուղղություն տալիս Հայաս-  
տանի հասարակական-քաղաքական, գաղափարական և գի-  
տամշակութային գործունեությանը: Առաքել Ղավրիժեցին գրում  
է, որ ջուղայեցի խոջա Սաֆարն «էր աւագ ոչ միայն ջուղայեց-  
տց, այլ և ամենայն ազգին հայոց՝ որը կային ի ներքոյ քագաւո-  
րութեանն պարսից»: «Զուղան մի մեծ հետինակություն դարձավ  
և առանց նրա համաձայնության չեր կարող վճռվել ոչ մի նշա-  
նավոր ազգային գործ: Եջմիածինը ենթարկված էր նրան, կարո-  
ղիկոսի ընտրության գործում առաջին ծայնը պատկանում էր  
Զուղային», - գրում է Լեռն: XVII-XVIII դարերում հայոց կարողի-  
կոսներից Մովսես Տարեացին, Փիլիպոս Աղքակեցին, Յակոբ  
Զուղայեցին, Նահապետ Եղիսացին, Ստեփանոս Զուղայեցին,  
Աղեքսանդր Զուղայեցին և Աստուածատուր Պամադանցին բազ-  
մել էին կարողիկոսական գահին ջուղայեցի խոջաների աջակ-  
ցությամբ: Նրանք էին սեֆյան շահներից ծեռք թերել «մանսար»  
կամ համաձայնություն իրենց բարձր պաշտոնը ստանձնելու  
համար: Պայտնի է, օրինակ, որ 1680 թ. Պակոր Զուղայեցու մահ-  
վանից հետո Եջմիածնի հոգևորականները կարողիկոս էին ծեռ-  
նադրել Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիազար Այնթափ-  
ցուն, որը մինչ այդ ինքնազլուխ իրեն հոչվածել էր հակարող կա-  
րողիկոս: Սակայն քաջ գիտակցելով, որ կարողիկոսի ընտրութ-  
յան հարցում վերջին խոսքը պատկանում է ջուղայեցիներին.  
Այնթափիցին չեր մեկնում իր պաշտոնավայրը ասելով, թե «ոչ  
եկից ի սուրբ Արքուն մինչև ոչ գայցէ մանսար Խսպահանու»:

Զուղայնցի խոջա Նազարի ջամբերի շնորհիվ, 1629 թ. շահ ՍԵՖԻՆ հրապարակց հրովարտակ էջմիածինը տարեկան 100 թուման «Քիշքաշի» պարտավորությունից (մուղադա) ազատվելու մասին, որի մուծումը 1617 թ. պարտադրվել էր Մելքիսեդ կաթողիկոսին՝ շահ Աբրամ Ա-ի կողմից:

Զուղայի ազդեցիկ խոջաների միջամտությամբ իր լուժումն է գտնում նաև հայ Առաքելական եկեղեցու սրբություններից մեկի՝ Ս. Պողոսիսին կարույր միսիոներների կողմից առևանգված մասումքները հայերին վերադարձնելու հարցը: XVII դարի կեսերին Դայաստանում երկար տարիներ քարոզչական գործունեություն ծավալած կարույր միսիոներ Փիրոնալլին գրում էր, որ «Գուղայնեցիները ի վիճակի են ցատ իրենց ցանկության պաշտոնագրկել որևէ վարդապետի, եպիսկոպոսի և նույնիսկ կաթողիկոսի»:

Նոր Զուղայի հայությունը մշտապես աշխատել է նյութական և քարոյական օգնություն գույց տալ և գորավիգ կանգնել էջմիածինի ու հայ Առաքելական եկեղեցուն, գիտակցելով նրա համահայկական ընդգրկումն ու միավորիչ դերը: Բացի այդ, ինչպես հայտնի է, XVII դարի երկրորդ տասնամյակից սկսած էջմիածինը վերածվում էր ազգային-ազատագրական գաղափարների կենտրոնի: Դենց դա նկատի ունենալով, հայ առևտրական-խոջայական դասը նեցուկ հանդիսացավ նրա այդ ծգտումներին, միաժամանակ կանգնելով հայկական առաքելական եկեղեցու ինքնուրույնության, նրա դավանանքի ու հնամենի ավանդությների պաշտպանության դիրքերում:

Կարևոր է նաև շեշտել, որ եթե XVII դարում հայ եկեղեցականներն առաջվա պես հայ ժողովոյի ազատագրումը շարունակում էին ակնկալել Յոռնից, ապա Նոր Զուղայի խոջայությունը մերժում էր «Ֆրամնկների» միջոցով ազատագրվելու խարուսիկ գնորդը: Այդ մասին կարելի է բազմաթիվ փաստեր գտնել երկու հատորանոց ստվարաժամակալ Կարմելյանների (քաղմելիթներ) տարեգրությունում: Կան այդ հանգամանքը փաստող բազմաթիվ այլ տվյալներ ևս: Այսպես, երբ 1613 թ. Մելքիսեդ կաթո-

դիկոսք, առանց Նոր Զուղայի խոջաների համաձայնության, պաշտոնական նամակ է ուղարկում Յոօմ, որտեղ պատրաստակամություն էր հայտնում ընդունելու Յոօմի պապի գերազահությունը, խոջաներն անմիջապես հանողում են շահին ծերբակալել կարողիկոսին, որպեսզի չեղյալ հայտարարվի նրա որոշումը:

XVII դարում Նոր Զուղան հանդիսանում էր կաթոլիկ միսիոներների հատուկ հետաքրքրության և սևուն ուշադրության առարկան: Կատիկանն այդ հայաքաղաքի բնակչության կարունեացումը դիտում էր որպես Իրանում հետագա հաջողությունների կարևորագույն կովան: Միսիոներների համար կարևոր հենարան էր նաև Նոր Զուղայի գաղրօջախի կաթոլիկ հայերի բավական խոշոր համայնքը: Նրանց մեջ կային մեծահարուստ դրամատերեր, որոնք ֆինանսական խոշոր օգնություն էին ցույց տալիս միսիոներներին և հովանավորում էին նրանց: Ունիերոր հայերի մեջ հատկապես աչքի էր ընկնում Շահրիմանյանների ընտանիքը, որը Նոր Զուղայի կաթոլիկ համայնքի փաստացի դեկանարն էր: Եվրոպական տարբեր պետությունների շահերն արտահայտող Կապուչինյան, Ֆրանցիսկանյան, Կարմելյան, Ղոմինիկյան, Օգոստինյան, ճիզվիթական և այլ միարանություններին պատկանող միսիոներները, քաջ գիտակցելով Նոր Զուղայի կշիռ համահայկական գործերում, իրենց ուշադրությունը քննուել էին այդ գաղրօջախի բնակչությանը, հատկապես առևտրական-խոջայական դասին, «դարձի բերելու», կամ կաթոլիկ դավանանքը պարտադրելու խնդրին: Նրանց քարոզությունը առավել վտանգավոր էր դառնում այն պատճառով, որ միսիոներները իրենց այդ գործունեությանը տալիս էին քաղաքական երանգ, գարգացնելով այն տեսակետը, որ իր հայ ժողովուրդը կորցրել է իր քաղաքական ազատությունը հոգմեական եկեղեցու «սուրբ գրքից» հեռանալու պատճառով և որ կորցրածը վերագտնելու համար նա պետք է կրկին վերադառնա «Ծշմարիտ հավատը» ներկայացնող հօգմեական եկեղեցու գիրկը:

Ուստի թնավ պատահական չէ, որ XVII-XVIII դարերի հայ իրականության մեջ հակակաթոլիկական կամ հակամիարարական պայքարի գաղափարական կենտրոնը հանդիսանում էր հենց Նոր Զուղան: Այստեղ այդ պայքարի հիմնական կազմակերպիչը հայ հոգևորականությունն էր և նրան գաղտնի ու բացահայտ աջակցություն ցույց տվող խոջայական դասը: Իրենց այդ պայքարով նրանց պաշտպանում էին հայոց եկեղեցու ու դավանանքի, հետևաբար և հայ ժողովորի ինքնուրույն գոյության իրավունքը: Ֆրանսիացի միահինոներ Ռաֆայել դյու Մանը վկայում է, որ Նոր Զուղայի հայ հոգևորականության դիրքորոշումը կարուիկ միահինոների նկատմամբ այն աստիճանի թշնամական էր, որ նա քարոզում էր իր հոտին «ավելի լավ է դարձեք մահմեղականներ, քան կարովիկներ»: Նոր Զուղայի առաջնորդ Դավիթ Զուղայեցի արքեպիսկոպոսը (1652-1683) 1679 թ. մայիսի 10-ին հրապարակում է մի կոնդակ, որտեղ, դիմելով խոջաներին, պահանջում է որևէ հարաբերության մեջ չմտնել «ֆրանկների» հետ: «Ով ոք նոցա հետ այլ խօսի, կամ առևտուր առնէ, կամ քառ տայ, կամ օդեն թողու, կամ ինքն նոցա օդեն գնայ, նգովեալ եղիցի և կապեալ», - սպառնում է նա: Դայ հոգևորականությունը արգելում էր պատահներին սովորել Նոր Զուղայի կարովիկների դպրոցում, նգովքի ենթարկելու սպառնալիքով խոչընդոտում էր հայ Սոաթելական եկեղեցու հետևողությունի և կարովիկների միջև ամուսնությունը և նույնիսկ չեր խորշում կառավարության մոտ անբաստանելու միահինոներին, որ նրանց իսկական նպատակն է «ըստեսել գել և մուտս Պարսկաստանի և գրել զամենայն անցա երկրին առ բազաւորութիւնս Եւրոպիոյ»:

1688 թ. իխուսյան կրոնավորները կամ միզվիրները Նոր Զուղայի լուսավորչական հայերի դեմ ծավալեցին բուռն պայքար, կամ «փոքրորիկ մեծ», ցանկանալով դավանափոխ անել նրանց և շրջել ի պապականություն: Նոր Զուղայի թեմակալ առաջնորդ Ստեփանոս Զուղայեցի եսիսկոպոսը (1683-1696) կարողացավ շահ Սովեյմանին համոզել, որ միահինոների գործումեռությունը

մի վտանգ է, որն ուղղված է ոչ այնքան հայերի, որքան Իրանի պետական շահերի դեմ: Որ միսիոներներն Իրանում տարածում են ապստամբության ու հեղափոխության մտքեր և այլն: Ընդառաջելով Ստեփանոս Եպիսկոպոսի և Խոջայական վերնախավի խնդրանքներին, շահ Սուլեյմանը 1689 թ. ընկեց «զօգութեականացն գօրութիւն» և միաժամանակ իրամայնց քամոյել Կարմելյանների եկեղեցին: Ավելի ուշ, ջուղայեցիների հորդորներով, եջմիածնի կարողիկոսը դիմեց Թավրիզի կառավարչին, խնդրելով, որ կարողիկություն ընդունելու ցանկություն հայտնած հայերին բռնի մահմեդականացնեն: Կարևոր է նշել, որ Ստեփանոս Եպիսկոպոսը Նոր Ջուղայում հալածանք սկսելով կարողիկների դեմ, ցանկանում էր այդ հալածանքն ընդհանրական դարձնել ամրող Դայաստանում, որը, սակայն, չհաջողվեց:

Միսիոներների դեմ պայքարութ հոգևորականներից հետ չեր մնում նաև Ջուղայի խոջայությունը: Վերջինս առաջնորդվում էր առաջին հերթին համազգային շահերով, սակայն նա մտահոգված էր նաև իր առևտրական շահերը Եվրոպական մրցակիցների (որոնց շահերի արտահայտիչներն էին միսիոներները) ուժնձգություններից պաշտպանելու հոգսերով:

Նոր Ջուղայում միսիոներության դեմ պայքարի ամենաազդյու ուժը, անշուշտ, ժողովրդական գանգվածներն էին, որոնք քաջ գիտակցում էին, որ Վասիլեանը և կարողիկ միսիոներները իրենց գործունեությամբ տրոհում ու անդամալուծում են հայ ժողովրդի ուժերը, արգելակում ու դժվարացնում նրա համախմբման գործնթացը, բրացնում նրա ազգային գգացումները, նպաստում ազգային ինքնազիտակցության կորստին, խորացնում ազգային երկպառակությունները և այլն:

«Կարմելյանների տարեգրության» իրատարակիչը ջուղայեցիների կողմից միսիոներների նկատմամբ թշնամանքի շեշտակի ուժեղացման հիմնական պատճառն է համարում XVII դարում Լեհաստանում տեղի ունեցած հայտնի իրադարձությունները, երբ տիրահռչակ Նիկոլ Թորոսովիչի գլխավորությամբ այնտեղ

սկսվեց անգուստ լատինականացում և ի վերջո բանի կերպով Լեհաստանի հայ գաղութին պարտադրվեց կաթոլիկությունը, որի հետևանքով կարճ ժամանակամիջոցում գաղութը Ենթարկվեց ծովանականի հայ ժողովրդի համար հանդիսացան ահեղ նախազգուշացում:

Անտարակույս Եվրոպական հզոր պետությունների և Յոռմի պայմի հզոր հովանավորությունը վայելող նիսիոներների դեմ արոյունավետ կերպով պայցարելու համար անհրաժեշտ էր դրսերել մեծ ճկունություն: Ենոն իրավացիորեն նշում է, որ քարոզիչների դեմ կովելու անհրաժեշտությունը ստիպեց հայ կղերականներին գրքեր շարադրել: Այլ կերպ ասած, գործի մեջ էին դրվում գաղափարական պայցարի մեթոդները, քանի որ «Սուրբ հայատի տարածման միությունը» Յոռմում հիմնել էր հատուկ տպարան, որը տպագրում էր մեծ քանակությամբ դավանարանական գրականություն: Այդ հարցում ևս առաջամարտիկը դարձյալ Նոր Զուղան էր, որի տպարանը լույս ընծայեց Աղեքսանդր Վարդապետի (հետագայում Էջմիածնի կաթողիկոս Աղեքսանդր Զուղայեցի) «Գիրք որ ասի վիճարանական» գրվածքը, Յովհաննես Մրցուգ վարդապետի «Գիրք իսկապես համառոտ վասն ճշմարիտ հաւատոյ», Ստեփաննոս Զուղայեցու «Գիրք հականառական ընդդեմ պապականաց» գրքերը, ինչպես նաև «Մատեան հակառակ երկարնակաց» գիրքը, որի լույս ընծայման առթիվ միայն Երևանու կառավարության առջև հայերին գրպարտում են, որ իրը նրանք «հակառակ վարդապետութեամն դուրանի տպեալ են զնատեամն»: Նոր Զուղայի գաղթօջախի համար պայցարը միարարական շարժման դեմ ոչ միայն ծախողեց «հոգիների որսը» Նոր Զուղայում, այլևս ընդհանրապես կաթոլիկ քարոզչությունը Պայաստանում և հայ գաղթօջախների մեջ նաևում: Սիմեոն, Ստեփաննոս, Աղեքսանդր, Յովհաննես Զուղայեցիների հակամիարարական պայցարը իր նշանակությամբ

դուրս էր գալիս տեղական սահմաններից և ձնոք էր բնում համահայկական հնչեղություն:

Շարդենը հիասքափությամբ գրում էր. «Ես խոսքեր չունեմ նկարագրելու այն խորամանկություններն ու ծախսերը, որն օգտագործում էր Դումի պապի արուը այդ նպատակի համար (նկատի ունի Նոր Չուղայում հոգիների որսը Վ. Բ.): Սակայն այդ բոլորը չհանգեցրեց ցամկալի արդյունքի: Միսիոներները որոշ հաջողություններ ձեռք բերել են արևելյան քրիստոնյաների շրջանուն, ի բացառյալ, սակայն, հայերի»: Չհասկանալով իրենց անհաջողությունների պատճառը, միսիոներները դա վերագրում էին սատանայի ներշնչմանը:

Դարձ է նաև նշնչ, որ միջազգային առարտով գրադվոր ջուդայեցի խոջաները շփում էին ամենատարրեր երկրների ու ժողովուրդների հետ: Այդ շփումները չեն կարող չազդել նրանց քաղաքական մտահորիզոնի վրա: Միաժամանակ նրանք Եվրոպայից Իրան էին ներմուծում և հայ բնակչության շրջանում իրացնում ոչ միայն Եվրոպական ապրանքներ, այլև Եվրոպայում տարածված առաջավոր գաղափարներ:

ՆՈՐ ԶՈՒՂԱՆ ՈՐՊԵՍ ՀԱՍՏԱՏՎԿԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Նոր Զուղան և առհասարակ Իրանի հայ գաղթօջախները իրենց բազմադարյա գոյության ընթացքում ստեղծել են վերին աստիճանի ուշագրավ և արժեքավոր մշակութային արժեքներ: Դայաստանից Իրան գաղթեցված հայությունը իր հետ տարել է ոչ միայն մշակութային արժեքներ ձեռագրեր, արվեստի արժեքավոր ստեղծագործություններ և այլն, այլև հայ մշակույթի լավագույն ավանդույթները և դրանք արևատավորել իրանական հողում: Նոր բնակավայրում բարերար ազդեցություններ կրելով իրանական հարուստ մշակույթից և իր հերթին ազդելով նրա վրա, հայ վարպետները հայկական և տեղական մշակույթների համադրությամբ ստեղծել են ինքնատիպ և իր տեսակի մեջ անկրկնելի մի մշակույթ, որն իսկապես արժանի է հասուկ ուշադրության:

XVII-XVIII դարերում իրանահայ և առհասարակ հայ մշակույթի ամենաաշքի ընկնող կենտրոններից է հանդիսացել Նոր Զուղան, ուր կենտրոնացած են եղել մեծ քվով ճարտարապետներ, նկարիչներ, քանդակագործներ, ձեռագիր ծաղկողներ և մտավոր աշխատանքի մարդիկ: Այսօր էլ Սպահանի արվարձան Նոր Զուղայում կարելի է տեսնել ու հիանալ հայ վարպետների կողմից կատարված անկրկնելի նկարագարությունները: XVII դարի 30-ական քվականներից սկսած Նոր Զուղայում սկսվեց լուսավորական ուժեղ շարժում: Միաժամանակ հայություն ձևով սկսեց զարգանալ մտավոր-մշակութային կյանքը, որն անկանությամբ հայ ժողովողի հոգևոր գանձարանը հայութացնելով ուշագրավ արժեքներով, համահայկական տարողությամբ նշանակություն ձեռք բերեց: Անկանությամբ Նոր Զուղան ուշ միջնադարի շրջանում բացառիկ կարևոր դեր է խաղացել հայ ժողովողի ազգային-մշակութային առաջադիմության գործում: XVII դարում հայ իրականության մեջ Նոր Զուղան ոչ միայն կարևորագույն մշա-

Կութային կենտրոն էր, այլև, առանց վերապահության կարելի է ասել, որ գնրազանցապես նա էր տոն տալիս հայ մշակութային կյանքի մի շարք բնագավառներին, դրանց հաղորդելով նոր շունչ ու կենսունակություն:

Զուղայեցի վաճառականները առևտրական գործերով լինելով աշխարհի տարբեր ծագերում, անգնահատելի ծառայություններ էին նաև առաջարկություններ ինչպես հայ, այնպես էլ իրանական ժողովողին տարբեր ժողովուրդների մշակութային արժեքներին հաղորդակից դարձնելու գործում: Եվ ընդհակառակը, նրանք նպաստում էին այն քանին, որ, օրինակ, նվրոպացիները ծանոթանանական և ընդհանուր արևելյան մշակույթի հետ:

Նոր Զուղայի գաղրօջախը հանդիսացել է հայ գրչության կարևորագույն կենտրոններից մեկը, ուր ծաղկել է գրչագրությունը: Դեռևս 3ին Զուղան հայտնի էր որպես նշանակոր գրչօջախ, որտեղ մանրանկարվել ու քազմացվել են քազմաքիչ ձեռագրեր: Տեղահանության պատճառով, այդ արվեստն ու ավանդույթը կարճ ընդմիջումից հետո նոր քափով գարզացավ Նոր Զուղայում: Այստեղ գրվել են մի քանի հարյուրի հասնող գրչագրեր: Այնտեղ կենտրոնացել են նաև Պայաստանում X-XVI դարերում գրված գրչագրեր: Նոր Զուղայում առաջին գրչագիրը գրվել է 1607թ. մանրանկարիչ Դակոր Երեցի ձեռքով: Գրչագրի հիշատակարանում կարդում ենք «Լ թվականիս հայոց ՈԾԶ (1607) ամի Եղի աւարտ ի Շոշ քաղաքս, որ է Սպահան»: Յիշատակարանում եղած «և Եղի աւարտ»-ը ցույց է տալիս, որ գրչագիրը ավելի շուտ է սկսել գրվել՝ 3ին Զուղայում և ավարտվել է 1607 թ. Նոր Զուղայում: Գրչագրում նկարագրվում է շահ Աբրասի կողմից հայերին քանի գաղթեցնելը:

Վերջին գրչագիր ավետարանը, որ գրվել է Նոր Զուղայում, դարձյալ պատկանում է Դակոր ամունով մի ցուղայեցու, որն այն գրել է 1930 թվականին:

XVII-XVIII դարերում, երբ տարբեր տեսակի բռնավորների կողմից Նոր Զուղան նաև նվազագույն գաղթեցնելու մեջ մտնելու համար առաջարկություն է տալիս հայության առաջնային կենտրոնը:

բալանի ու կողոպուտի, մեծ թվով գրչագիր մատյաններ կորստի են մատնվել: Ազատ խանի ժամանակ (XVIII դ. 50-60-ական թթ.), օրինակ, Զուղայում եղած գրչագրերը չնշին արժեքով վաճառվել են խանութպաններին, որպես փարերի թուղթ գործածելու համար:

Սինէս 1840-ական թթ. Նոր Զուղայում չի եղել հատուկ մի տեղ, որտեղ պահպանվեին մեծարմեք գրչագրերը և ծեռագիր մատյանները: Դրանք պահպել են Ս. Ամենափրկչյան վանքի միաբանների մոտ, գուրկ խնամքից: Սիայն 1842 թ. հետո, երբ Շովիհաննես եպիսկոպոս Սուրենյանը նշանակվել է Նոր Զուղայի թօնակալ առաջնորդ. նրա ջանքերի շնորհիվ գործերն ու գրչագրերը հավաքվել են, ցուցակագրվել և տեղավորվել առանձին գրապահարանների մեջ: Խակ հետո, 1844 թ. հիմք է դրվել առաջնորդարանին լից նախենադարանին: 1930 թ. հիմնադրվում է նաև վանքի թանգարանը: 1971 թ. թանգարանի համար կառուցվել է Նոր շենք:

Առաջին անգամ Նոր Զուղայի վանքի գրչագրերի ցուցակը կազմելուն ծեռնամուխ է լինում անվանի թանասեր Գալուստ Շերմագանյանը (1835 թ.):

Ներկայումս Նոր Զուղայում գրված գրչագրերի մեծագույն հավաքածուն գտնվում է հենց Նոր Զուղայում: Խակ երկրորդ մեծագույնը՝ Երևանի Ս. Մաշտոցի անվան Մատենադարանում: Նոր Զուղայի գրչագրերից կան նաև Երուսաղեմի, Վիեննայի, Վենետիկի, Վատիկանի, Բրիտանական թանգարանի, ԱՄՆ-ի մի շարք թանգարանների ու համալսարանների գրադարաններում, ինչպես նաև անհատ անձանց մոտ:

Նոր Զուղան հայտնի է եղել նաև նույր մագաղաքներ պատրաստելու արվեստով: Նրա գրչագրերի հավաքածուում գտնվող մի ավետարան գրված է այդպիսի նույր մագաղաքի վրա: Այն աչքի է ընկնում նաև ուսկեզօծ ու գունագեղ նկարագարդմամբ: Այդ գրչագրում գեղեցիկ մանր բոլորագրով գրված է. «Այդ գրւեցաւ սաղարթափրիք բուրաստանս և անգին մարգարիտս որ կո-

չի Աւետարան: Ի թուականութեանս հայոց ՌՅ և Թ (1660), ի քաղաքն Սպահան, ի գեօդն որ կոչի Զուղա, ընդ հովանեաւ Սուրբ Աստվածածնի...»:

Առհասարակ մանրանկարչությունը, զարդագրություններն ու ծաղկումները Նոր Զուղայի արվեստագետների մոտ չափազանց մեծ տարածում են ունեցել: Նոր Զուղայում գրված մեծ թվով գրչագրեր, հատկապես Ավետարան, Աստվածաշունչ, Դայսմավուրք, Խորհրդատետր և այլ գրքեր զարդարված են գեղեցիկ պատկերներով, խորաններով, կիսախորաններով, ճակատագրդերով, լուսանցքագարդերով և գանազան ծեփ տառատեսակներով, հավքագրերով, մարդագրերով, ծուկ ու կենդանագրերով, մարդապատկերներով և տարրեր տեսակի զարդարանախշերով: Այդ նկարագարդուններից ու ծաղկագարդուններից ոմանք գումազել են ու ոսկեզօծ, զարդարված ոսկյա և լաջվարդյա և այլ երանգ-երանգ գլուխներով: Նոր Զուղայում գրված գրչագրնորի հավաքածուն առանձին ալբոմով լույս է տեսել 1986 թ. Բելգիայում, Մեծի Տանն Կիլիկիո Կարողիկոսության կողմից, Գարեգին Բ վեհափառի (հետագայում Ամենայն հայոց կարողիկոս Գարեգին Ա-ի) նախարարով, պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսիսյանի ներաժական խոսքով և պրոֆ. Արքակ Միսիքարյամի ջամբերով: Նոր Զուղայի գրչագիր մանրանկարները տեղ են գտել նաև «Դայկական մանրանկարչություն» և «Դայկական մանրանկարչություն» ալբոմներում: Ուշագրավ է նշել, որ Զուղայում տղամարդկանցից բացի եղել են նաև կիմ գրիչներ: Դամանայն 1659 թ. Դակոր Գրիշի կողմից գրված « ճաշոց»-ի, այնտեղ հիշատակված են այդ օրերի գրիչների անունները, «Կրկին անգամ յիշեցեք ի Քրիստոս այսմ արհեստի, որ շնորհօք Տեառն կամք յայսմ ժամանակի, նախ գՏեր Աստուածատուրն, Երկրորդ գՅովիհաննեսն, Երրորդ գՄարկոսն, չորրորդ գՅարութիւնն, հինգերորդ գՅովսէփին, վեցերորդ տառապեալ Յակորոս... յիշեցեք զվարպեան իմ զարհեստ գրչութեանս, գԱստուածատուր քահանան,

որ հանգուցեալ է առ Թրիստոս և զմարմնաւոր ծնօղսն իմ գեվազն և զՄարգարիտն»:

Մեզ է հասել նաև Զուղայի հետևյալ կին գրիշների անունները. կույս Սառա (Դաշտեցի), կույս Իշխան, կույս Վարդիսաթուն (Վարդի): Զուղայեցի անվանի ու հարուստ խոջաներից շատերը հանդես են եկել որպես արվեստի տարրեր ճյուղերի մեկենասներ: Դայագետ Գարեգին Շովանքիյանը գրում է, որ «խոջա Սաֆար և եղբայր Խոջա Նազար և սորա որդին Սաֆրազ և ուրիշներ հայտնի են իրու մեկենասներ հայ գրչության և մանրանկարչության»:

Կազմարարությունը ևս այնքան էր զարգացել Նոր Զուղայում, որ Ար. Եջմիածնից գրեթե ուղարկում էին այնտեղ կազմելու: Գրքերի կաշենկազմերը հաճախ զարդարվում էին Տերունական պատկերներով, գեղեցիկ խորաններով ու ճաշակավոր եգրազարդերով ու գծազարդերով: Սովորական կաշենկազմերից բացի, երբեմն կաշվի փոխարեն, կամ դրանց վրա, մասամբ պատում էին արծարով կամ ամբողջությամբ կարմիր թավշիչով ու վրան արծաթյա խաչով ու անկյուններում հրեշտակներով և կամ ամբողջությամբ պատում էին քանդակազարդ ու դրվագիված արծաթով, որին ասում էին «Կոստոյ»:

XVII-XVIII դարերում Նոր Զուղայում մեծ զարգացման է հասել նաև նկարչությունը, ճանրանկարչությունն ու որմնանկարչությունը: Դժրախտաբար այդ զաղթօջախում XVII դարում ստեղծված հայ գեղանկարչության արժեքներից շատերը չեն դիմացել ժամանակի փորձություններին և չեն հասել մինչև մեր օրերը: Սակայն այնուհանեցր Ամենափրկիչ վանքի եկեղեցում, քանդարանում, զանազան եկեղեցիներում, մասնավոր տներում և այլն պահպանվել են քավական թվով աշխատանքներ, որոնք պատկերացում են տալիս ժամանակի հայ մարդու գեղարվեստական ըմբռնումների մասին: Մեզ հասած փաստերը վկայում են, որ Նոր Զուղայի զաղթօջախում եղել է նկարչական մի դպրոց, որի ներկայացուցիչները իրենց վարպետությամբ, ար-

վեստի բազմազանությամբ և քարծր գեղարվեստական ճաշակով աչքի են ընկել որպես իրանահայ արվեստում վրձնի անզուգական վարպետներ: Նրանք գարնանայի ճաշակով ու վարպետությամբ նկարազարդել են Զուղայի հայկական եկեղեցիները (Ա. Ամենափրկիչ, Կատարինե կամ Կուսանաց անապատ, Ար. Նիկողայոս եկեղեցի, Շեքեհեմի եկեղեցի և այլն), խոջայական ապարանքները, հայկական ծեռագիր մատյանները, ինչպես նաև գծել են իրենց ժամանակի նշանավոր անհատների դիմանկարները: Կարծիք կա այն մասին, որ հայ նկարիչներն են Եվրոպայից Իրան մտցրել կտավների վրա նկարելու արվեստը: Դամենայն դեպք անժևտելի է, որ նրանք ազդեցություն են գործել իրանական նկարչական արվեստի վրա, իրենց հերթին ազդեցույրուններ կրելով նրանից:

Նոր Զուղայի վանական դպրոցում կրոնական ու աշխարհիկ գիտելիքների հետ մեկտեղ դասավանդվում էր նաև մանրանկարչության, գեղագրության և գրչագրության արվեստը: Մանրանկարչությամբ է գրադվել նաև Նոր Զուղայի առաջնորդ Խաչատուր վարդապետ Կեսարացին:

Զուղայի մանրանկարիչներից հատկապնյա աչքի են ընկել Մեսրոպ դափիր Խիզանցին, Գասպար Երեցը, Զաքարիա քահանա Վանեցին, Դայրապետ դափիրը, Դակոր Երեց Զուղայեցին, Ստեփանոս Երեց Զուղայեցին և շատ ուրիշներ: Զուղայեցի գրիչներից և ծաղկողներից ոմանք ոչ միայն գործել են Նոր Զուղայում, այլև նրա սահմաններից դուրս, հետու ու մոտիկ հայարձնակ զանազան վայրերում, իրենց հետ տամելով հայ գրչության այդ օջախի արվեստը: Այդ նկարիչներից էին Մկրտիչը, Աղամալ Զուղայեցին և ուրիշներ:

Իրանահայ որմնանկարչության և մանրանկարչության ամենավառ դեմքերից է եղել Մինաս Ծաղկողը, որի մասին ամենաարժեքավոր ու միակ հավաստի աղբյուրը նրա ժամանակակից Առաքել Դավթիմեցու հաղորդաժ տեղեկություններն են: Պատմիչը վկայում է, որ Մինասը ժնվել է Նոր Զուղայում («ի ցե-

դեն Զուղայեցւոց»), Երիտասարդ տարիներին մեկնել է Յալեա և ուսանել «Ֆրանկ» վարպետի մոտ և վերադառնալով Նոր Զուղա գրադի «պատկերահամությամբ»:

Մինաք նկարագարդել է խոշա Սաֆրագի տունը, շահ Արքասի պալատները, Զուղայի Շահրիմանյանների եկեղեցին և այլ շինությունները: Ենթադրվում է, որ նա կատարել է նաև էջմիածնի տաճարի մի քանի որմնանկարները: Նրա «Շրադյանի դիմանկարը» և «Բագեակիրը» նկարները չեն պահպանվել: Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի թանգարաններում պահպանվել են երկու դիմանկար, որոնք վերագրվում են Մինասին: Այդ դիմանկարներում պատկերված են Նոր Զուղայի նշանավոր խոչաներ, իայր ու որդի Յակոբօս և Ռուկան Վելիջանյանները:

Դավրիդեցին հիշատակում է նաև նկարիչ Յակոբօսանի անունը, չմանրամասնելով նրա կյանքն ու գործունեությունը, միայն նշելով, որ նա կրում էր «Անաղոաշ թաշի» (Նկարիչների ավագ) արքունական տիտղոսը: Մեզ են հասել նաև նորջուղայեցի մի շարք այլ նկարիչների անուններ, ինչպես օրինակ, Միմեոն, Միջայել, Ստեփաննոս, Կիրակոս, Բարսեղ, Յովիաննես, Ալետ, Կարապետ, Դավիթ, Արով և այլն:

Նորջուղայեցի հմուտ դավանաբան, փիլիսոփա, տրանսքամ, ցերական, աստվածաբան Յովիաննես Մրգուզը, որն օժտված է եղել նաև գեղանկարչական փայլուն ծիրքով, նույնպես հայտնի է որպես հմուտ ու տաղանդաշատ նկարիչ: Ժամանակակիցները նրան անվանել են «տոխեգերալոյս փիլիսոփա», «թագաւորաց աստուածաբան» և այլն: Յովիաննես Մրգուզը պատկերագրել է Ս. Ամենափրկիչ եկեղեցին «հրաշազան պատկերօք»: Իրենց պալատները նկարագարդելու համար Զուղայեցուն հաճախ հրավիրել են նաև պարսից թարձրաստիճան իշխանավորները: Զուղայեցու գեղանկարչական ստեղծագործությունները բարձր գնահատականի են արժանացել ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա սերունդների կողմից:

Նոր Զուղայի Ծկարչության լավագույն ներկայացուցիչներից է հանդիսացել Բոգդան (Բուղդան) Սալբանովը, որը ծնվել էր Նոր Զուղայում, սակայն իր կյանքի երկրորդ մասը անց էր կացրել Մոսկվայում, ստեղծագործելով XVII դարի ռուսական զեղանկարչության կենտրոն Մոսկվայի Զինապալատում, որտեղ նա աշխատել է մոտ քառասուն տարի: Սալբանովի պյոնձն պնակի վրա կատարված Ենոնարդո Դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» պատճենահանությունը ջուղայեցի խոջա Զաքարը նվիրել է ուսաց Ալեքսեյ Միհսայլովիչ ցարին: Սալբանովը ցարական արքունիքի կողմից հրավիրվում է Մոսկվա, որտեղ մեծ հոչակ է ծեղոց բերում սրբանկարներ նկարելու արվեստի մեջ: Դանձինս Նոր Զուղայի վերոհիշյալ Ծկարիչների, հայկական կերպարվեստը, մասնավորապես գեղանկարչությունը, առաջին քայլերն էր կատարում մերժենալու նոր ժամանակաշրջանի եվրոպական արվեստին և նրա նվաճումները արմատավորելու հայ իրականության մեջ:

Մեծ է նոյն ջուղայեցի խոջաների հետարրությունը արվեստի ստեղծագործությունների Ծկատմամբ: Տավերնին վկայում է, որ նրանք ի թիվս եվրոպական զանազան ապրանքների, վաճառքի համար Իրան էին ներմուծում և Սպահանի Մայդանե շահի խանություններում վաճառում Վենետիկից: Լիվոնովից, Նյուրնբերգից և այլ վայրերից բերված գեղանկարներ ու փորագրություններ:

Այսպիսով, նրանք մեծապես նպաստում էին եվրոպական արվեստի ու մշակույթի հետ իրանահայության ու առհասարակ իրանական ժողովրդի շփումներին, նրանց գեղագիտական ճաշակի բարձրացնանք: Ժամանակակից վկայությամբ, Նոր Զուղայի քալանբար Սաֆրազ բեկի տան հյուրասենյակում կախված էին նկարներ, որոնցում պատկերված էին տարրեր ժողովուրդների տարագներով կանայք:

Նոր Զուղայում բարձր զարգացման է հասել նաև ճարտարապետությունը, որի վկայությունը խոջայական շքեղ ապարանք-

ներն են, բազմաթիվ եկեղեցիները, հասարակական շինուքյունները, ինչպես նաև Զուրայի գերեզմանատան նուրբ ու բարձրարվեստ գարդամկարներով քանդակված խաչքարերն ու շիրմաքարերը:

Առհասարակ այդ գաղթօջախում շարունակվեցին Դին Զուրայում բարձր գարզացնան հասած խաչքարերի ու տապանաքարերի, ինչպես նաև դեկորատիվ գարդաքամդակի արվեստի լավագույն ավանդույթները:

Առաջեւ Ղափրիժեցին Նոր Զուրայում եկեղեցաշինուքյան մասին արտահայտվում է անթաքույց հիացմունքով. «Սոյնպէս շինեցին և գեկեղեցիսն իրաշագան յօրինվածովք ըստ արժանույն փառացն Աստուծոյ, Երկնաննան խորանօք, և գնրանքարձ կաթողիկէիք, բովանդակ ծաղկեալ պէս պէս երանգովք ուկուք և լաջվարդով, տնօրինականօք Տեառն և պատկերովք սրբոց. Եւ ի գլուխ կաթողիկէից ամենայն եկեղեցեաց կառուցեալ գնջան սրբոյ խաչին նոցին եկեղեցեացն ի պատկ և ի պարժանս քրիստոնէից»:

Նոր Զուրան հիմնադրվելուց հետո տարագրյաները հիմնադրել են մի փոքրիկ վանք. այն անվանելով Ամենափրկիչ ի հիշատակ Դին Զուրայի նույնանուն վանքի: Սակայն Զուրայի հասարակության կողմից հանգանակված միջոցներով 1654 թ. Սեծ Սեղյան թաղամասում հիմք է դրվում Ամենափրկիչ նորոգ վանքի շիամարարությանը, որն իր ավարտին է հասնուն տասը տարուց հետո (1664 թ.): ճարտարապետական ուրույն ոճ ունեցող և «գեղեցիկ յօրինվածովք» կառուցված այդ շինուքյունը այսօր էլ հիացնում է այցելուներին: 1654 թ. կառուցվել է նաև Ամենափրկիչ վանքի Շովսեփ Պարեմաթացու եկեղեցին:

Ըստ որոշ տվյալների, Նոր Զուրայում Ամենափրկիչ վանքից ու Կուսանաց անապատից բացի եղել է ևս 24 եկեղեցիներ, որոնց մի մասը հանդիսացել են մեծահարուստ խոշաների տոհմական աղոթատեղիները: Այդ եկեղեցիներն ունեցել են հետևյալ անվանումները. Ս. Նազարեթ, Մուրադենց Սուրբ Պա-

կոր, Սուրբ Թոմա, Շահվելենց Սուրբ Յովիհաննես, Սուրբ Դակոր Բաղաթա, Սուրբ Սարգիս կամ Օհանի Վանք, Մեծ Սեյդանի Բերդեհեմ, Սուրբ Գևորգ, Սուրբ Անանիա Սուաքյալ, Սուրբ Աստվածածին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Մտեփաննոս, Սուրբ Յովի, Սուրբ Յովիհաննես Սկրտիչ, Սուրբ Նիկողայոս Յայրապետ, Սուրբ Ավետյաց կամ Սուրբ Ներսես, Սուրբ Մինաս և այլն: Ըստ Հ. Տեր-Յովիհաննեցի, մինչև XIX դարը կանգուն էին մնացել 17 եկեղեցիներ, իսկ մնացածները տարբեր ժամանակներում ավերվել ու անհետացել են: Ներկայումս Նոր Զուղայում բացի Ս. Ամենափրկչյան և Ս. Կատարինյան (Կուսանաց մենաստան) վանքերից կամ ևս ինը եկեղեցիներ. Ս. Աստվածածին, Ս. Պակոբ, Ս. Բերդեհեմ, Ս. Գևորգ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Յովիհաննես Սկրտիչ, Ս. Մինաս, Ս. Ներսես, Ս. Նիկողայոս: Յիշյալ եկեղեցիներից ոչ բոլորն են գործող:

Ողջ իրանահայ թնակզության եկեղեցական և հասարակական գործնքը ղեկավարելու համար 1606 թ. ստեղծվում է թեմ, որի կենտրոնը դառնում է Նոր Զուղան: Այս թեմի անունը XVIII դարից սկսած մինչև 1960 թ. պաշտոնապես նոյն է Իրանա-Յնդկաստանի կամ Պարսկա-Յնդկաստանի Պայոց թեմ, որովհետև Նոր Զուղայից Ս. Ամենափրկչի վանքի առաջնորդը հոգևոր հովիվներ է ուղարկել նաև Յնդկաստանում և Յեռավոր Արևելքի երկրներում գտնվող հայ համայնքների համար:

Թեմի առաջնորդանիստ կենտրոնը 1606 թվականից մինչև օրս հանդիսանում է Նոր Զուղան, որտեղ թեմակալ առաջնորդի նստավայրը Ամենափրկչի վանքն էր: Աստիճանաբար թեմն ընդարձակվում էր, իր կազմի մեջ ներառելով նաև Բասրան, Բաղդադը, Բարուպը, Մինգապուրը, Բաթավիան և Պարավ-Արևելյան Ասիայի մի շարք այլ երկրներ ու քաղաքներ: Այսպիսով, որպես հայ Առաքելական եկեղեցու թեմական կենտրոն, Նոր Զուղան նշանակալից դեր էր խաղում ոչ միայն իրանահայերի, այլև մոտիկ ու հեռու այլ զաղբօջախմերի հայության հասարակական-մշակութային կյանքում:

Բուն Իրամում Ամենափրկյան վաճրի վիճակավոր քաղաք-ներն էին Զուղան, Շիրազը, Բուշեհրը, Թեհրանը, Չամադանը, Ռաշտը, Էնգելին, Բաշամը և Ղազվինը: Բացի այդ, թեմի կազմի մեջ մտնում էին նաև Սպահանի նահանգի ութ գավառներ՝ Ղա-րադանը, Սալայիրը, Ջազազը, Գյափլան, Ջյամարան, Բուրվա-րին, Փերիան և Շիարմիալը, որոնք բոլորը միասին ունեին 74 հայկական գյուղեր:

Նոր Զուղայի առաջնորդները ի սկզբանե նշանակվում էին եջ-միածնի կողմից, Վեհապատ կարողիկոսի կոնդակով: Զուղայի առաջնորդը ոչ միայն թեմի հոգևոր առաջնորդն էր, այլև պար-սից շահերի հրովարտակներով ճանաչվում էր որպես «ազգա-պետ և ծայրագույն դատաւոր ժողովրդեան Յայոց Պարսկաս-տանի»:

XVII-XVIII դարներում Զուղան աշխարհիկ, վարչական ու քա-ղաքական առունով կառավարվում էր քալանթարների կողմից: Սակայն XIX դարում, երբ քալանթարների դերը նվազեց և ապա իսպատ անհետացավ, գաղրօջախի կառավարման գործը թե՝ հոգևոր և թե՝ քաղաքական առունով ամբողջապես ծանրացավ թեմակալ առաջնորդների վրա: Ենտևարար գաղրօջախի իս-դադությունը, հանգստությունը և ամորորը մեծապես կախված էր առաջնորդի անձից և նրա անծնական հատկանիշներից: Եթե նույնիսկ այս կամ այն հարցի կապակցությամբ շրջանցելով առաջնորդին, ջուղայեցիները դիմեին իրանական իշխանություններին, վերջիններս դարձյալ գործի վերաբերյալ հարցում էին կատարում առաջնորդին: Այլ կերպ ասած, գործը գրեթե վերջանում էր ըստ առաջնորդի կամքի:

Նոր Զուղայի եականությունը, փաստորեն, կարողացել էին հայ եկեղեցու նվիրապետության կազմում ապահովել իրենց համար գրեթե այնպիսի ինքնուրույն վիճակ Իրանի սահմաննե-րում և նորջուղայեցիների կողմից ստեղծված հայկական գաղ-րօջախմերում, ինչպիսին ծեռք էին բնրել Կոստանդնուպոլիսի

պատրիարքները Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող երկրամասերում:

XVII դարում Նոր Զուղայի թեմակալ առաջնորդներն են եղել Մեսրոպ Զուղայեցին (1608-23), Խաչատոր Կեսարացին (1623-29), Պողոս Տիվրիկեցին (1629-30), Զարարիս Վարդապետը (1630-31), Խաչատոր Կեսարացին (1631-46), Ղալիթ Զուղայեցին (1652-83), Ստեփաննոս Զուղայեցին (1683-96), Աղեքսանոր Զուղայեցին (1698-1706), Մովսես Զուղայեցին (1706-1724) և այլն:

1902-1912 թթ. և 1920-1924 թթ. թեմի առաջնորդն է եղել Սահակ Արքապիսկոպոս Այվատյանը: Նրանից հետո թեմը գլխավորել է եպիսկոպոս Մեսրոպ (Մագիստրոս) Տեր-Մովսեսյանը (1926-1930): 1930 թ. ընդհուպ մինչև 1945 թ. Նոր Զուղայի թեմակալ առաջնորդի տեղը թափուր էր: 1945թ. Եջմիածինը այստեղ ուղարկեց նոր առաջնորդ, եպիսկոպոս Վահան Կոստանյանին, որը պաշտոնավարեց մինչև 1949թ.:

1949-1961 թթ. ընթացքում Իրանա-Դնդկաստանի թեմը առաջնորդ չի ունեցել: Մինչև 1958 թ. այն վարչականորեն կապված է եղել Ս. Եջմիածնի կաթողիկոսության հետ: 1958 թվականից թեմն անջատվեց Եջմիածնից և վարչականորեն միացավ Մնծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: 1961 թվականից սկսած մինչև օրս թեմն ունեցել է Անրիլիասից եկած յոթ առաջնորդներ:

Ի դեպ, 1958 թվականին, Դնդկաստանի և Շեռավոր Արևելքի հայ համայնքները անջատվելով Իրանա-Դնդկաստանի թեմից, մնացին որպես Եջմիածնի կաթողիկոսությանը ենթակա հարամվանություններ: Ուստի Իրանա-Դնդկաստանի թեմ անվանումը փոխվեց Սպահանի և Ջարավային Իրանի հայոց թեմի:

Մինչև 1979 թ. խլանական հեղափոխությունը Նոր Զուղան ունեցել է 10 հազար հայ բնակիչ: Այժմ հայերի թիվն այնտեղ հաստատապես նվազել է: Ըստ Նոր Զուղայի Առաջնորդարանի տվյալների, XX դարի 90-ական թվականների վերջերին այնտեղ

ապրում էր շուրջ 7000 հայ բնակչություն: Նոր Զուղան հանդիսանում է Սպահանի կարևորագույն շրջամաներից մեկը:

Ներկայում այնտեղ կան հետևյալ գործուն հաստատությունները և միությունները. «Գիշերօթիկ» (նախկին որրանոց) հաստատություն, «Նոր Զուղայի հայոց ազգային ծերանոց», «Պողոսիսամյամ ավանդից հանձնաժողով», «Ն. Զ. Դայ կանանց գրության միություն», «Ն. Զ. Դայուիյաց քարեզործական ընկերություն», «Փերիո կրթասիրաց» և «Չահարմահալի ուսումնասիրաց» միություններ իրենց մասնաճյուղերով, «Մամուրայի Արշալույս Միություն», «Ն. Զ. հայ մարգա-մշակութային Արարատ միություն», «Իրանահայ ազգային-մշակութային միության» Նոր Զուղայի մասնաճյուղ:

Թեմական խորհրդին անմիջականորեն ենթակա մարմիններից են՝ Թեմի կրթական խորհրդը (Նախկին Նոր Զուղայի Դայոց դպրոցների հոգաբարձությունը), Թեմի մշակութային հանձնախումբը, Քարեզմանատան քարեզարդման հանձնախումբը, Թեմի կալվածա-տնտեսական մարմինը, Սր. Ամենափրկչյան վանքի «Կոմիտաս» երգչախումբը և այլն: Կրոնական խորհրդի ենթակա մարմիններն են Կտակային տեսչությունն ու Նոր Զուղայի Դայոց եկեղեցնեաց վարչությունը:

Առաջնորդարանին ենթակա Նոր Զուղայի հայոց կրթական հաստատություններն են՝ մանկապարտեզը, նախակրթարանը, տղաների և աղջիկների տարրական երկու առանձին դպրոցները «Արմեն» անունով, ինչպես նաև տղաների և աղջիկների երկու առանձին ուղեցույց և միջնակարգ դպրոցները «Կատարինյան» (արական) և «Գևորգ Քանանյան» (իգական) անունով:

XVII դարում Նոր Զուղան համեստացնել է լուսավորության ու կրթական գործունեության ամենաաշքի ընկնող կենտրոններից մեկը ողջ հայ իրականության մեջ: Այստեղ էր կենտրոնացված ոչ միայն Իրանա-Դնդկաստանի թեմի մեջ մտնող երկրների լուսավորչական ու հոգևոր հասարակական կյանքը, այլև առանց չափազանցության նաև Դայաստանի և նրա սահմաններից

դուրս գտնվող բազմաթիվ հայ գաղրօջախների կրթական կյանքը: Երբ 1623 թ. Նոր Զուղայի թեմակալ առաջնորդ է դատում Սյունյաց մեծ անապատի սան, ժամանակի կրթված ու լուսավորյալ անձնավորություններից Խաչատուր Կեսարացին, նրա նախածեռնությամբ ու ջանքերով Ամենափրկյան վանքին կից հիմնվում է մի դպրոց, կամ ինչպես այն ժամանակ են կոչել՝ հանալսարան, որտեղ դասավանդում էին ամենաթագմապիսի առարկաներ երաժշտություն, բանաստեղծություն, համարողական արվեստ, քննականություն, փիլիսոփայություն, բնական գիտություններ, աստվածաբանություն և այլն: Այս դպրոցը տվել է մի շարք նշանավոր գործիչներ, որոնք կարևոր դեր են խաղացել ոչ միայն հիշյալ գաղրօջախի նտավոր ու բարոյական առաջնքաց շարժման, այլև համայն հայկական լուսավորական-մշակութային կյանքում:

XVII դարում Նոր Զուղայի դպրոցներից աչքի ընկնող դեր է խաղացել նաև Ամենափրկյան վանքի վանական դպրոցը: Զուղայեցի խոջաները հոգ էին տանում, որ իրենց երեխաները սովորեն «հաճարակալութիւն, գիտարակ ընթերցումն գրոց և զգրագրութիւն»: Այլ կերպ ասած, դպրոցների հիմնական խնդիրներից մեկն է եղել երեխաներին սովորեցնել «արվեստ վաճառականության» և գործնական կյանքի համար պիտանի այլ առարկաներ: Այդ նպատակով վաճառական դպրոցի դասապետ Կոստանդ Զուղայնցին 1685 թ. գրում է մի դասագիրք «Աշխարհաժողով գիրք» կամ «Վասն նորահաս մանկանց և երիտասարդաց վաճառականաց խորատ» վերնագրով, ուր բազմապիսի տեղեկություններ կան աշխարհի տարրեր երկրների առևտրական-տնտեսական կյանքի, արտադրության գործությունների, չափերի ու կշիռների, շրջանառության մեջ գտնվող դրամական միավորների, այս կամ այն երկրի աշխարհագրության, նրանցում ապրող ժողովուրդների կրոնի, բարքերի ու սովորույթների մասին և այլն: Այդ դպրոցում ուսումնասիրվել են նաև եվրոպական ու ասիական լեզուներ: «Աշխարհաժողով»-ը ավելորդ անգամ

վկայում է, որ չափազանց լայն են եղել աշխարհագրական այն սահմանները, ուր հասել են ջուղայնցի վաճառականները:

«Աշխարհամոլով»-ում Կոստանդ Զուղայեցու տված վաճառականական խրատներն ինչպես նշվեց, ունեին գործնական նշանակություն: Օրինակ, «մի երթիցես միայն ի ճանապարհ, անփորձ և անճանաչ ընկերի հետ մի նատիցես և մի քնիցես, գուց սպանց զբեզ և առց գինչս քո, պաշարն ի տաշտե՛ առ ընկերն ի տանեղ, քաղաքն ի ծոցդ պահեա, գրիչ դանքարն ի ջուպդ պահեա, դանքարն ի թանքալիրդ կշեռցն իւր գրամներովն ի միտեամդ, կիսազազն ի գօտիդ, խելք ի գլուխոդ, միտք առ Աստուած, ինչ Աստուած շնորհեսցէ ցեզ նովաւ շատացիր... անփորձ ճարդոյ աճանաք մի տար, զամննայն առ և տուրդ գրեա՛ և ես օրեն վաղմ մի ձգեր...»:

XVII դարում Երանի մի շարք հայաբնակ վայրերում Շիրագում, Սպահանում և այլն Եվրոպական կաթոլիկ միսիոներները քաց են ամում դպրոցներ՝ բացառապես հայ երեխաների համար: Նույնանման մի դպրոց հիմնադրվում է նաև Նոր Զուղայում, որի նպատակն էր հայ մանուկներից պատրաստել իրանաեվրոպական առևտորի միջնորդ վաճառականներ և, վերջին հաշվով, կաթոլիկության մեջ ներգրավել հայ մատաղ սերմոնին: Սակայն իրենց իսկ միսիոներների խոստովանությամբ, այս դպրոցը չի ունեցել առանձին հաջողություն, որովհետև գաղթօջախի բնակչության մեծ նասք, որը համար պայցար էր մղում իր ազգային-կրոնական ինքնուրույնությունը պահպանելու համար, խուսափել է երեխաներին ուսման տալ միսիոների դպրոցում: Դետազայում 1710 թ. Նոր Զուղայում բացվում են ևս երկու նոր դպրոցներ:

Մեմնափրկյան վանքի առաջնորդ Մովսես Զուղայեցին (1706-1724) քացել է նրկու դպրոցներ, մեկը Մուրադենց սուլռ Դակորի եկեղեցում, իսկ մյուսը սուլռ Ստեփաննոս եկեղեցում:

1833 թ. ծագումով ջուղայեցի մաղրասաբնակ Երևանի վաճառական Գրիգոր Սամյանը 20 հազար ռուփի է կտակում Նոր Զու-

դայում դպրոց քաց ամենու համար: Սակայն նյութական դժվարությունների պատճառով այն երկար կյանք չի ունեցել և 1837 թ. փակվել է: Ի դեպ, այդ դպրոցում երկու տարի դասավանդել է Մխրուա Թաղիայյանը:

1843 թ. կալկարարներակ Դարություն Արգարյանի միջոցներով Նոր Զուղայում քացվում է «Դայլյան հայրենասիրական դպրոց», որը գործել է 40 տարի: Խսկ 1853 թ. միանգամից քացվել են երկու դպրոցներ, որոնցից մեկը ծագումով ջուղայնի, Բարձրվայում թնակվող ջուղանը Մարիամ Դարությունյանի և Թագուհի Մանուկյանի, իսկ մյուսը՝ դարձյալ Զուղայնի, ճակայում թնակվող Մարգար Սուքիայյանի միջոցներով:

Վերոհիշյալ դպրոցներում ուսումնառությունը եղել է ծրի, գրենական պիտույքները ևս աշակերտներին տրվում էին անվճար նվիրատու-հիմնադիրների հաշվին:

Մի խոսքով XIX դարի կեսերին, շնորհիվ աշխարհի տարբեր ժագերում ապրող ջուղայնի հայրենասեր-մեկենասների նվիրատվությունների, դպրոցական գործը Նոր Զուղայում սկսում է կենդանության նշաններ դրսերել:

1845 թ. Նոր Զուղայում քացվել է գաղրօջախում առաջին իգական կամ օրիորդաց դպրոցը: Այն կառուցված էր Կատարինյան վանքին կից, ճակացի հայտնի վաճառական Մանուկ Յորդանանյանի նյութական աջակցությամբ: Դետագայում այն միացվեց տղաների դպրոցների հետ և կազմվեց կրթական մեկ հաստատություն՝ «Նոր Զուղայի Ազգային երկսեռ դպրոցներ» անունով:

1880 թ. ճակայից, Քիրմայից և Շնորհաստանից հանգանակած միջոցներով Նոր Զուղայում կառուցվում է դպրոցական մի խոշոր շենք և 1883 թ. այնտեղ կենտրոնացվում տեղի մանր երեք դպրոցներ անվանելով այն «Ազգային կենտրոնական դպրոց»: 1901-1905 թթ. մուկվարնակ Գևորգ Զանանյանցի կտակով Նոր Զուղայում կառուցվում է մանկապարտեզի և միջնակարգ դպրոցի երկիրկանի շենք, ուր և տեղավորվում է «Ազգային կենտրո-

նական դպրոցը»: Նոր Զուղայում դպրոցներ են ունեցել նաև հայ կարուղիկները և հայ բողոքականները:

Ողջ XX դարի ընթացքում մերը վայրէջքներով, մերը վերելք-ներով, դպրոցական-լուսավորական հիմնարկները անխափան գործել են Նոր Զուղայում: Դարավերջին 90-ական թվականներին, Նոր Զուղայի հայոց դպրոցների աշակերտության թիվը եղել է շուրջ 1400:

Նոր Զուղան հանդիսացել է նաև հայ գրատպության ազգի ընկնող կենտրոններից մեկը:

Իւչպես հայտնի է, հայ իրականության մեջ գրատպությունը ևս ինքնանպատակ չէր: Այն ուներ ազգային-քաղաքական երանգ և օալիս էր նպաստելու հայ ժողովրդի ինքնագիտակցության վերելքին: Միանգանայն ակներև է, որ գրատպությունը արտահայտում էր նաև հայ ժողովրդի վերելք ապրող ազատագրական զգուշումները և արտացոլում օտար լուծը բորափելու նրա քաղաքական իղձը:

Դեռևս XVI դարի վերջերին Յին Զուղայի վաճառականների նյութական օժանդակությանը նվյուպական մի շարք քաղաքներում սկսվում է գրատպություն: Մարսելում, օրինակ, Յովիաննես Տերզնցին հրատարակում է մի շարք գրքեր:

Յետագայում Նոր Զուղան դասնում է հայ իին տպագրության աչքի ընկնող օջախներից մեկը: Ս. Ամենափրկիչ վանքի առաջնորդ Խաչատուր Կեսարացու ջանքերով այնտեղ 1636 թ. իիմն վում է ինքնաշեն մի տպարան կամ «գործարան տպագրութեան», որն առաջինն էր ոչ միայն իրանում, այլև ողջ Միջին Արևելքում: Տավերնիեի վկայությամբ, այդ տպարանի տպագրական գործիքների ստեղծնան ուղղությամբ մեծ լումա է ունեցել նաղաշ-քաշի Յակոբը անդամնը: Այդ ինքնաշեն տպարանում, որի տառերը ձուլել էր ինքը Վարդապետը, 1638 թ. հրատարակվում է առաջին գիրքը «Սաղմոս ի Պավիլք» վերնագրով: Այնուհետև 1641 թ. Կեսարացին միանգանմից հրատարակում է երկու գիրք՝ «Յարանց վարքը» և «Էսորիդատետը»: «Յարանց վարքի» հի-

